




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

215
3-30

215	198
30-303600540463	
405460660625	
25/1	364
14/1	38

обозначенного здесь срока

[illegible]



ԱՄԵՆԱՄԵՆԱՄԵՆ

ՀԱՄԵՆԱՄԵՆԱՄԵՆ

ՅԵՍԱՐՈՍԼԱՎՍԻ

ՀԱՄԵՆԱՄԵՆԱՄԵՆ



Handwritten signature

v

ՅԵՄ. ՅԱՐՈՍԼԱՎՍԿԻՅ

222
215
30-30

ԱՍՏՎԱԾԱԶՈՒՆՉԸ

ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ՅԵՎ ՎՈՉ-ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ
ՀԱՄԱՐ



867
2718

I Մ Ա Ս


ԱՇԽԱՐՀԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

A
5230

ԹԱՐԳՄ. ~~ՅԵ. ՅԱՐՈՍԼԱՎ~~ ՅԵՎ Ա. ԱԹԱՅԱՆ




Հրատարակչությունը: Հրատարակչությունը



25 x 16

1327



Ռուսաստանի ռազմամի-
լիոն պրոլետարիատին յեւ
գյուղացիությանն եւ նվիրում
սիրով այս գիրքը:

Մի՛ միտ ե դեկավարի ինձ. աւ-
խասավորության լիակատար ազա-
տագրության նախապահին կանգ-
նած բոլոր խոչընդոտները կործա-
նելու անհրաժեշտությունը:

Յեմ. Յարուվազսկի

11

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

ՀԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը յես դեռ հեղափոխությունից առաջ եյի ուզում գրել: Բանվորների և գյուղացիների շրջանում կոմունիզմի գաղափարները քարոզելիս յես տեսնում եյի, վոր գյուղացին ու բանվորը չեն կարողանում ուղիղ հասկանալ կոմունիզմի ուսմունքը, վորովհետև այդ բանում խանգարում է նրանց գիտակցությունը մթնեցնող կրոնական թույնը: Այդ կրոնական թույնը սրակվում և դեռ մանկությունից, — յերբ յերեխան անկարող է կռվել աշխարհի մասին յեղած այն սուտ և անմիտ հասկացողությունների դեմ, վոր նրա գլուխն են լցնում տգետ դաստիարակները:

Իսկ մինչև հեղափոխությունը դրությունն այնպես էր, վոր տանը և դպրոցում մենք բոլորս ել կրոնական մշակման եյինք յենթարկվում. մենք դեռ վոչինչ չեյինք իմանում աշխարհի մասին, չգիտեյինք վճիռն է չարը, վճիռն է բարին, մենք անտեղյակ եյինք մեր յերկրի որենքներին և չգիտեյինք ո՞վ է ստեղծում և ո՞ւմ ոգտին և հնարում այդ որենքները. բայց մեր գլուխը համառ կերպով մխում եին այն միտքը թե յերկնքում կա մի վերին դատավոր, վերին տեսուչ, վերին եակ, վոր միլիոնավոր ծառաներ (սպասավորներ) — սուրբ հրեշտակներ և դևեր ունի: Յեվ մանկությունից մեզ սովորեցրել եին, վոր այդ վերին եյակի հրամանով և ստեղծված ամբողջ աշխարհը:

Այդ ուսմունքի հիմքը տարբեր հավատքների պատկանող քրիստոնյաների և հրեյաների համար հանդիսանում է աստվածաշունչը: Յեվ նույնիսկ մահմեդականների դուրանն իր ուսմունքի իննը տասներորդական մասը վերցրել է նույն այդ աստվածաշնչից, վորովհետև Մուհամմեդը համարում էր վոր ամենածառայիտ հավատը հրեյա հովիվ Աբրահամինն էր, սակայն մարդիկ հետագայում աղավաղել, փշացրել են այդ հավատը, իսկ ինքը Մուհամմեդը յեկել է վոր նորից վերականգնե այն: Յեվ ահա գրեթե աշխարհի կեսը մանկությունից կրթվում է աստվածաշնչի առականերով: Յեվ վոչ միայն աշխարհի ստեղծագործությունը, այլ և մարդկության պատմության բոլոր հետագա անցքերը տերտերները բացատրում են, հենվելով աստվածաշնչի վրա: Աստվածաշնչից են հանում նրանք նաև բարոյականության և բարոյագիտության որենքները:

Տերտերները համոզում եյին և այժմ ել համոզում են մեզ, թե աստվածաշունչը սուրբ գիրք է, թե նա մի հայտնություն է, վոր աստված տվել է մարդկանց: Բայց յերբ մենք ավելի ուշա-

դրությամբ և մտախելից ուսումնասիրում ենք այդ գիրքը, յերբ
բաժանականացա՞մ ուսումնասիրում և հրեյաների պատմությունը,
վորոնց լեզվով գրված և այդ գիրքը, պարզվում և, վոր տասվա-
ծաշունչը ամենատարբեր հորինվածքների մի ժողովածույն, վոր
կազմված և բազմաթիվ գրողների, հեղինակների գործերից: Նրա
մեջ հավաքված են շատ հեքյաթներ և ավանդություններ, վոր
կարող եր հանդիպել ամեն մի խաշնարած, կիսավայրենի ժողո-
վրդի մեջ:

Նրա մեջ հավաքված են պատմվածքներ հրեյական իրական
պատմությունից, բայց դարերի ընթացքում այդ պատմվածք-
ները բերեն—բերան են անցել, արտագրվել են սակավ գրագետ
գրողների ձեռքով, լրացրվել են ավելի ուշ ժամանակի հավե-
լումներով, հաճախ այնպիսի հնարովի հավելումներով, վոր դժվար
և ջոկել իսկականը հնարովիից: Աստվածաշնչի մեջ կան և՛ ուղիմա-
շունչ յերգեր, և՛ քնքուշ սիրային տաղեր, և՛ վեպեր, ինչպես Սողո-
մոնի «Յերգ Յերգոցը», և՛ բնության նկարագրություններ, և
տարբեր ժամանակների որենքների հավաքածուներ, տոհմագրեր
և տարեգրեր, ծեսերի նկարագրություններ և տապալմաների
ժողովածուներ, վեպեր և վիպակներ, առակներ, խորհրդածու-
թյուններ անցյալի և ապագայի մասին, համակներ և որհներգ-
ներ: Յեւ չգիտենք ինչո՞ւ այս ամենը սուրբ գիրք և կոչվում:
Սակայն ինչո՞ւ:

Իհարկե, ամեն մի ժողովուրդ սուրբ և անվանում այն,
ինչ վոր հնության, վաղեմության կնիքն է կրում: Հրեյական
աստվածաշունչը շատ հին և, բայց չե՞ վոր հենց այդպիսի և ա-
վելի հին ու բոլորովին նման ձևով կազմված, գրված գրքեր
ունեն և՛ ուրիշ ժողովուրդներ, նրանց գրքերի մեջ ել կան նման
պատմություններ, աշխարհի ստեղծագործություն և սուրբ յեր-
գեր և այլն: Յեւ իհարկե մի վորեւ հնդիկ այնպես և մտածում
թե միայն նրա գիրքը, ուր ժողոված են Բուդդհայի, Բրահմայի,
Շիվայի, Բողիստովայի և ուրիշ աստվածների պատմություն-
ներն, այդ գիրքն է սուրբ ուսմունքի աղբյուր և շտեմարան:

Յերբ մարդն առաջին անգամ կրակ հանել կարողացավ,
յիբեի այդ նրան հրաշք թվաց: Կրակը տաքացրից նրան, կրակը
պաշտպանեց նրան վայրի գաղաններից և ազատեց մութ գիշերի
սարսափներից անտառում, քարայրերում: Յեւ իր ժամանակին
մարդը կարողանում եր բավարարվել և՛ սովորական մարխով՝ իր
խղճով քնակարանը լուսավորելու համար և կամ վորեւ և՛ կավե
հրազով, իսկ հիմա նույնիսկ նավթի լապտերները չեն կարող
բավարարել ամեն գյուղացու, նա ուզում է և՛ էլեկտրականություն
ունենալ: Միլիոնավոր մարդկանց ուղեղը մինչև որս ել նախնա-
կան մարխով և լուսավորված: Այդ նախնական մարխը մխում է
ծխակալում և խափանում նրա տեսողությունից քիչ թե շատ
հեռու տարածությունները: Աստվածաշունչն ու նրա ուսմունքը
վարագործում են բանվորի և գյուղացու գիտակցության առաջ

խակական աշխարհի հեռուներն ու լայները: Առաջ չի տանում նա, այլ դեպի անցյալն և կանչում, դեպի վայրենի, անցած-գնացած նախնական կացութիւնը; սարսեցնում և ամենակարող Յեհովայի ահարկու կամքով, այն Յեհովայի, վորն այնուամենայնիւ անուժ և մարդուն հեռու պահել մեղքից և վոճրագործութիւնից: Մարդու կամքն և կաշկանդում աստվածաշունչը ամենագետ և ամենազոտ աստծու կերպարանքով, առանց վորի կամքի մարդու մազն իսկ չի կարող ընկնել և վորն անուժ և իր իսկ ստեղծած դեի դեմ: Որորոցից մինչև գերեզման քրիստոնեյական, հրեյական, մահմեդական և այլ քահանաները մարդու կյանքը կապտտում են կախարդական ծեսերով, խորհրդավոր գործողութիւններով և սարսափեցնում են նրա միտքը ահեղ դատաստանի և հավիտենական դժոխքի պատկերներով, վորոնք վորպես պատիժ ծառանալու յեն մարդու առաջ, յեթե նա գեթ փոքր ինչ շեղվի այն անհեթեթ վայրենի պահանջներից, վոր առաջադրվում են մեզ կրօնի կողմից:

Կրօնական վոգով դաստիարակված մարդը անընդունակ և դառնում աշխարհը վերափոխելու: Կրօնը խոնարհութիւնն և սովորեցնում, կրօնը սպանում և մտքի հանդգնութիւնը, խեղդում և վորոնող միտքը. նա պահանջում և, վոր մարդկային վոգին խոնարհվի աստվածային կամքի առջև: Հազարամյա ստրկութիւնը սրբագործվել և կրօնի անուշով, մեծագույն վոճրագործութիւնները կատարվել են հանուն աստծու: Աշխարհումս կատարված մեծագույն չարագործների ուսուցիչն ու պաշտելի դիրքը աստվածաշունչն և յեղել: Աստծու անուշով, կրօնի անուշով տասնյակ միլիոններով մարդիկ են սպանվել:

Կրօնի քողի առկ են կատարվել տիրող դասակարգերի, թագավորների, իշխանների հանցագործութիւնները, այնպես, ինչպես հիմա յեկ կրօնն իր հովանու տակ և վերցնում կապիտալիստների ու կալվածատերերի հանցագործութիւններն ամբողջ աշխարհում: Կրօնը յեղել և այն մտրակը, սանձը, խորամանկահյուս ցանցը, վորը խորին ստրկութեան մեջ և պահել ու դեռ պահում և աշխարհիս ժողովուրդներին:

Կյանքը յերկրի վրա յերբեք անփոփոխ չի մնում, և ճշմարիտ են մի հույն փիլիսոփայի խոսքերը թե՛ «ամեն ինչ հոսում և, ամեն ինչ փոխվում է»: Փոխվում և յերկրի մակերևույթը, փոխվում և կլիման, փոխվում են կենդանիներն ու բույսերը, փոխվում են մարդիկ, փոխվում են ասլրուստի միջոց գտնելու հնարքները — նախնական վայրենի վորսորդութիւնից դեպի խաշնարածութիւն, խաշնարածութիւնից — յերկրագործութիւն, յերկրագործութիւնից — արվեստներ, արվեստներից — արդյունաբերութիւն, հասարակ քաղից ու փայտից դեպի քարե, բրոնզե և յերկաթե դէնք ու արտադրութեան միջոցներ, արտադրութեան պարզ գործիքներից դեպի բարդ մեքենաներ, շոգե և ելեքտրաչարմեր: Փոխվում և շեղուն, փոխվում են բարքերը, փոխվում և

հասարակության պետական կազմակերպությունը. նախնական վայրենի հոտից, վորսորդության խմբից, նախնական տոհմային համայնքից—դեպի ցեղային միությունները, ֆեոդալական պետությունը, բուրժուական մոնարխիան, դեմոկրատիկ հանրապետությունը, դեպի խորհուրդների հանրապետությունը:

«Ամեն ինչ փոխվում է, ամեն ինչ հոսում»: Իսկ շահագործողները, վոր հնուց արդեն կրոնը զենք են դարձրել մասսաների վրա իշխելու համար, աշխատում են իրենց կրոնական ուսմունքը նոր ժամանակներին հարմարեցնել: Անցածը ամուր ե կառչում ապրող աշխատավոր մասսաների գիտակցությունից, վորովհետև շահագործողներն ու նրանց քուլմերը, ամբողջ աշխարհի հոգևորականությունը, շատ լավ գիտեն, վոր կրոնի գործությունը (իշխանությունը) դա ուժեղ թույն է, նրանք գիտեն, վոր կրոնը աֆիոն է ժողովրդի համար, ինչպես ասել ե կոմունիզմի ուսուցիչ Կարլ Մարքսը: Դանդաղ և հսկայական դժվարությամբ են ազատվում ժողովրդի զանգվածներն այդ թույնից, վորովհետև մասսաների մեջ դեռ տիրում են թե հին ձևերը անտեսության, թե հին արտադրությունը: Անիծյալ, մաշվող և վերացող հինը ամուր ե կառչում կենդանուց, առաջ ընթացողից և քաշում ե նրան դեպի հին ստրկությունը, վորովհետև շահագործողները գիտեն, վոր այն ժամին, յերբ կխորտակվի հավատը դեպի աստվածները, յերբ կխորտակվի հավատը դեպի այսպես կոչված «սուրբ գիրքը», այդ պահուն կհնչի և վերջին շահագործողի վերջին ժամը, այդ պահուն կհասնի նրա կործանի ուր: Իշխող դասակարգերը շատ լավ են հասկանում այդ բանը: Իրարումեջ և իրանց շրջանում նրանք յերբեմն նոյնիսկ ազատամտություն ել են թույլ տալիս, սակայն ժողովրդի համար նրանք անհրաժեշտ են համարում պահել կրոնը, ձեռքի տակ ունենալ աստծուն՝ ժողովրդին սանձահարելու համար:

Նրանց փիլիսոփաներն, ինչպես Վոլտերը, յերբեմն ծաղրի առարկա դարձնելով հավատն առ աստված՝ ասում են. «Ինչ վերաբերում ե մեզ, մենք առանց աստված ել յուր կգնանք, իսկ դե ժողովրդին աստված հարկավոր ե իբրև մտրակ (ղամշի)»: «Եվ յեթե աստված չլիներ ել՝ այդ դեպքում նրան հարկավոր եր հնարել»: Յեվ միայն այն ժամանակ, յերբ առաջ յեկավ հեղափոխական մի նոր դասակարգ, վորը բաց և անում կյանքի բոլոր գաղտնիքները, վորը վիշրում ե ստրկության բոլոր շղթաները, ով ել վոր կոփած լինի այն, մի դասակարգ, վոր իրեն ազատելով՝ ազատում ե աշխատավորների վողջ աշխարհը, վորի շահը պահանջում ե աշխատավորների իսկական տիրապետություն ստեղծել. մի խոսքով՝ յերբ առաջ եկավ պրոլետարիատը, նա ցած գլորեց աստվածներին յերկնքից. նա չի ուղում իր հեռու հեռավոր մանկության հեքյաթները աշխարհի ըմբռնման ու բացատրության հիմք ընդունել: Նա կերտում ե աշխարհի և կյանքի նոր ըմբռնումն—գիտական ըմբռնումն: Աշխարհի այս

ըմբռնումն ամեն ինչ ստուգում ե, ամեն ինչ փորձում և ուսուցանում ե «վոչ միայն այն, թե ինչպես պիտի հասկանալ աշխարհը, այլև թե՝ ինչպես պիտի փոխել աշխարհը հանուն ամբողջ մարդկության բարիքի»:

Նույն ձևով, ինչպես պրոլետարիատն ե մտածում, սկսում են մտածել նաև գյուղացիության հետզհետե ավելի և ավելի ծավալվող զանգվածները, այն գյուղացիության, վորի ծոցից ե դուրս յեկել պրոլետարիատի նշանավոր մասը, այն գյուղացիության, վոր դարերով կեղեքվել ե և վորը մի վտառով կանգնած ե բանվորի, պրոլետարի շավղին, իսկ մյուս վտառով՝ սեփականատիրոջ: Կյանքը գյուղացուն ավելի և ավելի յե մոտեցնում պրոլետարիատին, վորի հետ միասին նա միաժամանակ կովում ե ցարերի, կայսրերի և կալվածատերերի տիրապետության դեմ: Գյուղացիական այս զանգվածը իր տնտեսությունը լավ հիմքերի վրա դնելու համար կարիք ե գգում նույնպես և՛ կրոնական թույնից ազատվելու, վորովհետև միայն այն ժամանակ, յերբ գյուղացիությունն իր տնտեսությունը գիտական հիմքերով կվարի, յերբ նա կդադարի իր հույսը աստվածների և սրբերի վրա դնել և նրանցից աղոթքներով, թափոփումներով, մաղթանքներով արև ու անձրև պաղատել, յերբ նա կհասկանա, վոր բնության բոլոր ուժերին կարելի յե հաղթել և յենթարկել վոչ թե կախարդության, շամանության և աղոթքների գորությամբ, այլ տեխնիկայի միջոցով, — միայն այն ժամանակ նա ձեռք-ձեռքի տված բանվոր դասակարգի հետ՝ կստեղծի այս յերկրի վրա մի նոր աշխարհ, ուր տեղ չեն ունենա այլևս վոչ սովը, վոչ կոփվը, վոչ վոճրագործությունը: Ահա թե ինչո՞ւ գյուղացին ել ուղիղ հասկացողություն պիտի ունենա աստվածաշնչի մասին:

Յես ուզում եմ ոգնել աստվածաշնչի մեջ յեղած խճճվածքները և մշուշայինը պարզաբանելու և մեկնելու գործին: Շատ շատերի ցամաք ե գալիս և դառն ե անաստվածների ճառերը լսել: Վորովհետև շատ-շատերի դարերով քնած միտքը դարթնել ե, բացվել են նրանց առջև նոր հեռուներ, ցանկություն կա շատ բան իմանալ, շուտ իմանալ: Իմ նպատակն ե ոգնել գիտության այդ ծարավներին, մատուցել նրանց պարզ հասկանալի ձևով այն, ինչ ձեռք ե բերել իսկական գիտությունը: Յեմ յեթե յես իմ գիրքը սկսում եմ աշխարհի ստեղծագործության հարցերից, դա բնավ նրա համար չեմ անում, վոր դրանից ե սկսում աստվածաշունչը. յես դա անում եմ լոկ նրա համար, վոր ամեն անգամ յերբ շոշափում եմ հավատի, կրոնի խնդիրները, բանվոր և գյուղացի ունկնդիրները անպայման հարց են տալիս. — «վո՞րտեղից ե առաջ յեկել աշխարհը, ինչի՞ց ե առաջ յեկել մարդը»: Նրանց մտքովն ել չի անցնում հարցնել՝ «վո՞րտեղից ե առաջ յեկել աստվածը, վորին իրենք հավատում են»: Նրանք բավարարվում են այն մտքով, վոր աստված միշտ ել գոյություն ե ունեցել. իսկ մենք

այս գրքի մի ծայրից մինչև մյուս ծայրը կտեսնենք, վոր մարդն
իր աստծուն, իր բոլոր աստվածներին ու աստվածուհիներին
ինքն և ստեղծել իր կերպարանքով ու նմանությամբ, իր կյանքի
կերպարանքով ու նմանությամբ:

ԻՆՉ ԲԱՆ Ե Ա Ս Տ Վ Ա Ծ Ա Շ Ո Ի Ն Չ Ը

Յեթե հրեյա և քրիստոնյա աստվածաբաններին հարց ես տալիս թե ի՞նչ բան է աստվածաշունչը, նրանք պատասխանում են. դա սուրբ և աստվածային գիրք է, վոր հորինել է յեթե վոչ ինքն աստվածը, ապա նրա հավատարմատարը, Մովսեսը, վորին նա թելադրել է այդ գիրքը Մինայի լեռան վրա:

Մի հավատացյալ աղանդավոր իմ այս գրքի առաջին գլխի առթիվ շատ սրտոտ ու չարացած նամակ եր ուղարկել ինձ, վորտեղ նա գրում է. «այդ գրքերը (աստվածաշունչը) գրել է ինքն աստված, այդ այն գրքերն են, վոր գոյություն են ունեցել Բաբելոնի գերությունից առաջ»: Տեսեք, ուրեմն, ինչպես է յեղել բանք տերտերներից վոմանց կարծիքով: Բայց յերբ մենք անցնում ենք ուրիշ ժողովուրդներին, տեսնում ենք, վոր նախ և առաջ հրեյական աստվածաշունչը («Թորա»-ն) բոլորովին ել ամենահին գիրքը չէ, վոր ուրիշ ժողովուրդներ հրեյական աստվածաշունչից ել ավելին հին գրավոր հիշատակարաններ ու գրքեր ունեն: Յերկրորդ՝ աստվածաշունչը կազմված է **սարքեր ժամանակներում** և ներկայացնում է թույլ և արհեստական կերպով իրար կապած չափազանց այլազան գրվածքների մի ժողովածու:

Տերտերներն ամենից շատ ճիգ ու ջանք են թափում ապացուցելու, վոր այդ «Հնգամատյանը» Մովսեսն ինքն գրել ասածու բերնից:

Մինչդեռ «Հնգամատյանի» մեջ դրա մասին վնչ մի խոսք և հիշատակություն չկա: Յերկրորդ Որինաց գրքում (XXXIV, 5-6) նկարագրված է Մովսիսի մահն ու թաղումը: Յեթե իրոք, Մովսեսն ապրած, գոյություն ունեցած ու աստվածաշունչը գրած լիներ, վոչ մի կերպ նա չեր կարող իր սեփական մահն ու իր թաղումը նկարագրել: Դա միևնույնը կլիներ, յեթե մենք հավատայինք, վոր Մովսեսն իր սեփական դադադի հետևից է գնացել: Նկարագրությունը վերջանում է՝ «և մինչև որս վոչ վոք չգիտե նրա թաղման տեղը» խոսքերով: Այսպես կարող եր գրել մենակ նա, ով գրելիս է յեղել Մովսիսի մահվան մասին: Յեվ կամ թե, որինակ, Թվերի գրքում (XII, 3) մենք կարդում ենք. «Մովսեսն աշխարհիս մարդկանցից ամենախոնարհն եր»:— Միթե Մովսեսն ինքն իր մասին այսպիսի բան կարճ եր գրել: «Ծննդոց գրքում (XXXVI,

31) գրված է. «Ահա թագավորները, վոր իշխել են Յեղեմի յերկրում նախ քան թագավորների թագավորությունը Իսրայելի վորդիների մօտ»: Պարզ է, վոր սա գրված է **Թագավորներից հետո**—այսինքն Մովսիսի ապրելուց ու մեռնելուց շատ ավելի հետո: Այս և ուրիշ որինակներ (իսկ այդպիսիները շատ շատ են) ասում են, վոր Հնգամասնյանը գրված է վնչ թե Մովսիսի ձեռքով, այլ Մովսիսից շատ ավելի հետո:

Նույնը կարելի չէ ասել և շատ ուրիշ գրքերի մասին, վոր վերագրում են այս կամ այն հեղինակին:

Այդ գրքերը գրված են յեղի հրեյական և արամեյական լեզուներով: Այդ լեզուներն առաջ այն առանձնահատկությունն են ունեցել, վոր խոսքերը գրվելիս են յեղի առանց ձայնավորների: Որինակ. գրված է յերկու տառ—կր: Ամեն ինչ կախված է նրանից թե ինչ ձայնավորներ կավելացնենք այդ յերկու տառին, այդպիսով մենք տարբեր բառեր կստանանք—կար, կոր, կեր, կուր, կիր և այլն: Ուստի այդ լեզվից թարգմանելը շատ գժվար է յեղի: Յեվ միայն Յեզդերից հազար տարի յետո, այսինքն Ք. ծ. հինգ հարյուր տարի հետո հրեյական այբուբենի մեջ ձայնավոր տառեր մտցրին մասսորիտները: Ի հարկե, կասկած չկա, վոր այդ գրքի թարգմանության ժամանակ հազարավոր սխալներ են արվել: Մի առթիվ Ամերիկայում հատուկ աստվածաբանական հանձնաժողով եր կազմվել աստվածաշունչերի տարբեր տեկստերը (սկզբնական որինակները) ստուգելու համար: 1879 թ. այդ հանձնաժողովի կազմած գիրքը լոյս տեսավ «Անգլա-ամերիկական ստուգումն աստվածաշնչի» վերտառությամբ: Դոկտոր Հովարդ Ողգուդը, Ռոչեստերի բապտիստական աստվածաբանական ճեմարանի հրեյից լեզվի պրոֆեսսորն ասում է, վոր Հին Ուխտի տեկստից մօտ 10 հազար տարբեր արտագրություններ գոյություն ունեն:

Ահա թե ինչ է աստվածաշունչը, վորի վրա են հիմնում իրենց կրոնական ուսմունքը հրեյական, քրիստոնեյական և այլ տերտերները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՍՏՎԱԾԸ ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՅ ԱՌԱՋ

«Սկզբում աստված ստեղծեց երկինքը և յերկիրը» (Ծննդոց Ա, 1): Այսպես և սկսվում «Ծննդոց» գիրքը, վոր գրված է «Յեւ-
քից», այսինքն հրեաների Յեզիպտոսից փախչելուց վոչ վաղ,
այսինքն մոտ 3000 տարի սրանից առաջ: Ուրեմն յեբրե և յեղեւ
աստվածաշնչի այդ «սկզբումը»: Աստվածաշնչում գրվածներին
հավատացողները աշխարհի գոյությունը նրա ստեղծագործու-
թյան որից մինչև այսօր 7430 տարի են հաշվում: Մի բոպե
մենք եւ հավատանք զբան: Բայց մարդու վորոնող, հարցասեր
միտքը դրանով չի կարող գոհանալ, բավարարվել: Յեթե
7430 տարի առաջ աստված սկսել է յերկինք ու գետին ստեղծել,
ապա ի՞նչ է յեղեւ մինչև այդ ժամանակը:

Աստվածաշնչի սինոդային (ոռւսերեն) հրատարակությունը
այս հարցին պատասխանում է. «Յեւ յերկիրն անձե եր ու դա-
տարկ և խավար եր փռված անդունդի վրա և աստծու հոգին
շրջում եր ջրերի վրա» (Ծննդ. Ա, 2):

Գոյություն ունեն աստվածաշնչի շատ թարգմանություններ
սկզբնական հին հրեյական լեզվից: Այդ թարգմանություններն
իրարից շատ են տարբերվում: Վերջերս մի տասնյակ աստ-
վածաբան պրոֆեսորներ՝ պրոֆեսոր Կառլ Չիլիսավորությամբ
այդ թարգմանությունների ստուգումն են ին կատարել: Յեւ ահա
այդ ստուգումից և հրեյական բնագրին համեմատելուց հետո
պարզվել է, վոր աստվածաշնչի այդ տեղը այսպես պիտի կար-
դալ. «Իսկ յերկիրը դատարկ եր և ամայի (հրեյերեն՝ տոգու,
վազորու), և խավարը կախված եր ովկիանոսի վրա, և աստծու
հոգին շրջում եր ջրերի վրա»: Իսկ «տոգու- վազորու» բառերի
ավելի ճշգրիտ թարգմանությունը մեզ հետեյալ պատկերացումն է
տալիս յերկրի մասին. «յեւ յերկիրը սկզբնական ջրային հար-
թություն եր»: Ուրեմն սկզբնական ջրային հարթություն է յեղեւ,
իսկ այդ հարթության վրա շրջել է Եւոհիմ աստծու շունչը, հոգին
(հետապնդում մենք կտեսնենք, վոր այդ Եւոհիմը մեկն եր այն
ժամանակվա բազմաթիվ աստվածներից):

Ուրեմն վորտեղ է շրջելիս յեղեւ Եւոհիմի այդ հոգին կա
աստծու հոգին: Նա շրջելիս է յեղեւ այն խավարի մեջ, վոր կախմ
ված է յեղեւ յերկրի և անդնդի վրա: Այսինքն, պատկերն այնպես է
յեղեւ, ինչպես այդ նկարագրում է յերգիծական պատմությունը
աշխարքի ստեղծագործության մասի—միջումն եւ անդունդ, իր
ափերումն եւ դատարկ: Իսկ այդ պարապության, դատարկու-
թյան, մեր մոլորակի սկզբնական (սկզբնածին) ծովի վրա շրջելիս

ե յեղել աստծու հոգին (չի՞ ել ձանձրացել այդ հոգին այդպիսի դատարկ դբադմունքից):

Յեթե աշխարքի ստեղծագործության սկիզբը 7430 տարի սրանից առաջ ե կատարվել, ապա ինչ ե արել Ելոհիմ աստծու այդ հոգին մինչև այդ սկիզբը: Քանի՞ տարի, քանի՞ հազար տարի նա շրջել ե անդնդի վրա: Վորտեղից յեկավ այդ աստծու հոգին: Վորտեղից յեկավ ինքը, աստվածաշնչի աստվածը:

Տերտերները շատ են սիրում մեղ անաստվածներին հարց տալ՝ թե ինչից ե առաջ յեկել աշխարքը, ինչից ե առաջ յեկել նյութը, ինչն ե ծնել շարժումը: Դրանք շատ լուրջ ե կարևոր հարցեր են, վորոնց պատասխանը մենք, անաստվածներս, կտանք: Սակայն տերտերները բնավ չեն ել սիրում, յերբ մենք պատասխանում ենք, թե նյութը միշտ ել գոյություն ե ունեցել: Միևնույն ժամանակ նրանք հնարավոր են համարում մեղ հիմարացնել, ձեռ առնել իրենց հեքյաթով, վոր իբր թե գոյություն ե ունեցել մի ինչ վոր «հոգի» աստծու, հրեյական Ելոհիմ աստծու հոգի, կիսաքոչվոր, կիսախաշնարած, կիսավայրենի մարդու յերևակայության ստեղծած հալարավոր աստվածներից մեկը, վորը **միլիարդ** տարիներ շրջել ե դատարկ անդնդի վրա: Դե, դրանից հետո դատակ չե՞ արդյոք ինքը Ելոհիմի հոգին: Սապնի պղպջակ չե՞ արդյոք դա, վորը պայթում ե ու ցնդում, հենց վոր նրան ձեռք ես տալիս, հենց վոր գիտության լոյսն ես նրան մոտեցնում:

«Ծննդոց» գրքի հետագա պատմությունից աշխարհքի ստեղծագործության մասին՝ մենք կտեսնենք, թե հրեյաների Ելոհիմ աստվածը, աստվածորդի՝ Հիսուսի հայր-աստվածը անդնդի վրա թռչելու ձանձրալի դբադմունքին ե նվիրվել միայն նրա համար, վոր չի քնացել մի լավ բան դուրս կգա արդյոք, յեթե ինքը փոխի այդ կարգը, կամ ավելի ձիշտ, այդ անկարգությունը: Բայց այնուամենայնիվ, ինչպես աստվածաշունչն ե պատմում ե ինչպես տերտերներն են հավատացնում, 7430 տարի սրանից առաջ այդ աստված կոչվածը հանկարծ խոսել ե սկսում (խոսք ե առնում): Մինչև այդ արդյոք նա մի խոսք ասել ե: Վոչ աստվածաշնչից, վոչ ել ուրիշ գրքերից այս հարցի պատասխանը չենք ստանում: Հազա վորտեղից հայտնի եղավ, թե ինչպես ե յեղիլ յերկիրը մինչև նրա ստեղծվելն ու սարքվելը: Ո՞վ ե տեսել, թե ինչպես ե շրջել աստծու հոգին աշխարքի վրա մինչև այդ աշխարքի ստեղծագործությունը: Ո՞վ ե լսել Ելոհիմ աստծու այդ առաջին խոսքերը: Պարզ չե՞ միթե վոր աստծու առաջին խոսքերն ել, այդ ամբողջ պատմությունն ել հնարած ե, սարքած ե: Տերտերները դրան պատասխանում են, աստվածաշունչն աստծու հայտնությունն ե, ինչ վոր գրված ե արտեղ, Մովսեսն ե դրել Մինայի լեռան վրա: Այս հարցի վրա մենք դեռ շատ անգամ կանգ կառնենք, Մինայի լեռն ել կբարձրանանք, կտեսնենք, ինչ եր ասում աշնտեղ Մովսեսը, քանի՞ սղագրուհի ունի նա, վոր կա-

ընդանար գրել Յեհովա (Յեհովան այդ ժամանակ գլխավոր աստվածն էր) աստծու պատմածները:

Իսկ մինչև այդ նաշենք թե ինչպես է աստված աշխարհի ստեղծագործությանը ձեռնամուխ լինում:

«Ծննդոց» գիրքը պատմում է. —

Յեւ աստված ասաց, լույս լինի, և լույս յեղավ:

Յեւ աստված տեսավ լույսը, վոր բարի չէ, և աստված բաժանեց լույսը խավարից: Յեւ աստված լույսը կոչեց ցերեկ և խավարը կոչեց գիշեր: Յեւ յեղավ իրիկուն և յեղավ առավոտ, և յեղավ որ առաջին:

Հավատացյալներ, ձեր մտքովը չի անցել, վոր այդ հավիտենական աստվածը վոչնչից վոչինչ չի իմացել: Նա նույնիակ չի իմացել, վոր լույսը լավ է: Վերահղից նա պիտի իմանար, յերբ նա յերբեք լույս չեր տեսել: Ձեր մտքով չի անցել այս հարցը, ապա այդ ինչպես է, վոր միլիարդ, տրիլիոն, քվադրիլիոն տարիներ, հավիտենապես շրջել և այդ աստվածը խավարի մեջ, նրա մի խոսքով լույս է յեղել և նա այդ խոսքը այդքան ժամանակ չի ասել:

Յեւ դրանից հետո դուք ձեզ հավատացյալներ եք կոչում: Ձեք մտածե՛լ, թե ինչպես է յեղել դրությունն այդ աստծու կամ աստծու հոգու, վոր դատապարտված է յեղել հովիտյան շրջել խավարի և դատարկության մեջ, ինչքան ձանձրալի յե յեղել նրա կյանքը և ինչպես մեկն էլ չի յեղել, վոր նրա հետ մի-յերկու խոսք ասեր, խոսք լսեր: Կարելի յե պատկերացնել, թե ինչ անտանելի կյանք է յեղել դա—անվերջ քառսում ու խավարում ապրել—ինչքան դատարկ և անբովանդակ է յեղել այդ հրեյական աստծու կյանքը, վորը կատվի կույր ձագի նման խավարի մեջ այս ու այն կողմն է կպել, մինչև այն ժամանակը յերբ նա միայն յերկու խոսք է ասել՝ թող լինի լույս, և:

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԹՈՂ ԼՈՒՅՍ ԼԻՆԻ

Այսպիսով «Ծննդոց» գրքի առաջին գլխից իմանում ենք՝ վոր հրեյաների Ելոհիմ աստվածը միլիարդ տարիների բացարձակ անգործությունից հետո (հո չի կարելի գործ համարել այն, վոր այդ աստծու «հոգին» շարունակ շրջել է անդունդի վրա), խավարի և քառսի մեջ յավիտյան մնալուց հետո, հավիտյան մենակությունից ու ստիպված լուությունից հետո վերջապես 7430 տարի առաջ ձեռնամուխ է լինում աշխարքի ստեղծագործությանը։ Յեվ ստեղծագործության առաջին որը նա լույս է ստեղծում։ Նա ըստօրում է լույսը խավարից։ Լույսը ցերեկ է կոչում, խավարը՝ գիշեր։ Տեսնում է, վոր լույսը լավ է։

Միթե այսպիսի հեքյաթը կարող է բավարարել մի մարդու, վորի գլուխը լցված չէ տերտերների շողշուփով։

Մինչդեռ միլիոնավոր Թարդիկ հավատում են դրան, վորովհետև նրանք վոչինչ չգիտեն մեր մոլորակի—յերկրի ծագման և զարգացման մասին, վորի վրա մենք ապրում ենք, և վորը միշտ փոփոխվում է, ինչպես և բոլոր այլ աշխարհները։

Բայց դառնանք աստվածաշնչին։ Հավատանք անկարելիին, հավատանք, վոր 7430 տարի առաջ առաջին անգամ լույս է ստեղծվել հրեյաների աստված Ելոհիմի խոսքով։ Իսկ ի՞նչ լույս է յեղել դա։ Արևի՞, լուսնի։ Մի որևէ ուրիշ աստղի, ուրիշ արևի։ Ապա ուրեմն վոր լուսատվի։ Կամ թե՛ մի գուցե Ելոհիմ աստվածը խարժեղ է վառել և խարույկի լուսով է սկսել իր շինարար աշխատանքը։ Թե՛ ելեկտրական լապտեր և կամ գազ է վառել։ Ավանդ, հրեյական աստվածը վոչ ելեկտրականներ, վոչ ել գազի գործարաններ ունեն, վորովհետև այդ ամենը, ինչպես և իրան՝ հրեյաների աստված Ելոհիմին՝ մարդն է ստեղծել։

Ըստ աստվածաշնչի՝ արևը, լուսինը և աստղերը ստեղծագործության չորրորդ որն են ստեղծված։ Ուրեմն, դուրս է գալիս, վոր առաջին յերեք օրերը գիշերը և ցերեկը իրար հաջորդել են առանց արևի, լուսնի և մյուս աստղերի։ Իսկ ի՞նչ բան է ցերեկվա և գիշերվա իրար հաջորդելը։ Ինչի՞ց է առաջ գալիս դա։ Ամեն մի աշակերտ այսօր գիտե, վոր գիշերն ու ցերեկն իրար հաջորդում են այն պատճառով, վոր մեր գնդաձև մոլորակը—յերկիրը տարածության մեջ սլտույտ է կատարում իր առանցքի շուրջը։ Որվա ընթացքում, այսինքն 24 ժամվա մեջ, յերկիրը մի քիվ շրջան է կատարում իր առանցքի շուրջը։ Այդ 24 ժամվա մեջ յերկրագնդի ամեն մի մասը ժամանակավորապես ընկնում է արևի ճառագայթների տակ. յերբ յերկրագնդի մի կիսում գիշեր է, մյուսումնույն ժամանակ ցերեկ է, յերբ մի կիսագնդում առավոտ է, մյուսումն յերեկո յե։ Յեթե չլինեք արևը, վորի լուսով

լուսավորվում ե յերկիրը, լույս ել չեր լինի յերկրի վրա, ցերեկն ու գիշերն ել իրար չեյին հաջորդի, յերկիրն ել կփոխեր իր շարժումը: Այսպիսով, ուրեմն գիշերն ու ցերեկը յերկրի վրա իրար հաջորդում են միայն այն պատճառով, վոր կա արև, վորի շուրջը մի տարվա ընթացքում շրջան ե կատարում յերկիրը և իր հերթին 24 ժամվա մեջ լրիվ շրջան ե կատարում իր սեփական առանցքի շուրջը: Ուրեմն, դուրս ե գալիս, վոր անհեթեթություն ե, մութ ու բութ, տգետ մարդու, վայրենու մտքի հնճարք ե աստվածաշնչի հեքյաթը, թե աստված յերկրի վրա մի ինչ վոր լույս ե ստեղծել նախ քան յերկիրը արևով լուսավորվելը: Հեքյաթ ե, հնճարք, վոր իբր թե առաջին, յերկրորդ և յերրորդ որերը յերկիրը մի ինչ վոր ուրիշ միջոցով ե լուսավորվել, քան հետագա որերին:

Ապա ուրեմն ինչի՞ վրա ե հիմնված այս հեքյաթը: Ի՞նչն ե նրա աղբյուրը: Նրա աղբյուրն այն ե, վոր մարդիկ առաջնորում գիտության ներկայիս նվաճումները չունենալով, յերկիրն ու «յերկնային» տարածություններն ուսումնասիրած ու զննած չլինելով, հեռադիտականեր ու այլ աստղաբաշխական գործիքներ չունենալով՝ բոլորովին այլ կերպ եյին հասկանում, այլ կերպ եյին պատկերացնում յերկրի և յերկնքի կազմությունը: Յերկիրը նրանց անշարժ եր թվում (իսկ վոմանք կարծում եյին, վոր նա պառկած ե յերեք կետ-ձկների վրա, վոմանք ել կարծում եյին, վոր յերկիրը լող ե տալիս ջրային տարածության մեջ ճիշտ այնպես, ինչպես ձուռն յուղի մեջ): Յերկնքը նրանց թվում եր նուրբ ապակյա մի գմբեթ, վոր հենվում ե յերկրի ափերին: Իսկ լույսը յերկրի վրա նրանց կարծիքով անպայման արևից չալիտի ընկներ: Չե՞ վոր լույս ե լինում և՛ այն որերը, յերբ արևը չի յերևում: Չե՞ վոր առավոտները լույս ե լինում շատ ավելի առաջ, քան արևը յերևում ե հորիզոնի վրա:

Բայց հետագայում աշխարհքի կազմության մասին այս հասկացողությանը փոխարինեց ավելի ուղիղը, վորը սակայն ճշմարտությունից շատ հեռու յեր: Տարեցտարի հետևելով տարվա ժամանակների իրար հաջորդմանը, աստղերի շարժմանը՝ մարդիկ այնուամենայնիվ սկսեցին հասկանալ, վոր թե տարվա ժամանակները, թե ցերեկվա ու գիշերվա իրար հաջորդելը հատկապես վեց լուսատուներից ե կախված և ուրիշ վոչ մի բանից: Ուստի հետագայում ստեղծվեց լույսի ստեղծագործման մասին այն պատմությունը, վոր նկարագրված ե «Ծննդոց» գրքի առաջին գլխում:

14. Յեվ աստված ասաց. լուսավորներ թող լինեն յերկնքի հաստատության վրա, վոր ցերեկը գիշերից բաժանեն, և թող լինեն նրանք նշանների, և ժամանակների, և որերի, և տարիների համար:

15. Յեվ լուսավորներ թող լինեն յերկնքի հաստատության վրա, վոր լուսավորեն յերկիրը: Յեվ այդպես յեղավ:

16. Յեվ աստված յերկու մեծ լուսավորներ կերտեց, — մեծ լուսավորը՝ ցերեկին իշխելու համար, և փոքր լուսավորը՝ գիշերին իշխելու համար և՛ աստղերը:

17. Յեվ աստված նրանց դրավ յերկնքի հաստատության վրա, վոր յերկրի վրա լույս սփռեն:

18. Յեվ ցերեկի և գիշերի վրա իշխեն, և լույսը խավարից բաժանեն: Յեվ աստված տեսավ, վոր բարի յե:

19. Յեվ իրիկուն ու առավոտ յեղավ՝ շորրորդ օրը:

Այսպես են պատմում աստվածաշնչի հորինողները: Յեվ մինչև հեղափոխությունը տերտերները միլիոնավոր յերեխաների գլուխներն եյին մտցնում այս տխմար հեքյաթը աշխարհի ստեղծագործության մասին, կես միլիարդ մարդկանց ստիպում եյին հավատալ դրան: Ամենուրեք, ուր նրանց դեռ թույլ են տալիս մարդկանց դատարարակել, այնտեղ նրանք շարունակում են այս հեքյաթով մարդկանց գլուխները լցնել:

Այս պատմությունները մի բան են վկայում—վոր մարդն այդ ժամանակ դեռ շատ թույլ և թերի հասկացողության և ունեցել աշխարքի կազմության մասին: Հները կարծում եյին, յերկիրը տիեզերքի կենտրոնն է: Յեթե յերկիրը կենտրոնն է՝ ապա ուրեմն մնացած ամբողջ աշխարհը ստեղծված է յերկրին սպասավորելու համար: Վորպեսզի յերկրի վրա մութ չլինի, աստված կարծես կանթեղ և վառում, գիշերը՝ փոքրից, ցերեկը՝ մեծից: Այդ կանթեղները իբրեթե անշարժ ամրացած են «յերկնքի հաստատության վրա» այնպես, ինչպես լապտերներն են մեխերով պատին կպցրած:

Յեվ նորից հին հրեյական աստված Ելոհիմը մեխելով այդ կանթեղները, վոր նա իր գրպանից դուրս թափեց հենց այնպես, ինչպես ձեռնածուներն են իրենց գրպաններից դուրս թափում այնտեղ նախորոք սահած իրերը, — ելի նա տեսավ, վոր դա լավ է, տեսավ միայն անելուց յետո: Իսկ մինչև այդ չեր իմանում, լավ կլինի արդեոք դա, թե՞ վատ: Յեվ դա ամենադեռ և ամենախորդ աստվածն է: Իրոք, ինչքան խեղճ է այդ Ելոհիմը, յերկնքի հաստատության վրա սանդուղքներով, գամերով ու աստղերի կապոցով մագլցող և լուսավորները յերկնքի գմբեթին դամոզ այդ հրեաների աստվածը:

Ըստ աստվածաշնչի՝ ամենամեծ լուսավորն արևն է, վորը լուսավորում է մեր յերկիրը: Իսկ մենք հիմա գիտենք, վոր մեր արևը մեկն է միլիոնավոր ուրիշ արևների շարքում, վորոնք անհամեմատ ավելի վառ են և ավելի զորավոր: Մենք գիտենք, վոր Սիրիուս վառ աստղը, վորի լույսը 22 տարուց է հասնում յերկրին, 1,373,000 անգամ մեծ է արևից: Մենք գիտենք, որ մեր մոլորակ Յերկիրը իր արբանյակ Լուսնի և կենտրոն Արևի հետ միասին ավազի մի-մի փոքրիկ հատիկներ են հսկայական տարածության մեջ, վոր լեցուն է ուրիշ աշխարհներով, ուրիշ արևների:

յով: Իսկ մեղ ուզում են համատեղել մի բան, վորին համա-
տարիս են յեղել տգետ հովիվները, հրեյական և ոսորտաբարեկտեան
խաշնարածները:

Մեր մուրազի վրա մենք կյանքի նոր շրջան ենք ապրում,
եկեկտրոֆիկացիայի շրջան: Մարդը աստիճանաբար, հակայտեան
հիգիենով հասել է նրան, վոր հասկացել է բնության գաղտնիք-
ները, բառիս բուն իմաստով խլել է այդ գաղտնիքները բնու-
թյունից: Նա թեպետ և շատ քիչ հափով, բայց սովորել է արդեն
իրան յենթարկել բնության ուժերը: Նա թափանցել է յերկրի
խորքը և այդ խորքերից հանում է ածուխ, նավթ—արդյունք-
ներն այն հակայական անտառների, վորոնք այն ժամանակվա
յերկրի բնակիչների հետ միասին գետնի տակ են թաղվել: Նա
գիտե, վոր այդ խորքերում պահված է լույսն ու տաքությունն
արևի, վոր յերբեմն կուլ են տվել կենդանիներն ու բույսերը:
Այրելով նախորդ կյանքի այդ մնացորդները՝ նա տվորել է
դուրս հանել այդ մնացուկների մեջ թաղված, պարփակված
արեգակնային լույսի և ջերմության շարժիչ ուժը: Նա այդ ու-
ժըն ի մեջ է բերում թելերի և հոսանքների բարդ ցանցի մեջ:
Ու կառավարում է նրանց:

Ո՞վ է նա. մեծ գիտնական է, փիլիսոփա՞ յե, իմաստուն է:
Հասարակ բանվոր է նա: Յերեկվա ստրուկը: Դարերով նրան
կեղեքել են ստրկատերերը, խաշնարածները, Փեռղալները, կալ-
վածատերերն ու կապիտալիստները, նրան զրկել են գիտու-
թյունից: Բայց նա կարողացավ տիրանալ այդ գիտությանը: Նա
ստեղծող է և մեծագույնը հրաշագործներից: Դեռ նոր ծնված՝
նա միանգամից հսկա յե դառնում: Յերկնքի կայծակը նա տո-
նում փակում է եկեկտրականների յերկաթալարերի մեջ, և
շարժումը ջրերի, և շարժումը քամիների, վորոնց մեջ նույն
նյութի ուժն է պարփակված, նա կաշկանդում է պտուտակի մեջ
և լծակների, տուրբինների, անիվների ու շարժիչների պտույտ-
ներում: Յեվ խորը գիշերին, յերբ խավար է շուրջը, յերբ վոչ
արևը, վոչ լուսինը, վոչ աստղերը չեն լուսավորում մեր բնակա-
րանները, լույս է ստեղծում նա—պրոլետարիատը, բանվորը: Նա
մոտենում է լծակին, եկեկտրականի արձակիչին: Ներքնահարկե-
րում նրա վտառների տակ կաշկանդված գազանների նման վոռնում
են դինամո-մեքենաները, վորոնց ամեն մի պտուտակը, ամեն
մի լծակը նախորոք մտածված, ծրագրված, թվարկված է, վորոնց
ամեն մի շարժումը սկզբից հաշվի է առնված:

Հույս լինի,—ասում է պրոլետարիատը: Յեվ պտույտ է առա-
լիս լծակը, արձակիչը, շտեպսելը: Յեվ չորս կողմը հարյու-
րավոր վերստերի վրա լույս է կապում քաղաքներում ու
գյուղերում: Հանքափորն իր ստորերկրյա բնից իզուր պիտի
խնդրի յերկնային աստվածներին, վոր նրանք լուսավորեն
գետնահորերը, նրբանցքներն ու շտրիկները: Վոչ: Նա գիտե,
վոր անուժ են այդ աստվածները, վորովհետև չկան նրանք:

Յեւթիկոսյան յերկրագնդի բոլոր տերտերներն իրանց աստված-
ներից լույս պաղատեն,—այդ հրաշքը յերբեք չի լինիլ։ Վնաս-
քափոր բանվորն իր գետնահորում յոտենում ե հեռախոսի խո-
ղովակին, վոր իր նման մի բանվոր ե շինել, և տասնյակ, հար-
յուրավոր վերստեր հեռու գտնվող իր նման մի բանվորի հեա
խոսում ե։ Նա աղոթք չի առաքում, չի խոնարհվում, ծունկ
չոքում։ Նա պահանջում ե՝ լույս տուր։ Յեւթիկոսյան յերկրագնդի
պատասխանում ե—թող լույս լինի և՛ քո գետնահորում։ Յեւթիկոսյան
ակնթարթում ստորերկրյա խորքերում վառվում յեն փոքր և
մեծ արևները։ Ծովի հատակում նա կարող ե այդ արևները վա-
ռել և այդ արևներով տաքացնել։ Նա կարող ե կյանք տալ
բույսերին ու կենդանիներին, փոխարինել թուխսին ձկների վրա,
արևին՝ բույսերի և կենդանիների համար։ Նա յե շարժում յեր-
կաթուղիների գնացքներն ու զորավոր նավերն ու կայանոսների,
և՛ պողպատյա թեթև թռչուն այերոպլաններն ամպերում սու-
բացող, և՛ գութանները՝ դաշտերում, և՛ միլիոնավոր իլիկներ ու
դադգյահներ գործարաններում, նա յե վոր պողպատն ե ծակում,
կտրում, սղոցում, հալեցնում։ Բուժում ե կաղերին ու կույրե-
րին, ուսմատիկներին ու այլ հիվանդներին։

Վորքան խեղճ ե աստվածաշնչի Երեմիայի յերեկվա ստրուկ,
այսոր ազատագրված պրոլետարի առջև։

Յեւթիկոսյան ե ուր, յերբ ամենախուլ գյուղում իսկ ամեն մի
աշխատավոր լինելու յե հզոր ստեղծողն ու արարիչը այդ լույսի,
ճերմության, շարժումի, լինելու յե բուժիչ և շինարար։ Յեւթիկոսյան
այդ ուր այնքան ավելի շուտ կլինի, վորքան շուտ փոքր յե-
րեխաներն ու յերեխա հասակավորները կդադարեն հավատալ
աստվածաշնչի և տերտերների անմիտ հեքյաթներին։

Թող լույս լինի։

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՅԵՐԿՐԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՅԵՐԿՆՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Առաջին և չորրորդ որն աստվածաշնչի աստվածը լուսավորություն անցկացնելով և զբաղվում. յերկիրը լուսավորելու համար նա յերկնքի հաստատությունում արև, լուսին և աստղեր և դնում: Բայց առաջին որը, յերբ նա հայտնի չե թե ինչ լուսով և լուսավորել հավիտենական խավարը, վորի մեջ մինչև այդ ինքը մնում եր, այդ որը յերկիրը դեռ անձև և յեղել: Յեվ միայն հետևյալ որն Ելոհիմ աստվածն ելի մի քանի խոսք և ասում, և այդքանն արդեն բավական և լինում, վոր աշխարքի կազմակերպումը կարգի բերվի:

Աստվածաշնչի պատմելով իբրթե Ելոհիմն այդ որն այսպես և ասել.

6. Յեվ աստված ասաց. «Ջրերի մեջտեղը հաստատություն լինի, վոր ջրերը ջրերիցը բաժանեն: (Յեվ այնպես յեղավ):

Մարդ ուղղակի ապշում և՛ ի՞նչպիսի հեշտությամբ եր այդ արարածը լուծում աշխարքի կազմակերպմուն այդքան բարդ խնդիրները: Մի քանի խոսք ասաց, և այնպես ել յեղավ: Բայց ավելի ևս համառ կերպով նույնիսկ հավատացյալների գլխում հարցեր պիտի ծագեն. ի՞նչ կլինեն, վոր աստված ավելի շուտ կարողանար այդ մի քանի խոսքն ասել: Յեթե այդքան հեշտ եր միայն մեկ խոսքով այդ բանն անելը, ինչ՞ու Ելոհիմ աստվածը յերկիրը միանգամից չստեղծեց: Ո՞վ և լսել աստծու արտասանած խոսքերը, յերբ բացի այդ աստծուց ուրիշ վոչ վոք չի յեղել: Իհարկե աստվածաշունչը մեզ պատասխան չի տալ, թե ինչու յե այդպես յեղել, վորովհետև իրականության մեջ ամեն ինչ կատարվել և վոչ այն ձևով, ինչպես աստվածաշունչն և պատմում:

Սակայն նկատենք, վոր Ծննդոց գրքի առաջին գլխի 6-րդ տան համաձայն՝ աստված հրամանով, խոսքով և ստեղծում յերկինքը, իսկ 7-րդ և 8-րդ տներում նա նորից և զբաղվում այդ գործով, բայց այս անգամ դա անում և ըստ յերևույթին սեփական աշխատանքով:

7. Յեվ աստված շինեց հաստատությունը և բաժանեց հաստատության տակի ջրերը հաստատության վրա իշխող ջրերից: Յեվ այնպես յեղավ:

8. Յեվ աստված հաստատությունը կոչեց յերկինք, (Յեվ աստված տեսավ, վոր զա լավ և): Յեվ իրիկուն և առավոտ յեղավ, յերկրորդ որը:

Հաստատութիւն խոսքն այստեղ այնքան եւ ուղիղ չի թարգմանված, վորովհետեւ հրեյական «ռակիա» խոսքի ճիշտ թարգմանութիւնն է «հաստատ պատ» (Տես Հ. Կունովի գիրքը)։ Այդ ինչպե՞ս է, վոր մի տեղ, 6-րդ տան մեջ, աստված խոսքով է ստեղծում հաստատ, ամուր պատը, վոր հետո յերկինք է կոչում, իսկ ուրիշ տեղ, 7-րդ և 8-րդ տներում, նորից է ստեղծում նույն պատը, բայց այս անգամ վոչ թե խոսքով, հրամանով, այլ գործով, աշխատանքով։ Ըստ յերևույթին ամբողջ գաղտնիքը նրանումն է, վոր սկզբում կազմվել է առաջին պատմութիւնն, իսկ հետո մյուսը, վոր իբրեւ 6-րդ տուն ավելի ուշ է գրված աստվածաշնչի մեջ (տես Կունով, Կրօնի ծագումը, յեր. 95)։

Ի հարկե՞ այսպիսի պատմութիւններ կարող եյին ծագել այն ժողովուրդի երի մեջ, վորոնք յերկիրը պատկերացնում են մի հաստատուն բան, իբրեւ գմբեթ կամ յերկրի վրա կախված մի կտուր։ Հին ժամանակներում համարյա բոլորն եւ այդպե՞ս եյին պատկերացնում յերկինքը, ասինք հիմա եւ գիտենք միլիոնավոր մարդիկ, վորոնք կարծում են, թե իրանց գլխի վերեւում յերկինք է խրուստալե կտուրի նման, աստղերն ու ամպերը քայլում են յերկնքի յերեսին, կարծես ճանճեր լինեն, վոր պտտում են առաստաղի վրա, թե այնտեղ յերկնքում ապրում են իրանց աստվածներն ու հրեշտակները, թե այնտեղ են համբառնում, բարձրանում հոգիները, իսկ հաճախ նաեւ մարդկային ամբողջ դիակներ - ինչպե՞ս Յենոքինը, Յեղիայինը, Մովսէսինը, Բուդդայինը, Հիսուսինը և ուրիշներինը։ Իրանց դարգացման ցածր աստիճանում շատ ժողովուրդներ են ունեցել նման հասկացողութիւն յերկնքի մասին։

Այս հասկացողութիւնն սնդրադարձել է և լեզվի մեջ. յերկնային կամար, յերկնքի վրան և կոչվում յերկինքը շատ ժողովուրդների մեջ։ Յերկինքը համեմատում են տան, տաճարի, ապարանքի հետ։ Յերկինքը թվում է թե յցուն-կլոր ձև ունի, դա հիմք է տալիս, վորպեսզի շատ ժողովուրդներ յերկինքը մարդկային գանգի հետ համեմատեն։ Այսպե՞ս, որինակ, հնդկական մի պատմութիւն պնդում է, թե յերկինքը կերտված է Բրահմա աստծու գանգից, իսկ Նդդայի սկանդինավյան առասպելների համաձայն՝ յերկինքն առաջ է յեկել Իմերի գանգից։

Ուրիշ ժողովուրդներ յերկինքը սարի հետ են համեմատում։ Սլավյան «Тора» խոսքը նշանակում է՝ վեր, դեպի յերկինք։ «Անձեռ, անվոտ սարն և բարձրանում» («Без рук, без ног на гору дерется» — ծուխ. — ուսական մի հանելուկ է սա)։ «Переселиться в горная» — նշանակում է մեռնել, աստծու ծոցը գնալ։ Տուրայի նահանգում գյուղացիական պատմութիւններ կան, թե աշխարհի ծայրում, ուր յերկինքը յերկրին է խառնվում, կարելի չէ յերկրից ուղիղ յերկնքի կոր (ցցուն) մակերևույթի վրա բարձրանալ. այնտեղ տարող կանայք իրենց իրկներն ու կրկնակները ամպերի հետեն են պահում։ Այս պատճառով շատ

շատերը առաջ տա հելիս են յեղել իրանց կտրած յեղունակները
կամ այրելիս են յեղել, վորպեսզի մեռնելուց հետո հետ ստանան
յերկինք, այսինքն սարը մագլցելու համար: Հին հույների հա-
կացողությունով Ուիմպոսի գագաթին անմահ աստվածներ են
ապրելիս յեղել: Ուիմպոսը յերկնային կացարան է յեղել: Հոմե-
րոսը նրան մեծ յերկինք է կոչում: Սլավական մի հին պատմու-
թյուն ասում է, վոր աստված խրուստալե յերկինք է ստեղծել
յերկաթե սյուների վրա: Ֆինն ժողովրդական մի պատմվածքի մեջ
աստված հանդես է գալիս իբրև դարբին, մուրճով նա կտրում է
յերկնքի կամարը և այն զարդարում արևով, լուսնով ու աստղերով:
Հին մարդիկ, նրանց թվում և սլավոնները յերկինքը պատկերացնում
էին մի քանի հարկանի—յոթն հարկանի: Յեթներորդ յերկինք
ընկնելը—դրախտ ընկնելն է: Ուստի առաջ մարդկանց հետ հա-
ճախ սանդուխտներ ել են թաղելիս յեղել (վարք իշխան Կոն-
ստանտին Մուրոմսկու):

Իհարկե՝ ով իրական է համարում աստվածաշնչի պատ-
մածը աշխարքի ստեղծագործության մասին, շատ հեշտությամբ
կարող է սրանց նման ուրիշ հեքյաթներն ել իբրև իրականու-
թյուն ընդունել:

* * *

Սակայն ի՞նչ բան է յերկինքը: Յեթն նա կամար չէ, յեթն
նա յերկրի վրանը չէ, յեթն արևը, լուսինն ու աստղերն ամրա-
ցրված չեն յերկնքում, յեթն չի կարելի յերկինք համրառնալ: յե-
թն այնտեղ չկան աստվածներ ու հրեշտակներ՝ ապա ուրե՞նք
ի՞նչ է նա, ինչպե՞ս է նա կառուցված:

Նախ և առաջ գիտությունը, մարդկային հեաազոտությու-
նը վաղուց արդեն պարզել են, վոր յերկիրը տափակ չէ,
լավաշ չէ, այլ գնդաձև է: Յերկրի բոլորը մի քանի տասնյակ
վերստերի վրա ողային շապիկ է: Այն, ինչ վոր առաջ ամուր
յերկինք, յերկնքի հաստատություն եր թվում, այժմ մարդս հե-
տազոտել է. աերոպլաններն ամպերից ել վեր մի քանի վերստ
բարձրանում են: Վոչ ամպերի վրա, վոչ ել նրանցից վեր իհար-
կե չի կարելի ապրել: Ամպերի յերեսով իհարկե վոչ վոք չի կա-
րող քայլել կամ կառք քշել:

Ողային շապիկից դինը գտնվում է աիյեզերական յեթերի
անպարփակ, անող տարածությունը: Այս տարածության մեջ
անթիվ աշխարհներ կան: Այնպես վոր մենք ապրում ենք «յեր-
կնքում», ամեն Վոդմից շրջապատված այն բանով, վոր առաջ
մարդիկ յերկինք էին անվանում: Այդ յերկինքն ամեն ժամ
կարելի յի աերոպլանով բարձրանալ, ամեն կողմ կտրել նրա
տարածությունը: Նրա մեջ շարժվող աշխարհները՝ Արևը, Լուսի-
նը, Արուսյակը (Վեներան), Հրուտը (Մարսը), Սատուրնը, Յու-
պիտերը, Սիրիուսը և մյուս արև- աշխարհները յերկրի նման
շարժվում են այդ անսահման տարածության մեջ ամեն ժեկն իր

վորոշ ճանապարհով—որբիտներով (շրջաններով): Այդ շրջանները կարելի չէ ուսումնասիրել, հաշվել, ստուգել, նույնիսկ գուշակել՝ ճշգրիտ թվարկումների վրա հիմնվելով: Հսկայական հեռադիտակները (տելեսկոպները) մարդկանց հնարավորություն են տալիս դիտելու այդ յերկնքի հեռու-հեռուների խորքերը մինչև բիլիոն ու տրիլիոն վերստ տարածության չափ, և վոչ մի տեղ, վոչ վոք ու յերբեք այնտեղ վոչ աստված է գտել, վոչ հրեշտակ, վոչ սուրբ, վորոնց մասին մեզ պատմում են դանազան կրոններ, տերտերներ, աստվածաշնչեր. չկան այդ բոլորը, վորոնք իբրև թե կարգադրում են այդ աշխարհների շարժումները: «Յես հետազոտեցի, զննեցի յերկինքը և վոչ մի տեղ աստծու հետքն իսկ չգտա», ասել է մեծ աստղագետ Լալանդը: Յիրբ իմպերատոր Նապոլեոնը հարց է տալիս մեծ աստղագետ Լապլասին, թե ինչու նա յերկնքի կազմության վերաբերող իր ուսումնասիրություններից վոչ մեկում և վոչ մի խոսք չի ասում աստծու մասին, գիտնականը պատասխանում է. «վորորմած կայսր, յես յերբեք դրա կարիքը չեմ զգացել»: (Լ. Բյուխներ, «Ուժը և Նյութը»:

Այո, ներկայումս ժողովուրդը կարիք չի զգում աստվածաշնչի պատմություններին՝ յերկինքն աստծու խոսքով կամ ձեռներով ցուցված լինելու մասին: Նա գիտե, վոր դա «հաստատություն» չէ, վոր արևը, լուսինն ու աստղերն ամրացված չեն այդ «հաստատությունում», նա գիտե, վոր հավիտյան ու անսահման գոյություն է ունեցել նյութը, վոր նրան վոչ վոք չի քտեղծել ու շինել: Նա գիտե, վոր նյութի հատկություններից մեկն է յեղել և մնում է շարժումը: Շարժումը միացրել են նյութի մասնիկները և առաջ բերել միզամածներ: Շարժումն այդ կիսվածքներին նախ սպիրալ, ապա ողականման և հետո գնդանման ձև է տվել: Շարժումը հսկայական ջերմություն է ծնել, վոր «կզբում այդ աշխարհները պահել է գազանման, շիկացած դրության մեջ, հետո հալած-հեղուկային, հետո շիկացած-կարծր և վերջապես՝ սառած-կարծր դրության մեջ, ինչպես յերկրի մակերևույթն է:

Վորտեղից է մարդն իմանում այդ բոլորը: Միջնադարյան աստվածաշնչերի մեջ է դա գրված: Ինչ վոր աստվածներ, հրեշտակներ, սրբեր են բաց արել նրա առաջ բնության այս գաղտնիքները: Վոչ ամենևին, նա ինքն է խլել այդ գաղտնիքները մտքի ուժով, գիտության և տեխնիկայի ուժով, անթիվ սերունդների փորձի ստուգումով: Ձեռքով շինված ճիշտ, անսխալ գործիքներն են մարդուն հնարավորություն տալիս միլիոնավոր վերստերի վրա տեսնել, չափել և թվանշանների վերածել շարժումները, լուսանկարների վրա դրոշմել մոլորակների և աշխարհների ձևերը, նկատել հեռավոր աստղերի լույսերը և գտնել, իմասալ, թե ինչից են բաղկացած այդ աստղերը և ինչ դրության մեջ են նրանք:

Իսկ աստվածաշնչի հեքյաթն այն մասին, Վոր իբր թե
հրեյական աստվածը յերկու անգամ յերկու որվա մեջ յերկինք և
ստեղծել, և ուրիշ ժողովուրդների հարյուրավոր նման հեքյաթ-
ները—ամենեին ել սրբազան պատմությունն չեն, այլ մարդ-
կության մանկական թոթովանքը նրա մտավոր զարգացման
վաղ արշալուսին:

ՉՈՐՐԱՐԴ ԳԼՈՒԽ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՅԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Քարածուխի, ավազաքարի, կրաքարի կամ շերտաքարի զանազան տեսակների շերտերում մարդիկ դառնում են դրոշմվածքներն այն քարացած կենդանիների ու բույսերի, վոր վաղուց անհետացել են: Կավճային և այլ ամբողջ սարեր են գոյացած յերբեմն ծովերում բնակված մանրագույն կենդանիների կմախքներից, խեցիներից ու փուլերից: Այս մնացորդներով մենք կարող ենք յերկրի անցյալն ուսումնասիրել: Յերկրի ամեն մի շերտը բնության իսկ ձեռքով գրված յերկրի կյանքի պատմության մի եջ է: Այդ քարե եջերը, յերկրի կեղևի շերտերը, յերբեմն գոյություն ունեցած ծովահատակի, յերբեմն նախշունացող այլ անտառների, այլ հովիտների շերտերը հիմիկվա աշխարհի համար ոտարոտի կենդանիների ու բույսերի՝ մերթ հսկայական վիշապներին, մերթ մանրագույն, մանրադիտակի (մեծացնող գործիքի) միջոցով տեսանելի կենդանիներին պատկանող կմախքներն ու դրոշմվածքները չեն կարող սուտ ասել, նրանք ճշմարիտ պատմություն են անում անցած գնացած հազարամյակների մասին: Յեվ ամենագլխավորը, վոր նրանք սովորեցնում են, դա այն է, վոր կենդանիների և բույսերի ձևերը շարունակ փոխվում են, ինչպես փոխվում և նաև շրջապատող բնությունը:

Ինչհետև և կայանում այդ փոփոխությունը:

Նրանում, վոր մեծագույն յեվ պարզագույն օրգանիզմ բջիջից սկսած մինչեվ ամենակաթարյալը—մարգը՝ բոլոր կենդանիներն ու բույսերը զարգացման անընդհատ մի շղթա յեն կազմում. կարելի յի հետևել այդ շղթայի զարգացումին, կարելի յի վերականգնել այն, չնայած վոր մինչև նրա սկզբին հասնելը տասնյակ ու հարյուր հազարավոր տարիների պատմություն պետք է քրքրել:

Վճրտեղից է դա մեզ հայտնի: Վճր աստվածը, հրեշտակը կամ մարգարեն են հայտնել այդ մարդկանց: Ինքը մարդը բնությունը հետազոտելով համարյա ուժով քաշել հանել է նրանից նրա «գաղտնիքները». նա սյդքան լուսնն իմացել է՝ յերկրի մեջ խորանալով, նրա խորքերն ուսումնասիրելով, անհետացած ծովերի նախկին հատակներն ու հրաբուլխների ժայթքումներից բարձրացած սարերն ուսումնասիրելով: Նա իմացել է, վոր մենակ այդ հսկայական անտառներն աճելու համար և մեկ էլ նրա համար, վորպեսզի հողի մեջ թաղված այդ անտառները մեր ժամանակներում հողից հանվող սև, ծանր, կարծր, այրվող քարածուխը գոռնան, անհրաժեշտ է յեղել մոտ 6—7 միլիոն տարի:

Այսպես են հաշվում պրոֆեսորներ Բիշոֆը, Շեվանդյեն, Հեկսլին, Ֆիլիպսը: Մինչև 2000 աստիճան շիկացած յերկիրը պաղելու, հովանալու համար անհրաժեշտ է յեղել առնվազն 350 միլլիոն տարի (Բիշոֆ): Կավի, ավազաքարերի, կրաքարերի հսկայական շերտերը կազմվելու համար 500 միլլիոն տարուց պակաս չի պահանջվել (Լյայել): Յերկիրը մի քանի հազար միլլիոն տարիների գոյություն ունի: Մենակ շարլատանը հաղորդություն կարող է ունենալ ճիշտն ասելու, թե ինչքան ժամանակ, տարի առ տարի, գոյություն ունի Յերկիր մոլորակը:

Բայց վորովհետև շարլատաններ դեռևս շատ կան, ուստի հենց նրանք են վոր տարածում են աստվածաշնչի առասպելներն ստեղծագործության մասին, վորպիսին իբրթե կատարվել է մեզնից 7430 տարի առաջ:

* * *

Իսկ ինչպես է բացատրում այդ աստվածաշունչը կենդանիների և բույսերի ծագումը: Աստվածաշունչն այս հարցին յերկու պատասխան է տալիս: Մի պատասխանը «Ծննդոց» գրքի գլ. Ա. 11—13, 19—26, իսկ մյուսը՝ գլ. Բ. 1—6.-ումն է:

Ըստ աստվածաշնչի՝ բուսական աշխարհն ստեղծվում է այն ժամանակ, յերբ դեռ չկան վոչ արևը, վոչ ել մյուս լուսավորները, այն է ստեղծագործության յերրորդ օրը:

Իբրթե դա այսպես է կատարվել.

11. Յեվ աստված ասաց. Յերկիրը կանաչ խոտ բուսցնե, սերմ տվող խոտ և պղաքեր ծառ, վոր պտուղ տա իր տեսակի պես, վորի սերմը իրանում լինի՝ յերկրի վրա: Յեվ այնպես յեղավ:

12. Յեվ յերկիրը կանաչ խոտ հանեց՝ սերմ տվող խոտ իր տեսակի պես և պտղաքեր ծառ, վորի սերմն իրանում է իր տեսակի պես: Յեվ աստված տեսավ, վոր լավ է:

Ուրեմն այստեղ խոսքը միայն ծառերի և խոտերի մասին է: Իսկ ջրաբույսերը (վորոնք միշտ ել կանաչ չեն), վոր բուսնում են վոչ միայն հողի վրա, իսկ մամուռները, սունկերը և մյուս բույսերը: Նրանց ստեղծման մասին դուք վոչինչ չեք իմանալ աստվածաշնչից: Դա բացատրվում է, իհարկե, նախ և առաջ նրանով, վոր աստվածաշունչը հորինողները վատ են իմացել բուսաբանությունը և նրանց մտքովն ել չի անցել իրանց առականների ժողովածուն հավատարի, իրական փաստերով անխոցելի դարձնել: Իսկ յերկրորդ բացատրությունն այն է, վոր աստվածաշնչում նկարագրված աշխարհի ստեղծագործությունն ախր ծայրեծայր առասպել է: Ասացեք խնդրեմ, ինչով է մխիթարում մեզ աստվածաշնչի հորինողը. ամեն մի բույս տալիս է վոչ թե իր քեֆն ուզած պտուղը, այլ այն, վոր նա տալիս է իր տեսակի պես. — չե՞ մի այդ եր պակաս, նարինջներն այս տարի կաղնիների վրա բանեյին, անցյալ տարի՝ յեղևներին, իսկ յեկոզ տարի,

նարնջենիների վրա, կամ թե ցորենը՝ մեկ ուռենու վրա բաներ, մեկ ել՝ յեղեգնի: Բայց փաստ ե, վոր մարդը բույսերի միշտ նոր և նոր ձևեր ե ստեղծում: Յեթե վայրի խնձորը համեմատենք խնձորի այն տեսակների հետ, վորոնք մարդու աշխատանքով, խնամքով ու գիտությամբ են ստեղծված, այն ժամանակ մենք կհասկանանք, վոր աշխարհը կարելի ե վո՛չ միայն ուսումնասիրել, վո՛չ միայն հասկանալ, այլ և կերպարանափոխել: Պատվաստման, խաչածեման, արհեստական պարարտացման, շիթիլի, հատուկ խնամքի և այլ միջոցներով մարդուն հաջողվել ե բույսերի շատ նոր տեսակներ ստեղծել, վորոնք առաջ գոյություն չեն ունեցել:

Բայց մարդը ուզում ե իմանալ՝ յեթե աստված չի ստեղծել խոտերը, ծառերը, կենդանիներին, մարդուն, ապա վորտեղից են նրանք, ապա ո՞վ ե ստեղծել նրանց:

Հիմա շատ շատերին չի բավարարում գիտության պատասխանը—նյութը, շարժումը, տարածությունը վո՛չ վոք ել չի ստեղծել, նրանք հավիտյան գոյություն են ունեցել: Բայց նույն այդ մարդկանց բավարարում ե հեքյաթը քաոսի մեջ շրջող ծերուկի մասին, վորի խոսքով կյանքն ե ստեղծվում: Իսկ գիտությունը, վոր վո՛չ մի տեղ, վո՛չ մի յերկնքում, վո՛չ մի մոլորակում, յերկրագլո՛ւղի վո՛չ մի անկյունում այդ զառամյալ աստծու հետքն իսկ չի գտել, ասում ե. կյանքն ստեղծվել ե, ծագել ե հեռու-հեռու ժամանակներում հենց այն նյութից, վորից կազմված են աստղերն ու արեը, ողն ու քարերը, սարերն ու ձորերը, ծովերը:

Թե փոքրիկ միաբջջային, հասարակ աչքով անտեսանելի (միայն խոշորացնող ապակիով—միկրոսկոպով, մանրադիտակով տեսանելի) մի վորեւե մոներա, թե վիթխարի փիղը, թե հարյուրամյա կաղնին, —դրանք բոլորն ել միևնույն նյութերն են, վորոնցից ամբողջ աշխարհն ե կազմված: Այդ նյութի մասնիկների միացումը, նրանց շարժումը տարբեր ժամանակներում և տարբեր միջավայրում ե տեղի ունեցել: Մի դեպքում, մի միջավայրում այդ միացումից, այդ շարժումից հանքի բյուրեղներ են առաջ յեկել, ուրիշ դեպքերում՝ բույսերի և կենդանիների բջիջներ: Գոյության փոփոխվող պայմաններին հարմարվելով՝ այդ որգանիզմներն իրանք ել են փոփոխվել, մինչև վոր մեզ ծանոթ ձևերին են հասել: Ինքը մարդը փոխում ե նրանց, ինչ չափով վոր նա բնության կույր ուժից՝ նրա տերը, իշխանը, նրան կազմակերպող ուժն ե դառնում:

* * *

Ստեղծագործության հինգերորդ և վեցերորդ ոլը հրեյաների Աստված Ելոհիմը զբաղվեց կենդանիների աշխարհով: Նա սկսում ե ուղղակի սողուններից ու թռչուններից, չնայած վոր գիտությունը վորոշակի հաստատել ե, վոր յերկրի շերտի հնագույն շերտերում թռչունների ու սողունների յերևան գալուց դեռ շատ առաջ իրանց կազմակերպությամբ ավելի պարզ կենդանիներ են գոյություն ունեցել:

Չեռուները հանդես են գալիս հողի այսպես կոչված քա-
րածխային շերտում միայն, իսկ թռչուններն՝ ել ավելի ուշ:
Բայց հրեյական աստվածն ու շարլատան տերտերներն ինչ գործ
ունեն յերկրաբանության հետ: Յեթե աստվածաշունչը հակասում
է գիտությանը, ավելի վատ գիտության համար,—ասում են
տերտերները: Իսկ աստվածաշունչը տեսե՞ք թե ինչպես է նկարա-
գրում կենդանիների ստեղծումը.

20. Յեվ աստված ասաց. թող ջրերը յեռան կենդանի
շունչ ունեցող զեռուներով, և թռչունները թող թռչեն
յերկրի վրա յերկնքի հաստատության յերեսին: (Յեվ այդ-
պես յեղավ):

21 Յեվ աստված ստեղծեց մեծամեծ ձկներին և բոլոր
կենդանի շունչ ունեցող սողուններին, վոր ջրերը յեռա-
ցին նրանցով, նրանց տեսակի պես, և բոլոր թևավոր
թռչուններն իրանց տեսակի պես: Յեվ աստված տեսավ
վոր բարի յի:

Լավ եր թե վատ այս ամենը, դրա մասին քիչ հետո մենք
դեռ կխոսենք, իսկ այստեղ նկատենք, վոր Ելոհիմն ամենից ա-
ռաջ սկսում է ջրային կենդանիներ ստեղծել: 24—25 տների մեջ
խոսվում է սողունների մասին: Նշանակում է այս պատմությունը,
ինչպես և ամբողջ պատմությունը սկզբնապատմական աշխարհքի
մասին, կարող եր կազմվել ջրային մեծ տարածությունների
մոտ ապրող ժողովրդի մեջ: Հրեյաներն անկասկած այս պատ-
մությունը վերցրել են ուրիշ ժողովուրդներից, որինակ՝ բաբե-
լացիներից, վորոնք իրանց հերթին՝ ծովից յեկած վորևի ժո-
ղովուրդներից:

Մյուս պատմությունը պարունակվում է գլ. Բ., 1—25:

Այնտեղ ասված է.

4. Սրանք են յերկնքի ու յերկրի ծնունդները նը-
րանց ստեղծված ժամանակը, այն որը, յերբ Յեհովա աստ-
վածը յերկինքն ու յերկիրն ստեղծեց.

5. Յեվ գաւսի բոլոր բույսերը տակավին յերկրի վրա
չկային և դաշտի բոլոր խոտերը տակավին չեյին բուսած.
վորովհետեւ Յեհովա աստվածը յերկրի վրա անձրև չեք բե-
րած, և մարդ չկար հողը մշակելու...

19. Յեհովա աստվածը հողից շինեց դաշտի կեն-
դանիներին և յերկնքի թռչուններին....

20. Յեվ Ադամը (մարդը) բոլոր անասուններին և յերկնքի
բոլոր թռչուններին և գաւսի բոլոր գազաճճերին անուճ-
ճեք գրավ...

Կարդացեք «Ծննդոց» գրքի ամբողջ 2-րդ գլուխը, դուք
այնտեղ վնչ մի խոսք չեք գտնիլ ջրային կենդանիների մասին,
վորովհետեւ առաջին գլխում գետեղված պատմությունը բոլորո-
վին այլ է, քան յերկրորդ գլխինը, վորը կարող էյին հորինել
մարդիկ, վորոնք ապրել են անջուր դաշտային կամ լեռնային

վայրերում, ուր մարդ տմենից շատ դաշտային անասունների, դաշտային բույսերի և խոտերի հետ գործ ունի: Խնչպես հետա-
դալում կտեսնենք, յերկու պատմություններն աշխարքի ստեղ-
ծագործության մասին ել ավելի տարբերվում են, յերբ բանը
հասնում է մարդ ստեղծելուն: Այստեղ մենք մոտենում յենք
տարբեր աստվածների ստեղծարար աշխատանքի հետաքրքիր
մի մոմհնտի: Համարյա բոլոր ժողովուրդներն իրանց պատմու-
թյուններն են հորինել մարդու ստեղծագործման մասին: Տարբեր
ժողովուրդների, թեպետ վոչ բոլորի այդ պատմությունները շատ
բանով իրար նման են, միայն ամեն մի ժողովուրդ իր սեփական
արարիչ-աստվածն ունի:

Յեւ վիսկապես, վիրտեղից է առաջին մարդը, մի է ստեղծել
առաջին մարդուն: Դրա մասին կխոսենք հինգերորդ գլխում:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Ս Ա Ր Դ ՈՒ Ծ Ա Գ ՈՒ Ս Ը

Ռամիկ մարդուն առանձնապես հետաքրքրում է այս հարցը — վոթեդից ե լույս քնկել առաջին մարզը: Յեվ միլիոնավոր մարդիկ իսկույն և յեթ հանգստանում են, յերբ նրանց ասում են, թե առաջին մարդուն — Ադամին ստեղծել է աստված, նույն այն հրեյական աստվածը, վորն արև ու աստղեր եր մեխում «յերկնքի հաստատության» վրա և խոսքով բույսեր ու կենդանիներ ստեղծում: Բավական է միայն հավատով ընդունել, վոր յեղել է և կա այդպիսի մի աստված, վորպեսզի գյուղացին ամեն մի անհասկանալի բան ասածու կամքով բացատրի: Յեթե աստվածաւանդից հավասան, մարզն ել մնացյալ աշխարհի հետ ստեղծված է 7430 տարի մեզնից առաջ: Իսկ մինչդեռ կան հնուքյան հիշատակաւաններ, մնացորդներ, վարոնց մարզն է ստեղծել եվ վորոնք իրանից ավելի հասակավոր են: Մինչդեռ հողի շերտերում, վորտեղ վաղուց չքացած կենդանիների վոսկորներ կան, գտնում են մարդու վոսկորներ, վորոնք մի քանի անգամ ավելի հին են, քան աստվածաշնչի ասած ժամանակը. մենակ այս փաստերը վկայում են, վոր աստվածաւանդ պատմությունը մարզու ստեղծագործման մասին ճշմարտություն չի:

Բայց լսենք աստվածաշնչի ու տերտերների պատմությունը մարդու ստեղծագործման մասին:

Ամենից առաջ պիտի նկատել, վոր աստվածաշնչում վոչ թե մեկ, այլ զրքի զանազան մասերում մի քանի պատմություն կա մարդու ստեղծագործման մասին: Այդ պատմություններից յերկուսը «Մենդոց» գրքումն են, մեկն առաջին գլխում, մյուսը յերկրորդ: Առաջին գլխում աստված իր խոսքով ստեղծում է մարդուն աշխարհի ստեղծագործության վեցերորդ որը:

26. Յեվ աստված ասաց. մեր պատկերովը և մեր նմանությամբ մարդ շինենք, վոր իշխի ծովի ձկների և յերկնքի թռչունների և անասունների և բոլոր յերկրի վրա և յերկրի վրա սողացող բոլոր սողունների վրա:

27. Յեվ աստված ստեղծեց մարդուն իր պատկերովը, ասածու պատկերովը ստեղծեց նրան. արու և եգ ստեղծեց նրանց:

28. Յեվ աստված որհնեց նրանց և աստված ասաց նրանց. աճեցեք և բազմացեք և լցրեք յերկիրը, և տիրեցեք նրան, և իշխեցեք ծովի ձկների և յերկնքի թռչունների վրա և յերկրի վրա սողացող բոլոր սողունների վրա:

31. Յեվ աստված տեսավ բոլորն, ինչ վոր արել եր, և

ահա շատ բարի եր: Յեւ իրիկուն և առավոտ յեղամ վե-
ցերորդ օրը:

Ռամիկ մարդուն շատ դուրեկան է մտածել ու հավատալ, վոր
ինքն ստեղծված է աստծու պատկերով և նմանությամբ: Իսկ
ինչ է անում մարդն ինքը, ինչպես է նա պատկերացնում իր
աստծուն: Սովորաբար նա աստծուն պատկերացնում է և նկա-
րում մարդու նմանությամբ, աստված մորուս ունի, բեխեր
ունի, յերկու աչք, յերկու ականջ, քիթ, բերան, յերկու ձեռք,
յերկու վոտք, այնպես, ինչպես մարդն է: Ճիշտ է, վոմանք աստ-
ծուն նկարում են բազմազլխանի, հարյուրավոր ձեռներով ու
վոտներով, զանազան կողմեր դարձրած ականջներով. ապա և
ինչպես պատկերացնել, թե աստված ամենագոյե, ամենատես է,
ամեն բան լսող, ամենակարող և այլն:

Յուլյց տալու համար թե վորքան մեծ է իրանց աստվածը,
հրեյա աստվածաբանները Յեհովային նկարագրում են այս կերպ.
Նա մի ծերունի յե, վորի գլխի մազերը մեկ միլլիարդ և յոթ
հազար վոլոր ունեն, նրա հասակը կես միլլիարդ մղոն է,
մատների յերկարությունը մեկ միլլիարդ յերկու հարյուր հազար
մղոն, իսկ ձեռքի թաթը՝ 240,002 մղոն. — ահա թե ինչպիսի
հշտությամբ են չափել հրեյա բարբիներն իրենց աստծու գլխի
խոպոպները և նրա մատների յերկարությունը: Ինչպես են արել
այդ չափերը շարլատան բարբիները — դա իհարկե նրանց
գաղտնիքն է, մանավանդ վոր ըստ աստվածաշնչի մահկանացու-
ներից վոչ վոք չի տեսել աստծուն ամբողջությամբ, բացի կըռ-
նակից և հետույքից: Բայց ելի բոլոր քրիստոնյաները, հրեյա-
ները, մահմեդականները, բուդդիստները հավատում են, վոր ի-
րանք ստեղծված են աստծու պատկերով և նմանությամբ, իսկ
աստծուն նրանք պատկերացնում են մարդու կերպարանքով և
դուրս է գալիս, վոր մարդ ինքն է ստեղծում իր համար աստված
իր պատկերով և նմանությամբ:

Բայց վորովհետև աստված մի անգամից այր մարդ և կին
մարդ է ստեղծել իր պատկերով և նմանությամբ, ապա ուրեմն
ձևն է նման ինքը աստված: Կնոջ, թե տղամարդու: Ինչ սեռի յե աս-
տված, արական, թե իգական: Թե նա անսեռ եւ կամ թե՛ յերկ-
սեռ է նա (հերմաֆրոդիտ): Լինում են այնպիսի անբնական մար-
դիկ, վորոնց սեռական որդանները և՛ արական, և՛ իգական հատ-
կանիշներ ունեն: Ինչո՞ւ աստված մեծ մասամբ արական անուն
ունի: Զե՞ վոր շատ ժողովուրդներ հավատում եյին, վոր աստված
յերկսեռ է, հերմաֆրոդիտ եւ Այսպես աստվածաշնչի հրեյա պար-
զաբանողներից մի քանիսը կարծում են, վոր առաջին մարդը
յերկսեռ է ստեղծված:

Տերտերները չեն սիրում, յերբ նրանց հարց կս տալիս, —
արդյոք տղամարդը, թե կինն է ստեղծված աստծու նմանությամբ.
շատ տերտերներ բացատրում են, թե «այս պետք է հոգևոր և
խորհրդավոր իմաստով հասկանալ», թե մարդն աստծուն նրա-

նով չի նման, վոր նրա բեխերը և աչքերը, մորուքն ու վոտները նոյնպէս են, ինչպէս աստծունը, այլ նրանով, վոր մարդու հոգին եւ անմահ եւ աստվածային հոգու նման: Դրա մասին, այդ հոգու մասին մենք դեռ զրույց կանենք, բայց, ասացե՞ք ինչքեմ, լսած կա՞ք արդո՞ք, վոր ւերտերները բողոքած լինեն նրա դեմ, վոր աստվածն Սաբալուլթը կամ նրա վորդին Հիսուսը պատկերացվում են, նկարվում են մարդկային դեմքով: Վհ, չեք լսել: Հենց իրանք տերտ'րներն են նպաստել, վորպեսզի հարյուրավոր միլիոններով տարածվեն աստծու պատկերները մարդու կերպարանքով: Յեւ այդ պատճառով տերտերները պարտավոր են պատասխանել, թե ի՞նչ սեռի յե աստված—տրակմն, թե՞ իգական, թե՞ նա անսեռ ե կամ յերկսեռ:

* * *

Բայց աստվածաշունչ մատյանի մեջ կա և՛ մի ուրիշ պատմություն մարդու ստեղծման մասին, վոր միանգամայն տարբերվում ե նոր այստեղ վերլուծածից: Ս. Ռաջին գլխում ասված ե, թե մարդն թելաբի յեկավ իբրեւ յաւարքի ստեղծագործության պսակը, իբրեւ նրա ավարտումը բույսերից յեւ կենդանիներից հետո: Իսկ յերկրորդ գլխում մեզ պատմում են, թե աստված սկզբից մարդուն ե ստեղծել յեւ ապա միայն մնացած բոլորը: Կարդացե՞ք և ստուգեցե՞ք:

4. Սրանք են յերկնքի ու յերկրի ծնունդները ներանց ստեղծված ժամանակը, այն ուր, վոր Յեհովա աստվածը յերկիրն ու յերկինքն արավ:

5. Յեւ դաշտի բոլոր բույսերը տակավին յերկրի վրա չկային, և դաշտի բոլոր խոտերը տակավին չեյին բուսած, վորովհետեւ Յեւոհա աստվածը յերկրի վրա անձրեւ չեր բերել, յե մարդ չկար հողը գործելու:

6. Բայց յերկրիցը գոլորշի եր դուրս գալիս և ամբողջ հողի յերեսը ջրում:

7. Յեւ Յեհովա աստվածը հողի փոշուց շինեց մարդուն և նրա յերեսին (ռունգների մեջ) կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հողի յեղավ:

Ծինչև այստեղ մենք տեսնում եյինք, թե ինչպէս ամեն ինչ ստեղծվել ե աստծու խոսքով—և՛ յերկինքը, և՛ գետինը, և՛ լուսավորները, կարճ՝ ամբողջ աշխարհը: Իսկ հիմա սկսվում ե յերկրորդ անգամվա ստեղծագործությունը, վորովհետեւ աստվածաշունչը կազմել են շատ մարդիկ և տարբեր ժամանակ, վորովհետեւ նա քանիցս արտագրվել ե, ուղղվել, ուստի յերկրորդ գլուխն ավելի շուտ առաջինը պիտի լինի. մարդիկ սկզբում ավելի պարզ եյին պատկերացնում աշխարհի ծագումը, և նրանց հին աստվածն ստեղծում եր աշխարհը և բոլոր առարկաները անձնական աշխատանքով, իսկ աշխարհն արարչի խոսքով ստեղծվելու պատմությունն ավելի ուշ ժամանակվա հավելումն ե: «Ծննդոց» գրքի յերկրորդ գլխի համաձայն՝ աստված հողից ե ծնվում մարդուն այնպէս, ինչ-

պէս բրուտն՝ իր կուժն ե շինում, ինչպէս անդր/ադործն իր ձեռներով դանազան ձեեր ե շինում: Մարդու ձեը շինելուց հետո աստված նրա մեջ շունչ ե փչում, ե մարդը դառնում ե կենդանի հոգի: Հավ, իսկ մյուս կենդանիները, ինչ ե, նրանք նույնպիսի «հոգի» չունեն, ինչպէս մարդիկ: Տերտերներն իզուր են ճշդ-նում ասպացուցել, վոր բացի մարդուց մյուս կենդանիները «հոգի» չունեն, վորովհետեւ իրականութեյունն այն ե, վոր մարդու ե կենդանիների մարմնի հատկութեյունների ե կազմվածքի տարբերութեյունը միայն ձեի, արտաքին, նյութական շինվածքի մեջ ե ե վոչ թե եյականում, հիմնականում, վոչ մի առանձնահատուկ հոգի մարդը չունի, այլ միայն ավելի բարձր ե իր մտավոր զարգացմամբ ե ավելի կատարյալ իր մարմնի կազմութեյամբ:

Հետո, յիրկրորդ գլխում պատմվում ե, թե ինչպէս հրեյական աստվածը տնկել ե Եդեմը—դրախտի պարտեզը ե այդ ել նույնպէս անձնական աշխատանքով:

8. Յեվ Յեհովա աստուածը արեւելքի կողմը Եդեմի մեջ մի պարտեզ տնկեց ե իր շինած մարդուն դրավ այնտեղ:

18. Յեվ Յեվոհա աստվածն ասաց. լավ չե, վոր մարդը մենակ լինի. նրա նման մի ոգնական շինեմ իրան հարմար:

19. Յեվ Յեհովա աստվածը շինեց հողիցը բոլոր դաշտի կենդանիներին ե յերկնքի բոլոր թռչուններին ե բերավ մարդու մոտ, վոր տեսնի, թե նրանց ինչ անուն կդնի, ե ինչ անուն վոր մարդ տա ամեն շնչավոր կենդանու, այն ե նրա անունը:

20. Յեվ մարդը բոլոր անասուններին ե յերկնքի թռչուններին ե դաշտի բոլոր գազաններին անուններ դրավ. բայց մարդուն իր նման ոգնական չգտնվեց:

Ուշադրութեյուն դարձրեք: Գազաններն ու թռչունները յերկրորդ գլխում նույնպէս ինչպէս մարդն ատեղծվում են վոչ թե խոսքով, այլ շինվում են հողից: Սրանից հետո հրեյական աստվածն առաջին մարդու համար շքերթ ե կազմակերպում. նրա առջևից անց ե կացնում զույգ-զույգ բոլոր կենդանիներին (ինչո՞ւ աստվածաշունչը միայն դաշտային կենդանիներին ե հիշատակում): Ի՞նչու համար ե նա այդ անում: Բանից դուրս ե գալիս՝ նրա համար, վոր աստված ուզում ե տեսնել, թե ինչ անուն կդնի մարդը կենդանիներին ե թռչուններին: Յեվ այդ անողը «ամենատես», «ամենադետ» ու «ամենակարող» Յեհովա-Ելոհիմն ե, վորը յեթե իրոք այդպէս լիներ, նախորդ առանց մարդուն ել պիտի իմանար իր ատեղծած բոլոր թռչունների ե կենդանիների անունները: Բայց բանից դուրս ե գալիս, վոր շքերթ կազմակերպելով՝ աստված ուրիշ նպատակ ել ե ունեցել. նա ուզեցել ե տեսնել, արդյոք Ադամն այդ բոլոր կենդանիներից ու թռչուններից մի ոգնական չի՞ ընտրիլ իր համար: Յեվ «տարբ աստվածաշունչը» հանդիսավոր տեսւմ ե. «բայց մարդուն իր նման ոգնական չգտնվեց»:

Գոնե մի բոլոր պատկերացրեք ձեզ, թե ինչպիսի շքերթ է
յեղել դա: Ներկայումս մի քանի հազար տեսակ գաղան և թռչուն
գոյություն ունի: Նայած գետնում գտնված մնացորդներին ու հեա-
քերին, շատ կենդանիներ արդեն չքացել են. նշանակում է՝ մեր ա-
սած թիվը մի քանի անգամ պիտի բազմապատկվի: Յեվ ահա
աստված հատուկ մորիլիկացիա յե հայտարարում, ամբողջ յերկ-
րագնդից հավաքում է կենդանիներին և նրանց կնքում, և այն
եւ մի ուրում: Խեղճ առաջին մարդ: Խեղճ Ադամ: Նա պիտի
անընդհատ բլբլացներ, այդ բոլոր հայվանների, չորքոտանիե-
րի, թեալորների, քթալորների, պոչավորների համար վայրկե-
նապես անուշներ հնարեր, ըստ ցեղերի, տեսակների զանաղա-
ներ: Չե՞վոր ամեն՝ «ձի», «շուն», «գայլ» իրանց մեջ հարյուրա-
վոր հատկանիշներ են պարունակում, վոր այդ խոսքով են
արտահայտված. գուլաս և գալխ, վոր աստվածաշնչի Ադամը,
վոր դեռ հինգ սրական եր, այնքան ուսյալ եր, վոր կարծես
բնական գիտությունների լավագույն համալսարաններ եր ա-
վարտել:

Բայց չե՞ վոր գործը տեղի է ունենում վո՛չ թե համա-
լսարանում, այդ դրախտում. ամբողջ յերկրագնդից (վո՛նց եւ կա-
րողացել են այդպես վայրկենապես) վազել, թռել, սողացել, լո-
ղացել յեկեւ են նրանք Ադամի մոտ մկրտվելու: Թե ինչպես են լող
տվել դրախտի գետերով (նրանցից ամենամեծը Յեփրատն է)
ծովային կետերը, ծովային առյուծները, ծովային կովերը
և ուրիշ կենդանիները—այդ բանը չի կարող նկարագրել և
վո՛չ մի վառ յերեվակայություն. վո՛չ անբողոքները վո՛չ եւ ելեք-
տրապնացքները չեյին կարող այդպես արագ տեղ հասցնել նրանց:

Բայց,— կասի անզգուշ տառակերի մեկը,— ինչո՞ւ Ադամի մոտ
պիտի գային ջրային կենդանիները, չե՞ վոր նրա գործն է յե-
ղել միայն գաղտնյան գաղաններին և թռչուններին մկրտել:

Այդ դեպքում ապա ո՞վ է անուն դրել մնացած կենդանի-
ներին—անտառային, ջրային, գետնի տակ ապրողներին, մի-
ջատներին: Ո՞վ է անուն տվել բույսերին: Պարզ չե՞ միթե, վոր
աստվածաշնչի այս պատմությունն եւ տակից զլուխ մտացածին
բան է միայն, ուրիշ վո՛չինչ:

Վա՛ս զվարճալիք չի կազմակերպել աստված իր անդրանիկ
Ադամի համար. բայց մի՞թե, իսկապես, նա կարծելիս է
յեղել, թե Ադամն իր համար կին կվերցնի մի եգիպտացի կնոջ:

Յերբ հրեյաների իմաստուն աստվածը հավաստիացավ, վոր
Ադամի սիրտը վո՛չ իշուհիներ, վո՛չ փղուհիներ, վո՛չ սագուհիներ, վո՛չ
եւ ուրիշ եգ կենդանի է ուզում, նա նրան պառկեցրեց վոր քնի: Ա-
ռաջին անգամն եր քնում մարդն՝ իր կյանքի քանի ժամվա մեջ
այնպիսի աշխատանք կատարելով, վորը նրանից հետո նորից կա-
տարեցին հունական մեծ իմաստուն Արիստոտելից սկսած աշխար-
հիս հարյուրավոր մեծագույն գիտնականներ, յերբ նրանք
բնության աշխարհն ուսումնասիրելով նկարագրեցին այն և
անուններ տվին կենդանական ու բյուսական աշխարհին:

կենդանիներին ցեղերի և տեսակների բաժանելու հսկայական աշխատանքը կատարելուց հետո Ադամն այնպես հոգնեց, վոր քնի մեջ նույնիսկ չնկատեց, թե ինչ և բերում նրա գլխին Ելոհիմ-Յեհովան:

Ինչ եր աստվածաշնչի աստծու միտքը, վոր նա Ադամին քնացրեց: Տեսեք, թե ինչ խորամանկն եր այդ աստվածը.

21. Յեվ տեր աստվածը մի խոր քուն բերավ Ադամի վրա, և յերբ նա քնեց, նրա կողքի վոսկորներից մեկն առավ և տեղը միս լցրեց:

22. Յեվ տեր աստվածն այն կողի վոսկորից, վոր Ադամիցն եր փոխ առել, մի կին շինեց և նրան բերավ Ադամի մոտ:

Յեվ Ադամն ասաց. տհա սա վոսկոր ե իմ վոսկորներից և մարմին ե իմ մարմնից. սա կկոչվի կին, վորովհետև սա մարդուցն ե առնված:

Ամենակարող աստվածը մինչև այստեղ ստեղծում եր կամ խոսքով, կամ հողից: Ինչու եզ-կնոջը տղամարդու կողից շինել պետք եղավ, քանի վոր կենդանիների մնացյալ բոլոր եգերն աստվածաշնչի ասելով ստեղծվել էյին միևնույն ձևով, ինչ վոր արունները,—դա դադարնիքն ե աստվածաշունչ կազմողների, հորինողների, վորոնք գրել են այդ՝ ամոթ չլինի ասել՝ «սուրբ» պատմությունը: Աստծու ույժը չի պատել եզ-կնոջն ել սովորական միջոցով ստեղծել: Գայկան թուլացած ե յեղել: Կարող եք պատկերացնել այդ Ադամին, վորի կողքի վոսկորն աստված կըտրում ե, ինչպես խոհարարը հորթի կամ վոչխարի կողքի վոսկորը՝ թակած կոտլետ պատրաստելու համար: Թե կողի վոր վոսկորն ե հանել աստված, ամենից լավ կհասկանաք, յեթե տղամարդու և կնոջ կմախքները համեմատեք. յերկուսն ել հավասար քվով ու միասեռակ կազմվածքով կողքի վոսկորներ ունեն: Սրանից ավելի ծիծաղելի, մանկամիտ բան չեր կարող հնարել նախնական մարդու յերևակայությունը: Թե ինչու ամենակարող աստծուն անպայման կողի վոսկորը պետք յեղավ, ինչու անպայման խեղճ Ադամի փորոտիքը խառնշտորել պետք յեղավ, այս հարցերին իհարկե վոչ մի տերտեր բավարար պատասխան չի տալ:

Աստված Յեվայի՞ր Ադամի մոտ բերավ. վորտեղից ե նրան բերում, վորտեղ ե նա Ադամի մսից կին շինել:

Աստվածաշունչը հորինողներն այսպիսի հարցեր չեն սպասել: Չե՞ վոր տերտերները սովորեցրել էյին, թե մեղք ե աստծու խորհուրդների մասին հարցեր տալ, այլ պետք ե կուրորեն հավատալ: Յեվ հավատացյալ տերտերներն իրանք ասում էյին. «հավատում եմ, տեր, ոգնի՛ր իմ անհավատությանը»: «Հավատում եմ, տեր, թեպետ առաջուց գիտեմ, վոր այդ ամենը դատարկութանով լի է»...

«Ծննդոցի» առաջին գլխում պատմված ե, թե ինչպես

աստված վեց որվա մեջ ամբողջ աշխարհն ստեղծեց խոսքով: Ամեն որ նա ընդամենը մի քանի խոսք եր ասում: Յեվ հանկարծ մենք կարդում ենք (գլ. Բ., 2-3).

2. Յեվ յոթներորդ որը հանգստացավ իր բոլոր գործերից, վոր արել եր:

3. Յեվ աստված որհնեց յոթներորդ որը և սրբացրեց նրան, վորովհետև այդ որը հանգստացավ իր բոլոր գործերից, վոր աստված ստեղծել և արել եր:

Ինչպես քիչ առաջ տեսանք, այդ աստծու յեղած-չեղած աշխատանքն այն եր, վոր ասում եր՝ Թող այս լինի, Թող այն լինի: Յեվ հանկարծ—հոգնեց և ամբողջ որով շաբաթորյա հանգիստ սարքեց իր համար: Կարճ ասած՝ ծույլ անգործի մեկն և հնարել և՛ այդ հանգիստը, և՛ այդ պատմությունը: Հրեյական աստված Ելոհիմն և, ինչպես տեսանք, կարգին ծույլ անգործի մեկն ե: Վեց որ վոչինչ չարած՝ յոթներորդ որը հանգստանում ե...

*
* *

Յերբ միտդ ե գալիս, վոր հարյուր միլիոնավոր մանր ու մեծ յերեխաներ դաստիարակվում են աշխարհի ստեղծագործության այդ «սրբազան» պատմության վրա, բարկությունդ ու առդ գալիս և, մանավանդ մեր գյուղացիության համար, վորին ամենից շատ են հիմարացրել տերտերներն այդ պատմություններով բյուրավոր տարիներ: Բանվորներն ելի վաղուց և վոր շատ ել չեն հավատում այդ հեքյաթներին ու շատ ել զվարճալի պատմություններ են հնարել այդ աստծու մասին, վոր կողից ու ցեխից կին և ստեղծում:

Իսկ գիտությունը վաղուց և հաստատել, վոր մարդն ել հենց այնպես և գոյացել, ինչպես վոր մնացած կենդանիները: Ամենից առաջ յերկրագիտությունը (գեոլոգիան), բրածոյագիտությունը (պալեոնտոլոգիան) և մարդու ու մյուս կենդանիների մարմնի անդամների կազմության պատմությունը (բաղդատական մարմնակազմությունը), այլև տարբեր կենդանիների սաղմի զարգացման ուսումնասիրությունը (սաղմնաբանությունը),—այդ բոլոր գիտությունները ցույց են տվել, վոր մյուս կաթնասուն կենդանիների ծագումն առնելուց շատ-շատ հազարավոր տարիներ հետո յե մարդը յերևացել յերկրի վրա՝ կամաց-կամաց փոխվելով և շնորհիվ յերկրի զանազան հեղաշրջումների ու կլիմայի, բուսականության, յերկրի կեղևի մակերևույթի փոփոխությունների և այլն:

Գիտությունը հաստատել և նույնպես, վոր կենդանական վոչ ամենմի առանձին տեսակ և ինքնուրույն կերպով առաջ յեկել, այլ վոր կյանքի փոխվող պայմանների և շրջապատող աշխարհի ազդեցության շնորհիվ մի կենդանին փոխվել և՛ ուրիշ ձևերի սկզբնավորություն տալով: Այլա գիտությունը հաստատել և, վոր մարդու մարմնի կազմվածքի, նրա վոսկորների (կմախ-

քի), նրա մկանների, կրճուկների, փորոտիքի, ջղերի, արյունատար և ուրիշ անոթների ու մյուս կենդանիների նույն բաների մեջ մոտիկ նմանություն կա, վորը ցույց է տալիս մարդու և մնացած կենդանիների ազդակից լինելը:

Կարճ, — ի՞նչ և հաստատել յուրաքանչյուր գիտություն: Յերկրաբանությունն ու բրածոյաբանությունը հաստատել են, վոր մարդկային վոսկորներ և մարդու ուրիշ հետքեր կան հողի այնպիսի շերտում, վոր մոտ մի քառորդ միլիոն տարեաց պահաս չեն: Միանգամայն ճիշտ — տարի տու տարի — յերկրաբանությունն ու բրածոյաբանությունն գիտությունները դեռ չեն կարող վորոշել մարդու ծագումի ժամանակը, և իսկի մի առանձին կարիք էլ չկա: Բրածոյաբանությունն ու մարմնակազմությունն ուսում հաստատել են, վոր մարդու նախկին վոսկորներն ամենից ավելի նման են մարդանման կոչվող կապիկների վորոշ ցեղերի վոսկորներին. առանձին վոսկորների բաճակը (թվով 200) կատարելապես միեմուկն են, համարյա միասեռակ է ճրանց կազմություները, միայն գանգածածկը, ուղեղատունը մի քիչ մեծ: Բաղդատական մարմնակազմությունն գիտությունը մեզ սովորեցնում է, վոր նախնական կոչվող կապիկների և նախնական մարդկանց վոչ միայն վոսկորներն են իրար նման, այլև այդ նմանությունները տարածվում է նաև մարմնի ուրիշ մասերի վրա: Այսպես՝ որինակ՝ կանացի արգանդի կազմությունը, միայն կապիկներն ու մարդն ունեն չբաժանված տանձաձև արգանդ: Միայն կապիկ և մարդու գանգի ակնախոտոշն և բոլորովին բաժանվում քունքի վոսկրային պատնեշից. մանավանդ նման է կապիկ ու մարդու գանգի ու ձեռների կազմությունը. մարդս այս գծերով միանգամայն նման է կապիկներին: «Նեղքիթ» կոչվող կապիկները մարդու նման են նաև ատամների կազմությամբ. մարդու նման նրանք ել 32 ատամ ունեն, վորոնց ժանիքները, կարիշներն ու սեղանատամները նույնքան են, վորքան վոր մարդն ունի: Մարդանման անպոչ կապիկների պոչուկը բաղկացած է իրար միացած 5 վողներից, ինչպես մարդունը: Մարդանման կապիկների մեջ ել են գոյանում պլացենտա, այսինքն «ընկեր», ընկնող թաղանթ և պուրտ, ինչպես մարդու մեջ: Կապիկները նույնքան մկաններ ունեն, վորքան վոր մարդը (300). նույն կերպ են դասավորված մազերը գլխի և մարմնի վրա: Նույնպես է կազմված սիրտը: Տարբերությունը ձևի և մեծության մեջ է միայն: Բայց մարդկային դանազան ցեղերի, մինչևանգամ նույն ցեղի դանազան մարդկանց մեջ ել հո այդպիսի տարբերություն կա:

Վերջապես վերցնենք բնախոսությունն գիտությունը կամ մեր մարմնի մեջ կատարվող գործողությունների — սնվելու, արյան շրջանառության, շնչառության — մասին գիտությունը: Թե մարդու և թե մարդանման նեղքիթ, անպոչ կապիկների սրտի, արտադրիչ անոթների (լեղի, դանազան, գեղձեր) և

սեռական կյանքի գործունեությունը լիակատար նմանություն են յերեան հանում: Մանավանդ նկատելի չե, վոր կապիկներ շատ տեսակների եզեր սեռական հասունության հասնելուց յենթակա յեն լինում արգանդի պարբերական արյունահոսություն (մարդ-կնոջ դաշտանը, մենստրուացիաները, «ամսահանը»): Նույնն է նրանցում նաև կաթը գալը և ծիծ տալը:

Մարդս շատ և պարծենում իր լեզվով: Բայց հենց հիմի յնլ կան վայրենի և կիսավայրենի ժողովուրդներ, վոր 300 խոսքից ավել չգիտեն: Մինչդեռ կապիկներ կան, վորոնց խոսակցությունն այնպես բազմազան է, վոր անգլիացի նշանավոր ճանապարհորդ Ռիչարդ Բերտընը, վոր յերկար ժամանակ հետևել է նրանց կյանքին, կազմել է կապկային լեզվի իսկական բառարան, վոր 40-ից ավել առանձին արտահայտություններ է պարունակում: Մեր լեզուն մի ժամանակ կապիկների լեզուն է յեղել:

* * *

Այդ բոլոր **իրողություններից**, և փոչ քե հնարովի բաներից, վոչ թե հեքյաթներից հետո (վորովհետև այդ իրողությունները կարելի չե հեշտությունաբ ստուգել) կարելի՞ չե արդյոք կասկածել, վոր մարդն անպոչ կապիկից է առաջ յեկել, ինչպես և՛ անպոչ կապիկը պոչավորից, ինչպես և՛ պոչավորներն ուրիշ կենդանիներից:

Բայց դեռ մի շատ եյական դիտական ապացույց էլ կա: Այդ ապացույցը տալիս է սաղմի դարգացման գիտությունը—սաղմնաբանությունը: Այդ ապացույցը կայանում է հետևյալում: Ուսումնասիրելով արգանդների պտղաբերումը և սաղմի կյանքը՝ մարդիկ տեսան (մանրադիտակի, խոշորացնող ապակուտակ), վոր մարդկային սերմը բաղկացած է մանր-մանր կենդանիներից, վորոնք իրանց պոչուկներով արագ շարժվում են և սեռական գործողության ժամանակ նետվում դեպի կնոջ սաղմը (գիտության մեջ դա կոչվում է ձու): Միայն մի՛ հաս մարդկային կենդանիկ և թափանցում կնոջ սաղմի մեջտեղը, վորից հետո սկսվում է այդ սաղմի զարգացումը. մի վանդակիկը բաժանվում է յերկուսի, չորսի, ութի, տասնուվեցի և այլն: Հետագա զարգացումի հետևանքն այն է լինում, վոր վանդակիկներն սկսում են վորոշ ձևով դարավել, և մարմնի զանազան որգաններ են կազմվում: Յեւ ահա յեթե տարբեր կենդանիների, սկսած դիցուք՝ գորտից, ապա վորև թռչնաձագի, հորթի, կապկի և մարդու սաղմերը զարգացման վորոշ մոմենտում համեմատենք, կերևա, վոր մարդու սաղմը մի տեսակ անցնում է բոլոր աստիճանները. մերթ նա նման է գորտի, ապա ձագի, ապա հորթի, հետո կապկի, հետո միայն արդեն կատարելապես մարդու կերպարանք է ընդունում: Այդ դիտողությունն ինչ է ասում:—Այն, վոր մարդը փոփոխվելով՝ առաջացել է ուրիշ կենդանիներից:

րից, վորոնց գծերը նա կրկնում է իր ազդեցական դրության մեջ:

* * *

Յերբ ապացուվեց, վոր արևը շարժվում է, վոր յերկիրն ել է շարժվում արևի շուրջը, շատերին դա անհավատալի թվաց: Հենց հիմի ել միլիոնավոր գյուղացիներ կան, վոր դա չգիտեն: Մարդիկ վիճում ու ասում ենին. ախր դա վստահելի է տեսնված, վոր կրակը պատեն շամփուրի վրայի խորովածի շուրջը և վոչ թե ընդհակառակն: Ո՞ր աստիճանավորի կին շատ վրդովվում եր. վճնք թե, նա — տիտուլյար խոհրդականի կին լինի ու պատանի վրա ապրի: Չէ մինչե:

Յեվ շատերն իրանց անզարգացողության ու տգիտության շնորհիվ կարծում են, թե մի շատ վիրավորական բան է, վոր իրանց նախահայրերը կապիկներ են յեղել: Վճնց: Վոր յես — նորին մեծությունս — կապիկից լինեմ առաջ յեկամ: Իսկի ել չէ:

Հանգստացե՛ք, ձերդ մեծություն, դրանում վոչ մի ստորացուցիչ բան չկա, միատեսակ նյութից են կազմված թե ամենափոքր միջատը և թե ամենախելոք ու առաքինի մարդը: Ընդհակառակն, մարդս կարող է պարծենալ, վոր նա իր ծագումով մյուս կենդանիներին մոտ լինելով՝ կարողացել է նրանցից այդքան բարձրանալ գլխավորապես այն բանի շնորհիվ, վոր նա աշխարհիս յերեսին միակ կենդանին է, վոր կարող է արտադրության գործիքներ շինել:

Յեվ գուցե, ինչպես ջնջվել-չքացել են աշխարհիս յերեսից կենդանիների անթիվ տեսակներ, կգա ժամանակ, վոր մարդն ել կջնջվի՝ ստեղծելով և կյանք տալով այնպիսի եյակների, վորոնք ավելի կատարյալ կլինեն, ավելի մեծ, անչափ ավելի կարող, քան այժմյան մարդն է, վորին դեռ հարկավոր է ապացուցել, վոր վոչ մի աստված չեր կարող աշխարհն ստեղծել վեց որում:

ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՇԽԱՐՀԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԱԶԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ- ՆԵՐԻ ՀԱՎԱՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆ

Ով վոր ուշադրությամբ կարդացել է «Ծննդոցի» Ա. և Բ. գլուխներում ասվածները, նա արդեն տեսել է, վոր աստվածաշնչում յերկու պատմություն կա: Այդ յերկու պատմությունները հնարել են զանազան ժամանակ և նույնիսկ զանազան ժողովուրդներ. այժմ, յերբ հին բաբելական հիշատակարաններ են բացված, և մարդիկ սովորել են կարդալ այդ հիշատակարանների վրայի սեպագրերը, կատարելապես պարզվել է, վոր աշխարհի ստեղծագործության այդ պատմությունները հրեյաները վերցրել են բաբելացիներից և արդեն բաբելոնյան գերությունից հետո գրել «Ծննդոց» գրքի մեջ: Յերկու պատմությունները բոլորովին հակասում են իրար, և պետք է միանգամայն կուրանալ պետք է կորցնել աղնվաբար մտածելու ընդունակությունը, պետք է տարվել այն մտքով թե աստվածաշնչի ամեն մի տխմարություն սրբազան է, գիտակցաբար խաբել կամ խաբվել, վոր հնդկատես յերկու առանձին և իրար հակասող պատմությունների այդ խառնաշփոթությունը: Այժմ հաստատ հաստատված է, վոր «Ծննդոցի» Բ. գլխում պարունակվող այդ առաջին պատմությունը կազմվել է սրանից մոտ 6,000 տարի առաջ Աքքադիայում, յերկրորդը («Ծննդոցի» Ա. գլխինը) — Բաբելոնում սրանից մոտ 4,000 տարի առաջ: Ահա համառոտակի այդ յերկու իրար հակասող պատմությունները:

Աստվածաճեյի առաջին (Ելոխսական — Ելոխիմ — աստված կամ աստվածներ խոսքից) պատմությունը:

1. Արարիչներն եյին Ելոյիմ կամ Ալեյիմ «աստվածները» (վոր աստվածաշնչում «աստված» են թարգմանված):

2. Յերկիրը քառս է, ջրով ծածկված: Զրերը պետք է բաժանվեն բուսականություն յերկալուց առաջ:

Աստվածաճեյի յերկրորդ (Յահվիսական — Յահվե կամ Յահու — հրեյաների աստված) պատմությունը:

1. Արարիչ — Յահու-Ելոյիմ, աստվածների Յահու, գլխավոր կառավարիչ (աստվածաշնչում թարգմանվում է «տեր-աստված» խոսքերով):

2. Յերկիրը չոր հարթություն է: Բուսականությունը չի կարող գոյություն ունենալ, մինչև վոր անձրև չգա (2,5):

3. Բույսերն ստեղծված են միանգամայն զարգացած կերպարանքով, սերմերով և պտուղներով ընդհանրապես ամողջ յերկրում (I, 12):

4. Թռչունները, ձկները, ջրային կենդանիներն ըստեղծվում են մի անգամում, չորային (դաշտային) կենդանիներն ու սողունները մի ուրիշ անգամում (I, 21-25):

5. Թռչուններն ստեղծվում են ջրից (I, 20):

6. Ծառերը մարդուց առաջ են ստեղծված (I, 12-27):

7. Թռչուններն ստեղծված են մարդուց առաջ:

8. Մարդը գազաններից հետո յե ստեղծված (I, 24-31):

9. Տղամարդն ու կինը (յերկսեռ եյակ—հերմաֆրոդիտ) ստեղծվում են միաժամանակ (I, 27, 5):

10. Մարդն ստեղծված և աստվածների պատկերով:

11. Ստեղծվելուց մարդն իր գոյությունը պահպանելու համար իբրև կերակուր և ստանում պտուղների ու խոտերը (I, 19):

12. Տղամարդն ու կինն իշխանություն են ստանում ամբողջ յերկրի վրա (I, 26):

3. Բույսերն ու սաղմերը, վորոնք պիտի զարգանան այն ժամանակ, յերբ անձրևով ջրվեն, յերևում են իբրիժե միայն Յեղեմում (II, 8-9):

4. Թռչուններն ու չորային կենդանիներն ստեղծվել են միաժամակ, մի անգամում (II, 19):

5. Թռչուններն ստեղծվում են հողից (II, 19):

6. Ծառերը մարդուց հետո յեն ստեղծված (II, 7-8):

7. Թռչուններն ստեղծված են մարդուց հետո (II, 19):

8. Մարդը գազաններից առաջ և ստեղծված (II, 7-19):

9. Կինն ստեղծվում և տղամարդուց հետո՝ տղամարդու ստեղծվելուց բավական ժամանակ անց:

10. Յերկրորդ պատմության մեջ Ադամն ու Յեվան միայն այն ժամանակ են աստվածների նման դառնում, յերբ արգելված պտղից ճաշակում են («Ահա Ադամը՝ դարձավ վորպես մեզանից մեկը») (II, 22):

11. Ըստ յերկրորդ պատմության՝ նա ստանում և միայն պտուղները: Յեվ միայն մեղանչելուց և նրան անիծելուց հետո յե նրան հրամայվում կերակրվել դաշտային խոտով իբրև տուրք իր մեղանչելուն համար (III, 18):

12. Միայն տղամարդուն տրվում և Յեղեմը (II, 15):

13. Յերկիրնքն ու յերկիրն ստեղծված են 6 որում:

14. Աստվածները թույլ են տալիս ուտել յերկրի բոլոր պտուղներն առանց բացառության:

15. Յեդեմի պարտեզը նույնիսկ չի հիշվում:

16. Աստվածները քառսից կյանքի կոչեցին զանապան տարրեր. «Թող աճեցնեն յերկիրը»: Յեվ յեղավ այդպես:

17. Այդ ավանդության նպատակը կարծես շարաթորը տոնելը լինի:

18. Առաջին ավանդությունն ամբողջապես համակրված է մի ժողովրդի աշխարհասկացողությամբ, վոր ապրելիս է յեղել ջրային մեծ տարածությունների մոտերքը:

13. Տեր-աստվածը (աստվածների Յահուն կամ Յահվեն) յերկիրնքն ու յերկիրն ստեղծում է հայտնի չե թե քանի որում (II, 4):

14. Յահուն մահվան սպառնալիքով արդելում է վորոշ ծառի պտուղն ուտել:

15. Բոլոր դեպքերը կատարվում են Յեդեմի պարտեզում:

16. Յահուն յերկիր է իջնում, կավից մարդ ծեփում, փչում նրա քթածաղիներին, ծառիւ տնկում, հետո կողից կին պատրաստում, թռչուններ ու զազաններ շինում և նրանց բերում Ադամի մոտ տեսնելու համար, թե Ադամն ինչ անուններ կդնի նրանց:

17. Շարաթվա մասին վոչ մի հիշատակություն չի պարունակում: Նպատակը կարծես մարդու մեղանշումի ուսմունքը հաստատելն է:

18. Յերկրորդ ավանդությունն ստեղծված է մի ժողովրդից, վոր ապրելիս է յեղել չոր հարթությունների մեջ, ուր տեղ-տեղ միայն պատահում են ուղիսներ (վորոգված, բուսականությամբ ծածկված տարածություններ անապատների մեջ):

Մեկն էլ կասի, այ, տեսնում եք, 6,000 տարի սրանից առաջ Բաբելոնում ել գրվել են նման պատմություններ: Ուրեմըն հրեյաները չեն միայն, վոր իմանալիս են յեղել աշխարհի ստեղծագործության պատմությունը, այլ շատ շատերը:

Այստեղ իսկապես վոչմի զարմանալի բան չկա: Գութանն՝ որինակ՝ մարդիկ հնարել են յերկրագնաի զանազան ծայրերում,

ինչպես և՛ արտադրութեան ուրիշ գործիքներ, միանգամայն ինքնուրույնաբար: Միայն արտադրութեան գործիքները հո չեն: Բոլորովին միատեսակ գաղափարներ, մտքեր են ծնվում մի քանի մարդկանց մեջ յերբեմն միաժամանակ յերկրագնդի զանազան ծայրերում: Մի քանի միատեսակ բարքեր, հավատալիքներ, սովորութիւններ ենք տեսնում այնպիսի ժողովուրդների մեջ, վորոնք յերբեք իրար հետ չեն շփվել. նշանակում է՝ նրանց մեջ ինքնուրույն կերպով են ծնունդ առել այդ հավատալիքները, սովորութիւնները-մեռած նախահայրերի հոգուն հավատալը, նախահայրերին պաշտելը, արևին յերկրպագելը, զոհաբերութիւնը, հարս փախցնելը, ծերերի սպանութիւնը և այլն: Այդ բոլոր իրողութիւնները հնարավոր դառնալու համար ի՞նչ և հարկավոր:— Հարկավոր և կյանքի պայմանների միատեսակութիւն, կերակուր ճարելու միջոցների միակերպութիւն, արտադրական միատեսակ յարաբերութիւններ: Ահա թե ինչու, յերբ կապիտալիզմը մուտք և գործում մի վայրենի յերկիր, յերբ այնտեղ գոյանում և շահագործվող, հարստահարվող դասակարգ, պրոլետարիատ, զուրկ միջոցներից և արտադրութեան գործիքներից, հարկադրված իր բանվորական ուժը ծախելու կապիտալիստին,—այդ դասակարգն արագորեն ընդունակութիւն և ստանում յուրացնելու սոցիալիստական, կոմմունիստական ուսմունքը: Յեւ զա ամեն տեղ և լինում այդպես:

Ահա թե ինչու մենք տեսնում ենք զանազան ժողովուրդների մոտ միատեսակ ավանդութիւններ աշխարհի ստեղծագործութեան մասին. կյանքի միատեսակ պայմաններում են հորինվել նրանք: Բայց վորովհետև ժողովուրդներն ապրել են վորքան ել չլինի քիչ թե շատ տարբեր պայմաններում (տարբեր կլիմա, տարբեր բնութիւն), ուստի այդ ավանդութիւններն ել նրանց մոտ մի քիչ տարբեր են դուրս յեկել:

Տեսնենք թե աշխարհի ստեղծագործութեան մասին ի՞նչ ավանդութիւններ են մնացել զանազան ժողովուրդներից:

* *

Ահա Նոր-Զելանդիայում ապրող, բավական հին կուլտուրա ունեցող մաորի ժողովրդի պատմվածքը:

Մկզբում խափար եր—քառս, Ատեան իշխում եր. հետո ծնունդ առան զգալութիւններ, ապա ցանկութիւններ ու միտք: Ապա ծնունդ առավ շարժումը, բաժանվեց... սկիզբը, և ծնունդ առան Բանգին և Պապան—յերկինքն ու յերկիրը: Նրանցից առաջացան աստվածները: Բանգին ու Պապան իրանց ոգնական ծնեցին աստվածորդի Կոնեյին կամ Տոնեյին, ողային աստված ռուրը հոգուն: Աստվածորդի Տոնեն իր համար կին ստեղծեց իրեն անուշով, իսկ դա յել նրա համար աղջիկ ծնեց: Բանգին ու Պապան մի տղա յել ունեցան անունն Բեռլա, վորը յերկնային կրակի մարմնացումն եր, արևի ու աստղերի աստվածն եր: Լուսնի մութ բծերը նրանով են բացատրվում, վոր մարդուկին

ուզեցել են լուսինը տեսնել և ոձի վրա նստած բարձրացել են
այնտեղ, ու հիմա յեւ մառրիները նրանց տեսնում են լուսնի
վրա:

Կղզիաբնակ ուրիշ ցեղեր այնպես են ասում, թե մի նախա-
հայր-հերոս և վորսացել կղզիները ծովի միջից: Այդ հերոսին
նրանք աստված են համարում: Շատ տարածված են այնպիսի
պատմություններ, թե յերկիրն առաջ և յեկել ծովային մի թըռ-
չնի ձվից: Մի պատմություն կա, վոր ասում է, թե Հավայ կղ-
զիների հերոս-աստված Մաուի-ն և ստեղծել արեն ու բոլոր կեն-
դանիներին և ինքն է բերել կամ ուղարկել արեգակի կրակը
կարմիր ձվի մեջ: Նա արեին կապել է կրակի ճառագայթներով
և ման է ածում նրան յերկրի շուրջը, նա կոտրել է արևի մի
վտուր, վոր հանդարտ ման գա և մայր-յերկրի շրերը չորացնի:

Կղզիներում գտնված մի-հին ձեռագրի մեջ խոսվում է աշ-
խարհի ար-րիշ Տաարոայի մասին:

«Ամայի անվերջ տարածություններում միմիայն Տա-
արոան կար: Վոչ յերկինք կար, վոչ գետինք, վոչ ծով, վոչ
եւ մարդ: Յեւ անա Տաարոան դարձավ արմատների հա-
մար հողաշերտ, ժայռերի համար հատակ, Տաարոան—ծովի
ավազ, Տաարոան—հեռու շրջապատ. Տաարոան լուսավորում
է ինչպես լույս. Տաարոան տիրում է յերկնքում, Տաարո-
ան ամենուրեք է, Տաարոան իմաստություն է. նա յե ստեղ-
ծել Հավայան յերկիրը:»

Մարկիզյան կղզիներում բնակիչները պատմում են. «Նու-
կագիվան անդնդից աստվածային ուժով բարձրանալուց հետո
ստեղծեց ծովի աղջկան, ինչպես նաև կենդանիների և բույսերի
սաղմերին»: Հրաբուդիսների մոտիկությունը և նրանց սարսափե-
ցնող գործողությունը կղզիաբնակներին ստիպեցին առանձնապես
կարևոր նշանակություն տալ նրանց, և նրանք կարծում են, թե
մարդը և նրա գլխավոր կերակուրը—ձուկը—հրաբուդիսին ժայթ-
քումից են դուրս նետվել:

* *

Նեգրերի զանազան ցեղեր տեսակ-տեսակ պատմությունե-
ր շատ ունեն, վոր այս կամ այն բանով նման են իրար: Նը-
րանց աստվածների անունները, ինչպես՝ Մոդիմո, Բուբանգա,
Լիկորե, Ուկուլունկուլու, Մլունգո, Կալունգա, Կատոնգա, Կա-
տոնդա, Նորո, Դենդիկ, Մունի, Նյակամ, Նյամբե և այլն—նեգրա-
կան բարբառներով նշանակում են «նախահայր», «ամենավազ,
այլև «յերջանկություն» և «ստեղծիչ», «արարիչ»:

Չուլուաների աստված Ուկուլունկուլուն Իտոնդա աստծու
վորդին է: Նա դուրս է յեկել քառսից և այնտեղից դուրս կան-
չել մարդուն, հետո ծառերին, ապա բոլոր կենդանիներին: Ա-
շանթի ցեղը հավատում է, վոր այդ աստվածն Ոգոմանկանա
անունով բարձրացել է յերկինք, ուզեցել են մարդիկ եւ նրա հե-
տևից գնալ, իրար ուսի կանգնելով սկսել են յերկինք բարձրա-

նալ, բայց գլորվել են (Բաբելոնի աշտարակաշինությունը), Մադագասկարի սակալավա ցեղի հավատալիքների հաժաձայն՝ աշխարհս յերկու աստված են ստեղծել, — ամբողջ բարին՝ **Ջանխո-րք**, ամբողջ չարը՝ **Նյանգան**: Բայց ել ճանապարհորդը զրի յեռակ դինկա ցեղի ավանդությունը, աշխարհի ստեղծագործության յերգը.

«Այն ուր, յերբ աստված ստեղծեց առարկաները, ստեղծեց նա արեւը — և արեւը բարձրացավ ու իջավ և կրկին դարձավ. նա ստեղծեց լուսինը — և լուսինը մայր մտավ ու իջավ և նորից դարձավ. և ստեղծեց նա աստղերը — և աստղերը մայր մտան ու իջան և նորից դարձան. նա ըստեղծեց մարդուն, և մարդը պնաց, իջավ յերկիր, բայց ել չդարձավ»...

*
* *

Աշխարհի ստեղծագործության պատմությունն ըստ **Իրաճառեան** աստվածաշունչ «Ալիստա»-յի.

Այսպես ստաց **Ահուրա-Մազդան** (Որմողղը, սուրբ **Զարդոշտին** (Զրադաշտ, Զարաթուստրա)).

— Յես ստեղծեցի, ո՞վ **Զարդոշտ**, աշխարհ աշնտեղ, ուր վոչինչ գոյություն չուներ: Յեթե յես նրան չստեղծեյի, աշխարհը կդառնար անեյություն:

Այդ աշխարհին հակառակ՝ **Ահրիմանն** ստեղծեց մի ուրիշը, մեռած, վորի մեջ կար միայն յերկու ամբամիս և տասը ձմրամիս, յերկրի վրա ամեն ինչ սառչում էր, և ցուրտը չարիքի հիմքն էր:

Այն ժամանակ յես ստեղծեցի գառնը (դրախտը), յերկրի վրա ամենագեղ վայրը. աշնտեղ վարդերն են սփռված, զմրուխտե փետուրներով թռչուններն են բնակվում:

Այն ժամանակ **Ահրիմանն** ստեղծեց միջատներին, վորոնք սպանում են կենդանիներին ու բույսերին, և այլն: Լուսավոր աստված **Ահուրա-Մազդայի** (Որմողղի) ամենմիտարարածին նրա հակառակորդ **Ահրի-Մանյան** (**Ահրիմանը**) հակադրում է իրանը և բանը փշաջնում:

(Քիչ հետո աշնտեղ կմահաբերենք սլավոնների ստեղծած պատմվածքը, վոր շատ նման է իրանցիների հին պատմվածքին):

*
* *

Բուդդհայականներին (**հնդիկներին**): Յերբ Բուդդհայի աշակերտ **Անանդան** իր ուսուցչից հարցնում է յերկրաշարժի պատճառների մասին, Բուդդհան պատասխանում է. «Անանդա, մեծ յերկիրը հաստատված է ջրի վրա, ջուրը հողմերի վրա, իսկ այդ քամիներն առայժմ հանդչում են տարածության մեջ: Յեւ անա այն ժամանակ, յերբ հզոր հողմերն սկսում են փչել, ջրերը յերերով հզոր հողմերից, շարժվող ջրերից դոգում է յերկիրը:

Մի ուրիշ սուրբայում (գլխում) բրահմին Կաթիոպան բացատրում է.

— Ինչի՞ վրա յի հանգչում յերկիրը:

— Ձբային շրջապատի վրա:

— Իսկ շրջապատը:

— Քամու:

— Իսկ քամին:

— Յեթերի:

— Իսկ յեթերը:

— Դու համազանց հեռու յեզ գնում, ով քրահմին: Յեթերը վռչմի բանի վրա չի հանգչում, նրան վռչմի բան չի բռնում-սլահում: (Կրոնի և ետիկայի ենցիկլոպեդիա, Ջեյմս Հեյստինգս, հ. 4):

* *

Մեկտիկա: Վաղ ժամանակներում աստվածները ժողովվեցին Տեոտիխուական պարզելու, թե ով պետք և կառավարի աշխարհը և ով պետք է լինի արև (լույս), վորովհետև դեռ ցերեկվա լույս չկար: Տեկուցիստեկատլ անունով աստվածությունն առաջարկեց, վոր ինքը կլուսավորի աշխարհը: Աստվածների մեջ նրան ոգնական չճարվեց, ամենքը մերժում էյին, թագնվում էյին: Վերջապես համաձայնեց նախառատուինը: Կրակ արին և յերկուսն ել զոհ մատուցին: Ապա արարողական զգեստներ հագան: Նրանց դրին խարույկի յերկու կողմում: Առաջ մտավ նախառատուինը, հետո Տեկուցիստեկատլը: Մնացած աստվածները նստել էյին շուրջը և սպասում էյին բոցավառվածների խարույկից դուրս գալուն: Հանկարծ յերկինքը շառագունեց և յերկվաց ցայգի լույսը: Աստվածները ծունկ չոգեցին, նրանք չգլտեյին, թի վորտեղից է դուրս գալու լուսատուն, վորովհետև շուրջանակի լույս էր: Վերջապես արևելքում յերևաց նա ճաճանչափայլ: Հետո հայտնվեց լուսինը: Նա ել այնպես լուսավոր էր, ինչպես արևը: Աստվածները վիճաբանեցին նրանց առաջնության մասին: Այդ ժամանակ նրանցից մեկը վազեց ու ապտակ հասցրեց Տեկուցիստեկատլի յերեսին, և նա դարձավ լուսին: Վորովհետև աստվածները կռվել էյին, դրա համար ել քամին կոտորեց բոլոր աստվածներին: Բայց արևը դեռ անշարժ կանգնած էր. այն ժամանակ հողմն այնպես կատաղի փչեց, վոր արևին ստիպեց սկսել իր ճանապարհորդությունը յերկնքի յերեսով: Այդպիսով բաժանվեցին իրարից լուսինն ու արևը:

* *

Ֆրենեբը հնադարյան ավանդություններ ունեն, վորոնք ժողովված են այսպես կոչվող «Կալեալե»-ում: Այդ գրքի հենց առաջին գլխում (բունում) պատմվում է անարատ կույս Իմատարի (կամ Կավեյի) մասին, վոր ջրի մայր-արարիչն է, ողի աղջիկը, արարչագործության աղջիկը, վոր ջրերի անդունդների վրա շատ յերկար թափառումից հետո ցած էր իջել:

«Յեվ ցած է իջավ ի կույսն անարատ,

Փարվեց ջրի ալիքներին,
 Ջրի հըստակ ու ջինջ մեջքին,
 Ու հոսանքին տըրվեց ազատ:
 Յեվ կատաղի քամին փըչեց,
 Արևելքից բուք բարձրացավ,
 Պղտոր փըրփըրով ծով սևացավ,
 Ալիքն ալքի գլխին բազմեց.
 Տարուբերեց հողմն աղջըկան,
 Յեվ ալիքներն հարվածեցին,
 Տարուբերեց այդ աննըման
 կուսին ծովն իր ճերմակ մեջքին:
 «Քամին նրա մեջ պըտուկ փըչեց,
 Երան լըցրեց-ուռցրեց սեվ ծով.
 Յեվ կրում եր կույսն արգանդի մեջ
 Այդ ծանրացած բեռն իր՝ թախծով՝
 Ամբողջ մի յոթն հարյուր տարի,—
 Ինն մարդկային կյանքի շրջան,—
 Բայց չեր ծնվում, դուրս չեր գալի
 Դեռ չստեղծված այդ յերեխան»...

Ապա կուսի ծնկներին մի թռչուն ե նստում և վեց հատ
 վոսկի ձու ածում: Յերբ Լուսնատարը շատ շոգում ե, ծունկը
 շարժում ե, ձվերն ընկնում են ծովը և կոտորվում:

«Չըփըչացան տղամում ձվերն,
 Աղի ջրում նրա բեկորներն,—
 Այլ հրաշալի բաներ դառան
 Այն կտորներն ու կյանք առան.
 Չըվի ստորին մասից՝ խոնավ
 Մեր մայր-յերկիրը դուրս յեկավ,
 Վերին մասից յերկրի համար
 Գոյացավ բարձր յերկնակամար,
 Յեվ դեղնուցի վերին մասից
 Արևն ելավ շող-շող ամբիծ,
 Ճերմակուցի մասից՝ վերին
 Յեկավ շարմաղ պայծառ լուսին,
 Չըվի մասից խայտաբղետ
 Աստղերն ելան մի-մի վառ կետ,
 Չըվի ժթին մասից՝ տըրտում
 Յերևացին ամպերն ողում»:

Ըստ Առն-անի (Մոհամմադի ուսմունքի) ահա թե ինչ ե
 ասվում աշխարքի ստեղծագործության մասին:

«Տես, ամեն առարկա մենք ստեղծել ենք, վորոշ նշա-
 նակությամբ: Յեվ մեր հրամանը—մի յե, նման արտեա-
 նունքի միայն մի խփումին (Սուրա—59 գլ.):

«Ճշմարիտ ե, մենք ստեղծել ենք յերկինքն ու յեր-

կիրը և ամենը, ինչ վոր նրանց արանքումն է, վեց որում,
և հոգնածությունն չի տիրել մեզ (Սուրա 50):

Նա ստեղծել է յերկինքն առանց տեսանելի սյուների
և յերկրի վրա յե նետել անշարժ լեռները, վարպետի յերկիրը
ձեզ հետ միասին չտատանվի, և նրա վրա տարածել է կենդա-
նիների բոլոր տեսակները. և յերկնքից ընկել են ջրերն ու
աճեցրել ամենմի տեսակից մի դույզ (Սուրա 31):

Մարդիկ, միթե դուք կարո՞ղ եք ստեղծել այն յեր-
կինքը, վոր նա յե կառուցել (Սուրա 79):

Նա կառուցել է նրա տանիքը և այդ ուղիղ է արել,
Յեվ նա հրամայել է, վոր նա գիշերը խավար լինի,
Յեվ հրամայել է լույսին դուրս գալ նրանից ցերեկը,
Յեվ դրանից հետո նա տարածել է յերկիրը
Յեվ հրամայել է ջրերին ու խոտերին դուրս գալ նրանից,
Յեվ նա խիստ ամրացրել է սարերը
Չեր և ձեր խաշների հարմարության համար:

Դա նա յե, վոր ստեղծագործությունն է կատարել ա-
ռաջին անգամ: Դրանից հետո նա կրկնել է այն և դա
նրան ել ավելի հեշտությամբ է աջողվել (Սուրա 30):

* * *

Վերջապես մակարեղենք սլավոնական ավելի նորագույն
ավանդությունը, վորի մեջ պատմվում է արդեն աստվածաշն-
չային պատմությունն աշխարհի ստեղծագործության մասին:

«Յերբ վոր Տերը մտքումը դրավ աշխարհս ստեղծել
(պատմում են Ուկրայինայում), Սատանայել հրեշտակա-
պետին ասում է.— Հը՛. վճնց կլինի,— ասում է,— հրեշտակա-
պետս, գնանք աշխարհ ստեղծենք: Գնում ենք՝ գնանք, Տեր,
— ասում է և Սատանայելը: Են իք, նրանք գնացին ծովը.
Ենպես մոլոր են վոր, վոնց վոր ասում են՝ անդունդ: Իք,
Աստված ել ասում է Սատանայելին,— Տեսնո՞ւմ ես ես
անդունդը:— Տեսնո՞ւմ եմ, Տեր:— Դե գնա, — ասում է,— եդ
անդունդի են հասավը ու ինձ համար հետեղից մի բուռ
ավազ հանիր բեր. բայց տես— հենց վոր վերցնելու լինես,
քեզ ու քեզ ասա— վերցնում եմ քեզ, ո՞վ հող, տիրոջ ա-
նունով:— Շատ բարի, Տեր: Յեվ Սատանայելը տակ արավ
ուղղակի անդունդը, կանգնեց հենց ավազի վրա, ու նա-
խանձը շարժվեց:— Չե, — ասում է, — Աստված, յես իմ ա-
նունն ել կխառնեմ. ի՞նչ կլինի վոր մի հետ քոնն ել լինի,
իմն ել: Ու վերցնում է ավազն ու ասում.— վերցնում եմ
քեզ, ո՞վ հող, Տիրոջ ու իմ անունով: Ասեց: Հենց վոր ու-
ղում եր դուրս բերել, ջուրն սկսեց նրա ձեռքից ավազը
դուրս տալ: Են բուռն ենպես և հուպ տալիս վոր, բայց
Աստծուն ի՞նչ կարող ես անել, հետո ջրից դուրս պրծնելով
տեսնում է, վոր ել ավազ չկա, ենպես վոր կասես իսկի չի յել
յեղել— ջուրն ենպես եր սրբել տարել:— Հարամզագություն

մի անիլ, Սատանայել, —ասում է Տերը, —ելի գնա, միայն
թե քո անունը մեջը մի խոթիր: Ելի գնաց Սատանայելն
ու ասում է. —վերցնում եմ քեզ, հոգ, Աստուծու և ելի հենց
իմ անունով: —Ավագն ելի կորավ: Իսկ յերրորդ անգամար-
դեն Սատանայելն ասաց. —վերցնում եմ քեզ, հոգ, Տիրոջ
անունով, —և, իբ, արդեն տանում է ու բռնն ել իսկի հուպ
չի տալիս, հենց ենպես ամի մեջ բաց-բաց տանում է, վոր
ջուրը սրբի տանի: Բայց իդուր, վոնց վոր ձեռը լիքը վեր-
ցրել էր, ենպես ել տարավ Աստուծու մոտ: Ու Տերն եղ ա-
վաղը վերցնելով՝ ման է գալիս ծովի վրայով ու շաղ է
տալիս, իսկ Սատանայելը ձեռքն է լիղում. —մի պատառ
ել, —ասում է, —գանգամ ինձ համար, իսկ հետո կհանեմ:
Իսկ Տերը շաղ տվավ պրծավ ու. —հը, —ասում է, —Սատա-
նայել, ել ավաղ չկա՞: —Դե չկա ելի, Տեր: —Հիմի՝ հարկավոր
է որհնել, —ասում է Տերը, ու որհնեց հողն ամեն կողմից,
ու հենց վոր որհնեց, Սատանայելի բերանի հողն ել սկսեց
աճել. մեծանալ: Իք, ենքան մեծացավ, վոր բերանին հա-
սավ ու ելի ինքնիրան աճում էր. հետո ենքան աճեց,
վոր շրթունքն ել պատռեց: Եղ ժամանակ Աստված ասում
է. —թքիք, Սատանայել: Են ել սկսեց թքել ու խորխել,
ու վորտեղ վոր թքում էր, ենտեղ սարեր կյին բուսնում,
իսկ վորտեղ վոր խորխում էր, ենտեղ ել ժայռեր կյին
բուսնում:

Ուրիշ ավանդության համաձայն՝ դրանից առաջացան ճա-
հիճներ, ամայի ու անպատուղ տեղեր:


«Այ թե ինչից է, վոր մեր յերկիրն ուղիղ չի: Ելի ասում
են, վոր եղ ժայռերն ու սարերն՝ աստված գիտե՝ թե ինչ-
քան կաճելին, յեթե Պետրոսն ու Պողոսը նրանց չանիծե-
լին. դրանից է, վոր ել չեն աճում: Հետո Տերն ասում է եղ
Սատանայելին. —հիմի, —ասում է, —մնում է, վոր հողն որհ-
նենք, դրանից հետո թող ինչքան ուղում է աճի, մենք ել մի
քիչ կքնենք: —Շատ բարի, Տեր, —ասում է Սատանայելը:
Ու պառկեցին վոր քնեն: Տերը քնում է, իսկ Սատանայելը
միտք է անում, վոր հողից վերցնի. ու, իք, բուռ անելով
վաղում է (վոր ջուրն ածի), բայց ծով չկա. կեսգիշերն
ընկավ, ու ել բան չի յերևում: Աշխարհիս չորս կողմը ման
յեկավ, վոր մի տեղ ծով չկա ու չկա... տեսնում է վոր բան
չի տեսնում, հողը տանում է Աստուծու մոտ ու ինքն ել մո-
տը պառկում: Միքիչ պառկելով՝ Աստուծուն վեր է կացնում.
—վեր կաց, Աստված, հողն որհնիր: Աստված ել ասում է
նրան. —Մի տխրիլ, Սատանայել, իմ հողն որհնված է.
յեռ ես գիշեր եմ որհնել նրան չորս կողմից ել»:

Ամբողջ տասնյակ դրքեր լիքն են աշխարհի ստեղծագոր-
ծության ավանդություններով: Վրձանց համար ծիծաղելի չե,
թե ինչ են կարծում նեպրերը կամ՝ գիցուք՝ մեկսիկացիները, վո-

մանք փառավորապես կծիծաղեն աշխարհի ստեղծագործության ուկրայինական պատմվածքից: Բայց ի՞նչ է յեղել ուկրայինացիներին: Դե հենց այն, ինչ վոր հրեյաններին: Հրեյաները կարգացել կամ լսել են բարեկացիներից նրանց մոտ գերի յեղած ժամանակ աշխարհի ստեղծագործության պատմվածքը: Այդ պատմվածքը բերանից-բերան հաղորդել են, մինչև վոր մեկը գրի յե առել այն: Այդպես ել ուկրայինացին լսել է աստվածաշնչի պատմվածքը, հետո մի տերտերի պատմվածքը, վորը հնարել՝ կցել է դրան սատանային (Սատանայել), և ստացվել է մի բոլորովին առանձին պատմվածք:

Յեվ հիրավի,—ինչ վոր մաորիների կամ նեգրերի պատմվածներում ավելի քիչ չի սրբությունն ու ճշմարտությունը, քան աստվածաշնչային՝ աշխարհի ստեղծագործության մասին կիսավայրենական պատմվածքում:

Մենք դիտմամբ բերինք այդ միջանի պատմվածները: Դրեք նրանց իրար կողքի, համեմատեցեք, ընտրեցեք վորը վոր կուզեք. ինչպես սոցիալիզմի ուսուցիչ Ֆրիդրիխ Ենգելսն է ասում, նրանք բոլորը միատեսակ կազմում են մարդկանց գլուխներում իրանց շրջապատող աշխարհի ֆանտաստիք (յերևակայական) արտացոլումները:



ՅՈԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՌԱՋԻՆ ՊԱՏՎԻՐԱՆԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆԸ

Կարդացե՛ք աստվածաշնչի առաջին և յերկրորդ գլուխը և դուք կտեսնեք, թե ինչպես էյին հրեյական Ելոյիմ-Յահվե աստվածներն ուրախանում այն բոլորով, ինչ վոր իրանք ստեղծել էյին: Աստված ամեն որ իր գրպանատետրում նշանակում էր, թե ի՞նչ լավ է շինել աշխարհն ստեղծագործության և՛ առաջին, և՛ յերկրորդ, և՛ ամբողջ վեց որը: Աստված տեսնում էր այն բոլորն, ինչ վոր ինքն ստեղծել էր և ահա «բանը շատ լավ է գնում» (1—31): Յեվ վորովհետև նա հզոր աստված է, վորի խոսքով դուրս էյին գալիս բներից գազանները, սողունները, դուրս լողում ձկները, և դուրս թռչում հավքերը, ծլում ծառերն ու խոտերը,— ուստի աստվածաշունչը կարդացողը միանգամից այնպես է տրամադրվում, վոր աստված իսկապես ամեն բան լավ է շինել: Յեվ հանկարծ բանից դուրս է գալիս, վոր դուրս է յեկել բոլորովին վատ: Յերրորդ գլուխն սկսվում է նրանից, վոր իժն «աստծու ստեղծած դաշտային բոլոր դազաններից ամենախորամանկն էր: Յեվ ո՞նց ասաց կնոջը.

—Ճիշտ է վոր աստված ասել է, թե դրախտի վոչ մի ծառի պտուղը չուտեք:

Յեվ ասաց կինն ո՞նց.

—Ծառերի պտուղները մենք կարող ենք ուտել. միայն այն ծառերի պտուղները, վոր դրախտի մեջտեղն են, աստված ասաց՝ չուտեք դրանց և չդիպչեք դրանց, վոր չմեռնեք:

Յեվ ասաց ո՞նց կնոջը.

—Ձե, չեք մեռնիլ, այլ աստված իմանում է, վոր այն որը, վոր դուք կճաշակեք դրանց, ձեր աչքերը կբացվեն, և դուք կլինեք իբրև աստվածներ, վորոնք ճանաչում են չարն ու բարին»:

Տեսնո՞ւմ եք՝ ինչ վատ դուրս յեկավ: Ո՞նց բոլոր գազաններից ավելի խորամանկ յերևաց: Բայց ո՞վ էր նրան խորամանկ շինել: Ախր աստվածաշնչի ասելովն՝ այն բոլոր կենդանիներն ու ամեն բան, ինչ վոր ստեղծված էր աշխարհիս յերեոին, աստված է ստեղծել, նշանակում է թե ո՞նց առանձին խորամանկություն և պարգևել հենց այդ աստվածը (Ելոհիմը), կամ ավելի ճիշտը՝ հրեյական աստվածները:

Յերկրորդ գլխում պատմվում է այն մասին, վոր այդ աստվածներն այգի տնկեցին ու մարդուն ասացին. «Այգու ամեն ծառից կեր, բայց բարու և չարի գիտության ծառից չուտես, քանզի այն որը, վոր կճաշակես նրանից, մահով կմեռնես (II, 16—17): Իսկապես դա ի՞նչ պատմություն է ախր: Դա ի՞նչ ո՞՞նչ է,

վոր մոլորեցնում ե կնոջը: Յեւ յերևի հրեյական աստվածներն ստեղծել են կնոջն եւ այնպիսի բնավորությամբ, վոր նա դուրս ե յեկել մոլորությանն ավելի յենթարկվող, վոր ոձը մոտեցել ե նրան: Յերբ սկսում ենք հարցութորձ անել տերտերներին հենց այդ ոձի մասին ե առաջին մեղանշումի հանգամանքների մասին, — տերտերները մեզ բացատրում են, վոր ոձ ասելով պետք ե հասկանանք սատանա, վոր յերևացել ե Յեւային ոձի կերպարանքով: Բայց ախր ծննդոցի վոչ առաջին, վոչ ել յերկրոյ գլխում սատանայի մասին մի խոսք անգամ չկա: Եւ վժրտեղից ե դուրս յեկել սատանան ե ո՞վ ե ստեղծել սատանային, յերբ, ե ի՞նչ զահրումարի համար ե ստեղծվել սատանան: Տերտերները սըրբազան գրքի զանազան տեղերի վրա հիմնվելով, բայց ավելի ճիշտն ասած՝ ուղղակի կրկնելով զանազան վայրենի ու կիսավայրենի ժողովուրդների վարդապետությունը դևերի ու սատանաների մասին, բանն այնպես են բացատրել, վոր սատանաներին ել աստված ե ստեղծել այնպես, ինչպես հրեշտակներին: Մոսկվայի ու Կոլոմնայի միտրոպոլիտ Մակար յեպիսկոպոսն իր ժամանակին կազմել ու տպագրել ե տերտերների համար սեղանի դնելու մի գիրք «Ուղղափառ-դավանաբանական աստվածաբանություն» անունով: Այդ հեղինակության մեջ Մակար յեպիսկոպոսն ինքը վոչինչ չի հնարել իհարկե: Նա կրկնել ե միմիայն այն, ինչ վոր իրանից առաջ 1000 տարի քարոզել են նույնպիսի շարլատաններ, խաբեբաներ, ինչպիսին Մակար միտրոպոլիտն ե: Մակար միտրոպոլիտը մեզ պատմում ե մի հեքյաթ այն մասին: Թե ինչպես աստված իր կարիքների համար ծառաներ ստեղծեց: Այդ ծառաներին նա անվանեց հրեշտակներ: Տերտերները վիճում են այն մասին, թե վժր որ են ստեղծվել հրեշտակները: Վոմանք առում են, թե առաջին որը, վոմանք ել՝ թե ստեղծագործության վեց որից հետո: Տերտերները յերկար վիճում եյին այն մասին, թե մարմին ունե՞ն հրեշտակները: Նրանցից միքանիսը պնդում եյին, թե հրեշտակները մարմին ունեն: Այդպես Հուստինյանը, Որիգենը, Մեթոդիոսը ե Թեագնոստն ասում եյին, թե հրեշտակները մարմին ունեն: Բայց ի՞նչ սեռի յե այդ մարմինը: Նրանք յերկար վիճում եյին այն մասին, արական ե, թե՞ իգական, իսկ հետո վճռեցին, վոր հրեշտակներն անսեռ են (ուրիշ խոսքով՝ յերկսեռ—հերմաֆրոդիտ): Բայց քրիստոնեյական քահանաների մեծամասնությունն արդեն ամաշում ե այդ հասկացողությունից ե ներկայումս հրեշտակներին անմարմին ե պատկերացնում: Հրեշտակներն աստիճանների յեն բաժանվում: Այդ հրեշտակների թիվը շատ մեծ ե: «Յերևակայիր—թե վժրքան բազմաթիվ են հոռմեյական ժողովուրդները, յերևակայիր, թե վժրքան բազմաթիվ են մյուս կոպիտ ժողովուրդները, վոր այժմ գոյություն ունեն ե ինչքան մեռել են հարյուր տարվա ընթացքում, յերևակայիր, թե վժրքան են թաղվել հազար տարվա ընթացքում. յերևակայիր մարդկանց Ադա-

մից սկսած մինչև այսօր. շատ ե դրանց բազմութիւնը, բայց դա դեռ քիչ է՝ համեմատած հրեշտակների հետ, վոր ավելի շատ են: Նրանք իննսուն ինը վոչխար են, իսկ մարդկային ցեղը միայն մի վոչխար է. տեղի ընդարձակութեամբ պետք է դատել նաև բնակիչների բազմութեան մասին: Մեր բնակված յերկիրն իբրև մի կետ է, վոր գտնվում է յերկնքի միջակետում: Ուստի նրա շրջապատող յերկնքը նույնքան ավելի շատ բնակիչներ ունի, վորքան վոր շատ է տարածութիւնը, իսկ յերկնքների յերկնքը բնակիչների անընդգրկելի թիվ է պարունակում:»

Հրեշտակները բաժանվում են աստիճանների: Մակար Միտրոպոլիտն ասում է, թե ուղղափառ յեկեղեցին պետք է հետևի սուրբ Դիոնիսիոս Արիոպագացուն, այն է՝ վոր «հրեշտակները բաժանվում են ինը դասի, իսկ այս ինը—յերեք աստիճանի: Առաջին աստիճանում գտնվում են նրանք, վորոնք ավելի մոտ են աստծուն, ինչպես որինակ՝ աթոռակիցները, քերովբեներն ու սերովբեները: Յերկրորդ աստիճանում—իշխանութիւնները, տիրապետութիւններն ու ուժերը (զորքը): Յերրորդում—հրեշտակները, հրեշտակապետները և սկզբնականները»:

Միթե՞ ձեզ ուղղակի սոսկում չի պատում, յերբ մտածում եք, վոր միլիոնավոր մարդիկ սովորում են յայն աշխարհի ափեղցփեղութիւններ, խելքի փշոցներ, տխմարութիւններ: Յերևակայեցեք միայն—աստված ստեղծել է նրանց մասամբ իր զվարճութեան համար, մասամբ նրա համար, վոր առաքյալներ ունենա հանձնարարութիւնների համար. ախր չե՞ վոր նա վոչ տելեֆոն ունի, վոչ հեռագիր, վոչ բադիո, վոր մարդկանց իր կամքը հաղորդի: Ե՛, դոնե թուլցիկներ լինեյին, տպագրեր ու յերկնքից ցած թափեր իր կամքը հայտնելու համար: Բայց ախր նա իսկի տպարան ել չունի, իսկ բոլոր հրեշտակներն ել անգրագետ են, վոչ գրել գիտեն, վոչ կարդալ, վոչ ել տպել: Ըստ հրեյական վարդապետութեան՝ այդ հրեշտակներն ուրիշ բան ու գործ չունեն, միայն ամբողջ գիշերն ի բուն փառաբանութիւն են յերգում աստծուն: Դրանից յերևի այնպիսի դալմադալ ե տիրում, վոր հրեյական սլառավ աստվածը վաղուց պիտի խլացած լինի և չի լսում բարբիների ու հավատացյալների վողբերը, վոր ուղղվում են իրան: Մահմեդականներն ել են յերկնքում բնակեցրել միլիարդ (նախապատերազմյան թվանշաններով) հրեշտակներ, վորոնք փառաբանում են: Վորովհետև յերկրի վրա այնպիսի կազմ է յեղել, վոր ցարի, թագավորի, սուլթանի, կայսրի շուրջը մինիստրներ, մեծամեծներ ու զանազան աստիճանի աստիճանավորներ կային, ուստի յերկնքում ել տերտերները յերկնային թագավորի համար գահ են շինել այն ձևի, ինչ վոր յերկրինն է: Նույն աստիճանները, նույն աստիճանավորներն՝ սկսած առաջինից մինչև տասնուչորսերորդ դասը:

Ե՛, բայց ելի սատանան վորտեղից է դուրս յեկել: Բանից

դուրս և գալիս, վոր ուղղափառ յեկեղեցու վարդապետության համաձայն՝ աստված սատանաներին հրեշտակներ և յեղել ստեղծած (լավ հրեշտակներ են, վոր քաջքեր են դարձել): Նրանց բարի յե ստեղծած յեղել, իրանք են չար դարձել: Կարող եք այդ վարդապետությունից ավելի վայրենի բան յերևակայել: Ամենազոր և ամենագետ աստված հրեշտակներ և ստեղծում. միքիչ հետո այդ հրեշտակներն սկսում են աստծուն ել բանի տեղ չդնել, հայտնի չի թե վորտեղից՝ հպարտություն են ձեռք բերում, և աստված նրանց յերկնքից ցած և գլորում ու սատանաներ դարձնում, վորոնց ձեռքն և տալիս մարդուն թե կենդանության ժամանակ, թե մահվանից հետո: Նա ահագին ուժ և տալիս այդ սատանային: Յերբեմն այդ դեռ—սատանան մինչև իսկ հաղթում ել և աստծուն: Չարը հաղթում և բարուն, և մարդը մեղք և գործում:

Բայց վորտեղից և այդ վարդապետությունը: Դա հո հին ուսմունքն և յերկու սկզբունքի— բարու ու չարի, լույսի ու խավարի կուլի մասին աշխարհում: Հին կրոնները լիքն են դրանցով: Նրանց մեջ աստվածներից վոմանք պատկերացվում են բարի, վոմանք— չար, վոմանք—հրեշտակներ, վոմանք—սատանաներ, միքանի աստվածների մեջ նրանք մարմնացնում են իրանց համար աջողակ բնական ուժերը, մի քանիսի մեջ—թըշնամի ուժերը: Նրանք չեն հասկանում բնության մեջ գոյություն ունեցող պայքարը, նրանց այնպես և թվում, թե յերկու ուժեր— բարին ու չարը—կուվում են իրար հետ: Իսկ տերտերների համար այդպիսի «հեքյաթը» շատ ձեռնտու յե, և նրանք ստեղծել են մի ամբողջ ուսմունք այն մասին, թե ինչպես զանազան կախարդություններով, աղոթքներով, բուրվառներով, պատկերներով, մոմերով, խաչով և ուրիշ նյութերով ու նշաններով կարելի յե հաղթահարել չար ուժը և բարուն հաղթանակել տալ: Չե՞ վոր այդ կախարդության համար, վորի մասնագետներն են դարձել նրանք, հավատացյալները նրանց վճարում են: Ախր վոչ միայն ուղղափառները, այլ և ուրիշ յեկեղեցիներ, հրեյականն ու մահմեդականը, աշխարքս լցրել են զանազան շեյթաններով, շեյդերով (քաջքերով), վորոնք հսկում են ամեն մարդու այս աշխարհում, սպասում են նրա մեղավոր մարմնին նրա մահից հետո, վորպեսզի նրան չարչարեն ու տանջեն քրիստոնեյական դժոխքում:

Այդպես ուրեմն, սատանաներն առաջ ստեղծված են յեղել իբրև հրեշտակներ: Բայց յե՞րբ են նրանք սատանաներ դարձել: Դժբախտաբար այդ մասին վորոշակի տեղեկությաւներ չեն ներկայացրել տերտերները, վորքան ել վոր շարլատանություն են արել. բայց դրա տեղակ նրանք վորոշ գիտեն, թե ինչպես են ընկել չար վոգիները: Բոլորը միանգամից են ընկել: Վոչ,— պատասխանում և յեկեղեցու ուսուցիչը:—Առաջ ընկել և մենակ գլխավորը, իսկ հետո գրավել և իբ հետևից բոլոր մնացածներին:

Յեւ, իհարկե, հրեյական աստվածն եւ վճռակցից եր կարող հետեւել նրան, վոր այնպես շտապ-շտապ ստեղծել եր: Հանաք բան չե—վեց որում ստեղծել ամբողջ աշխարհն ու միլիարդից ավելի հրեշտակ: Ե՛, իհարկե, չի նկատել, թե ինչպես ե ստեղծել այնպիսի խռովարարի, վոր հետո քաշեց իր հետեից այն բոլոր մնացածներին, վորոնք չեյին ուզում հպատակվել հրեյական պառավ աստծուն:

Սուրբ հայրերը շատ են վիճել այն մասին, թե ինչացո՞ւ ե յեղել առաջին ընկնող հրեշտակը: Վոմանք պնդել են, վոր նա բոլոր հրեշտակներին մեջ ամենակատարյալն ե յեղել, վոմանք ել նրան նախավերնային վոգու աստիճան են տվել, վորին յենթարկվելիս ե յեղել հրեշտակներին մի ամբողջ շարք: Դեհ, նա ել հենց այդ շարքն ե ապստամբեցրել: Յեւ նույնիսկ այն մասին, թե ի՞նչ մեղքով են ընկել սատանա դարձած այդ հրեշտակները, սուրբ հայրերը հաստատ տեղեկություններ ունեն: Նրանցից վոմանք հաստատում են, վոր այդ հրեշտակներն անբնական հարբերություններ են ունեցել մարդու աղջիկների հետ, հենվելով աստվածաշնչի այս խոսքերի վրա (Մ, 2). «Այն ժամանակ աստծու վորդիները տեսան մարդկային աղջիկներին, վոր նրանք սիրուն են և նրանց կին առան, ով ում վոր գիտենում եր: Ուրիշները հավատացնում են, վոր հրեշտակներն ընկել են շատ ավելի առաջ, և վոր նրանց մեղքը նախանձն եր (բայց նախանձն թվ եր պարգևել նրանց): Վերջապես ուրիշներն ել հավատացնում են, վոր առաջին մեղքը հպարտությունն ե յեղել (իսկ հպարտությունը վորտեղից ե): Սատանաները վճռեան ժամանակ են սատանա մնալու, նրանք ելի հրեշտակ կդառնան, թե՛ չե: Յեկեղեցին դրան պատասխանում ե, թե սատանաները դատապարտված են մշտական տաժանակրության և միևնույն ժամանակ նրանք հավիտյան կատարում են մարդկանց չարչարողների պաշտոն նույն ամենակարող աստծու կամքով, վորովհետեւ ախր առանց աստվածային կամքի մի մազ ել չի ընկնում մարդու գլխից:

Իսկ հիմա դառնանք մարդու մեղսագործությանը: Նշանակում ե սատանան, վոր ստեծվել եր յերկրի վրա իբրեւ հրեշտակ, տերտերների ասելով ոձի մեջ եր մտել ու Յեւային համոզել բարու և չարի գիտության ծառի խնձորից ճաշակելու: Ուշադրություն դարձրեք, սատանան չի ասում «աստված», այլ ասում ե՝ «դուք կլինեք իբրեւ աստվածներ», բարին ու չարը ճանաչող: Ասենք հենց ամբողջ ծննդոց գրքում ել թե՛ առաջին, թե՛ յերկրորդ, և թե՛ ուրիշ շատ գլուխներում, ուր վոր աստված «ելոյիմ» խոսքով ե կոչվում, խոսքը միակ աստծու մասին չի, այլ շատ աստվածների, վորովհետեւ «ելոյիմ» խոսքը նշանակում ե «մեծագոր աստվածներ»: Այդ մեծագոր աստվածներն արդիւնում են մարդուն վորոշ պտուղներ ուտել: Նրանք վախենում են, վոր այն ժամանակ բոլոր մարդիկ ել իրանց կնամանվեն:

Բայց յերևում ե վոր աստվածաշնչի առաջին մարդիկը հենց սկզբից ել ապսամբներ են յեղել իրանց տերերի, աստվածների (ելոյիմի) դեմ. «Յեւ կինը տեսավ, վոր ծառը տեսքով լավ ե և աչքի համար հաճելի ու գրգռիչ - մոլորեցուցիչ, վորովհետեւ նա իմաստություն ե տալիս, և վերցրեց նրա պտուղներից ու կերավ, և տվավ իր մարդուն ևս, և նա ել կերավ, և յերկուսի աչքերն ել բացվեցին, և նրանք նոր հասկացան վոր մերկ են և թղենու տերևներ կարեցին ու իրանց համար գոտկահանդերձ շինեցին» (III, 5—6): Ուրեմն արգելված պտուղը կերան և վոչ Ադամը, վոչ ել Յեւան չմեռան: Հրեյական աստվածների—ելոյիմի—սպառնալիքը փուչ դուրս յեկավ, վախեցնելու համար ասված: Բայց միևնույն ժամանակ, ինչպես աստվածաշունչն ե պատմում, «Լսեց տեր աստծուն, վոր շրջում եր դրախտում զով որը, և թագնվեց Ադամը, այլև նրա կինն աստծու յերեսից դրախտի ծառերի արանքում. և տեր աստված կանչեց Ադամին ու ասաց. —Ադամ, այդ վորտեղ ես: Նա ասաց.—ձայնդ լսեցի դրախտում ու վախեցա, վորովհետեւ մերկ եմ—թագնվեցի: Յեւ ասաց աստված.— քեզ հմ ասաց, վոր մերկ ես: Չլինի՞ թե ծառից կերել ես, վորից յես քեզ արգելել եմ ուտել» (III, 8—11):

Ուշադրություն դարձրեք. աստվածաշնչի այդ հրեյական աստվածները մարդկային ընտանիքին արգելում են կերակրվել վորոշ ծառի պտուղներով: Նրանք այդ ծառին խորհրդավոր, հրաշագործ նշանակություն են տալիս: Հենց ճիշտ այդպես ել վայրենիներն են շատ - շատ առարկաներ համարում արգելված, տաքու, վորովհետեւ նախնական ժողովուրդները կարծում են, վոր վորոշ կենդանիների, բույսերի, քարերի և բոլոր առարկաների մեջ թագնված են աստվածներ ու վոգիներ, թագնված են բարի ու չար ուժեր, վորոնցից ե կախված և՛ կյանքը, և՛ մահը, և՛ ամբողջ գոյությունը: Աստվածաշնչի հրեյական աստվածները շատ քիչ են տարբերվում այդ վայրենիներից, նրանք ել ունեն իրանց «տաքուն»—արգելված ծառը: Այդ աստվածները պարտեզ են տնկել, վորի մեջ աշխատում են և վորը պահպանում են Ադամի ու Յեւայի ընտանիքին պատկանող մարդիկ: Իսկ այդ այգին շինող աստվածներն իջնում են նրա մեջ և այգում ման գալիս ստվերոտ ծառերի տակ, յերբ շոգ ե լինում (յերկնքում չեմ կարծում վոր անտառ լինի): Այդ աստվածները խոսում են հրեյերեն, և նրանցից Ադամն ու Յեւան կարող են մինչև անգամ թագնվել, և ամենազոր, ամենատես աստվածները վոչ մի կերպ չեն կարող նրանց գտնել ծառերի մեջ ու կանչում են Ադամին. «Ադամ, ո՞ւր ես»: Բոլորովին անհասկանալի ե, թե ամենագետ աստվածն ինչու և հարցնում Ադամից, քանի վոր տերտերների ուսմունքով ամեն ինչ պեսե ե առաջուց իմացա: Հավատացող մարդիկ ասում են. «Դա նրա համար ե, վոր Ադամին փորձի»: Լավ, ել ինչո՞ւ պեսե ե նա փորձեւ Ադամին, բանի վոր նա՝ յեթե ա-

ամենագե և՛ առաջուց պե՛տք է խմանար, թե ի՛նչ է ասելու Ադամը:

Ադամն, իհարկե, պատմության մեջ մեղքը քցում է կնոջ վրա. «Այս կինը, վոր դո՛ւ յես տվել ինձ, սա յե տվել ինձ ծառից, յես ել կերել եմ»: Ճիշտն ասած՝ Ադամը կատարելապես իրավացի չի: Յեթե ամեն բան այնպես յեղած լիներ, ինչպես աստվածաշնչումն է ասված, յեթե իսկապես աստված ստեղծած լիներ Յեվային, այն ժամանակ իհարկե, Յեվան ինչպես ել վոր լիներ, մեղքը կընկներ այդ աստծու վիզը: Դեռ ելի ուրիշ բան կլիներ, յեթե այդ աստվածը Յեվային փոքրիկ յերեխա ժամանակը հանձնած լիներ Ադամին դաստիարակելու, նա յել հիմար դաստիարակեր նրան,—հա, հն ժամանակ կասեյինք, վոր Ադամն է մեղավորը. թե չե նա Յեվայի հետ շատ-շատ մի յերկու որ եր ապրել ու են ել դեռ բոլորովին միամիտ ժամանակը, վորովհետև բարու ու չարի գիտության ծառից դեռ ճաշակած չեր յեղել:

Հրեյական աստվածն սկսում է Յեվային հարցուփորձ անել. — «Ես ասաց տեր աստված կնոջը.— այդ ի՛նչ բան ես արել դու: Կինն ել ասաց— ո՞նք ինձ խաբեց, յես ել կերա»: Յեվան ել է իրավացի, վորովհետև խաբելու ընդունակությունը հո ուրիշը չեր ստեղծել, հենց այդ միևնույն աստվածն եր ստեղծել, վոր սեղծել եր ամեն բան՝ աստվածաշնչի ասելով: Լսելով Յեվայի միանգամայն խելացի պատասխանը, վոր պետք է ամաչեցնե՛ր այդ Ելոյիմին (յեթե նա պարզապես կարգին մարդ լիներ), վորովհետև այդ հենց նա ինքն եր ուղարկել պրովոկատոր ոձին, —այդ աստվածն սկսում է հիշոց տալ ու անիծել հենց իր ստեղծածին: «Յեվ ասաց տեր աստվածն ոձին.— նրա համար, վոր դու այս բանն արիր—անիծված կլինես դու բոլոր անասունների ու դաշտային բոլոր գաղանների առաջ: Դու փորիդ վրա ման կգաս և հող կուտես քո կյանքի բոլոր որերում»: Ա՛յ քեզ Ելոյիմի սարսափելի անեծք: Բայց իսկապես յեթե մենք ուսումնասիրենք կենդանական աշխարհը, կտեսնենք, վոր ո՞նք այնքան ել անիծված չի ու բնությունից զրկված, վոր նա, ավելի արագաշարժ, ավելի ճարպիկ, ավելի ուժեղ է շատ ուրիշ կենդանիներից, շատ հարմարված և շրջապատող հանգամանքներին և իսկի յել անիծված չի: Ուղղակի ծիծաղելի է կարդալ, թե ինչպես կատաղած վայրենի Ելոյիմը խոստանում է ոձին, վոր նա հողով է սնվելու կյանքի բոլոր որերում: Մինչդեռ ո՞նք իսկի ել հողով չի կերակրվում, և ամեն մարդ գիտե, վոր նա գորտ, մկներ ու ուրիշ կենդանիներ է ուտում, իսկ հասարակածային խոշոր ոձերը կարող են մինչև անգամ հորթ կուլ տալ. դուրս է գալիս, վոր ո՞նք ուղղակի բանի տեղ չի դրել այդ հրեյական աստծուն: Իսկ կնոջը հրեյական աստվածն ասաց. «Բազմացնելով կրազմացնեմ քո հղության ժամանակ քո ցավը: Ցավով զավակներ կըծնես, և կձգտես դեպի քո մարդը, նա ել կիշխի վրադ»: Տեսե՛ք, տեսե՛ք, մանավանդ դուք կանայքդ. յերբ վոր դուք յերեխա յեք

ծնունդ, յերբ նոր մարդու ծնունդն և կատարվում և դուք ար-
նաքամ եք լինում ու տանջվում, բանից դուրս և գալիս՝ դա
նրանից չի վոր ձեր մարմինն այնքան լավ չի շինված, վոր
առանց ցավերի ծնեք, այլ նրանից, վոր անհիշելի ժամանակնե-
րում Ադամի ցեղից մի վայրենի կին, վորի անունը Յեվա յե յեղել,
մի խնձոր և կերել: Դուք ինչ կասեյիք մի մարդու, վոր պար-
տեզ տնկելով՝ ամբողջ ապագա սերունդն անիծեր այն բանի հա-
մար միայն, վոր մի տղա նրա այգուցը մի արգելված խնձոր
գողանար: Դուք նրան կանվանեյիք անգութ, վայրենի,
խելագար. բայց այ, հրեյական աստվածն անիծում և
մարդկային ցեղն ել ավելի սոսկալի անեծքներով այգու մի
փոքրիկ խնձորի համար: Տերտերներն այդ հեքյաթից ոգտվում
են վոչ թե նրա համար, վոր այդ աստծու անգթությունը ցույց
տան, այլ նրա համար, վոր ներշնչեն այն վայրենի միտքը, թե
մարդկանց բոլոր տանջանքներն առաջին մեղքից են, նրանից,
վոր Ադամն ու Յեվան մի պատիկ խնձոր են կերել: Դրան դեռ
հավատում են միլիոնավոր մարդիկ, վորոնց խաբում են այդ
տերտերները զանազան յերկրներում, և դա յե վոր չի թողում
այդ մարդկանց ազատվել տանջանքներից:

Բայց միթե ամոթ չի հավատալ դրան: Մտիկ արեք մի
ամբողջ կենդանական աշխարհին: Միթե կենդանիները, միթե
որինակ՝ կովը չի տանջվում հորթ ծնելիս, միթե նա արնաթա-
թախ չի լինում նրանից՝ վոր նրա մարմինը հարմարված չի,
միթե կենդանիները շատ անգամ չեն մեռնում ծննդաբերության
ժամանակ: Ապա ինչո՞ւ աստվածաշնչում բան չի ասված կովի
մեղանչելու մասին: Կովն ինչ մեղք և գործել, վոր նա ել տան-
ջվի ծննդաբերության ժամանակ (նա ել և արգելված պտուղ
կերել... Թ.): Դիմեցեք գիտությանը և դուք կտեսնեք, թե ինչ
անմիտ բան և նոր եյակ ծնելիս տանջվելու մասին տյդ հեքյա-
թը: Դուք կիմանաք, վոր մարմնի կազմության մեջ ցառ-ցառ
անցյալապատկառմամբ բաներ կան, ինչպես որիմակ՝ հաճախ
պատահում և այսպես կոչված արգանգից զուրս հզուրյուն,
վոր առաջանում և կնոջ մարմնի անկազմակերպությունից:
Ուրեմն մարմնի տանջվելը նրա անկազմակերպ լինելուց և
նրանից, վոր մարդ դեռ անառողջ կյանքով և ապրում:

Հրեյական աստվածը չի բավականանում կնոջն ու ոճին ա-
նիծելով, նա մարդկային ամբողջ ցեղն և անիծում և մինչև ան-
դամ ամբողջ յերկիրը: «Իսկ Ադամին ասաց.—նրա համար, վոր
դու լսեցիր քո կնոջ խոսքին ու ծառից կերար, վորի համար յես
քեզ պատվիրել եյի՝ ասելով, չուտես դրանից,—դրա համար ա-
նիծված լինի յերկիրը: Տրամությամբ սնվես դրանից քո կյանքի
բոլոր օրերում: Փուշ ու տատանակ բացնի նա քեզ համար, և
դաշտի խոտերով կերակրվես: Քո ճակատի քրտնքով ուտես հա-
ցըդ, մինչև վոր վերադառնաս հողը, վորից վերցրված ես, վո-
րովհետև դու հող եյիր և հող կդառնաս: Յերբ յերեխան կաշում

ե մի բանի, նա նրան ե մեղավոր համարում, յերբեմն ծեծում ե այն սեղանն ու պատը, վորին կպել ե, ասելով՝ «ան, ան»: Վայրենին շատ ել չի տարբերվում այդ յերեխայից: Յեթե ընկնող քարը կպչում ե նրան, նա այդ քարը համարում ե կենդանի, նա կամ աղոթում ե այդ քարին, խնդրում նրան, վոր այլևս վնաս չտա իրան, կամ անիծում ե այդ քարը, ծեծում նրան: Հրեյական աստվածը շատ ել չի տարբերվում այդ վայրենուց: Նա անիծում ե հողը, վորը նրան հո բան չի արել, վորն իբրեթե ինքն ե ստեղծել՝ աստվածաշնչից դատելով: Յեվ չնայած այդ ակնհայտնի անմտություններին՝ աստվածաշունչն այդ և տասնյակ ուրիշ դեպքում տերությունների ու տիրող դասակարգի համար ներկայանում ե իբրեւ սիրուն նյութ աշխատավորներին ապացուցելու համար, վոր նրանք միայն յերեսի քրտնքով կարող են ուտել իրանց հացը, այսինքն միայն արնալից, ծանր աշխատանքով կարող են ճարել այն: Այդ աշխատավորների բաժինն ե փուշն ու տատասկը, այսինքն քաղհաններն ու դաշտային խոտերը, և այն ել իրանց ամբողջ կյանքում: Բայց այդ ինչո՞ւ բոլոր յերկրների հարուստ մարգիկ, ազա կալվածատերերն ու կապիսալիստները յերբեք չեն ուտում վոչ փուռ, վոչ ճաշակ, վոչ գաւառիկ խոտ, այլ ուտում են այն բանը, ինչ վոր սիրենք ե ուզում, այն ամենալավը, ինչ վոր ճարվում ե աշխատողներին: Ինչո՞ւ նրանք իրանց հացը յերբեք ճակատի քրտնքով չեն ձեռք բերում: Թե՞ օրեյական աստվածը միայն աշխատավոր մասնատերին ե անիծել յեվ նրա անեծքն ազաների վրա չի տարածվում:

Ի լրումն՝ տերը դարձավ դերձակ. «և տեր աստված Ադամին ու նրա կնոջ համար կաշվե զգեստներ շինեց ու հագցրեց նրանց» (Ձեռքիցն ամեն բան գալիս եր, ելի): Առաջին դերձակը կաշվե շոր ե կարում: Այդպիսով առաջին դերձակային արհեստանոցը բացվեց դրախտում այսպիսի ցուցանակով. «Յահու, Ելոյիմ և ընկերությունս: Կաշվե շորեր ենք կարում»: Նրանց հագցնելով՝ այդ դերձակն ասաց. «այ, Ադամը դարձավ իբրեւ մեզանից մեկը՝ ճանաչելով չարն ու քարին. չլինի՞ թե հիմի ել ձեռք մեկնի, կյանքի ծառից քաղի ուտի ու սկսի հավիտյան ապրել»:

Դրա համար ել տեր աստված յեղեմային այգուց նրան դուրս արավ, վոր նա հերկի հողը, վորից վերցրված եր: Յեվ արտաքսեց Ադամին ու յեղեմային պարտիզի մոտ մի քերովքի դրավ բոցեղեն սուրը ձեռքին ման գալիս, վոր կյանքի ծառի ճանապարհը պահպանի: Ուրիշ խոսքով՝ Ադամն ու Յեվան աքսորվել եյին վոչ շատ հեռու տեղեր, դատապարտվել տաժանակիր աշխատանքի, իսկ հրեյական Յահու-Ելոյիմ աստվածների և ընկերության կալվածքի մուտքի առաջ յերկնային քաղաքապահ վոստիկան եր դրվել բոցեղեն սրով, վոր ամենքի մուտքն արգելում եր: Բայց վորովհետեւ նրանք այլևս Ելոյիմի ճորտերը չեյին, ուստի՝ իբրեւ ազատագրվածներ՝ շոր ստացան:

Մտաբերեցեք, վոր աստվածաշնչի ասելով դրախտը յերկրի

վրա յեր շինվել, և մինչև անգամ այդ դրախտի տեղն ել ցույց ետրված, և նույնիսկ այդ դրախտով հոսող գետերն են նշանակված, այդ գետերը հիմա ել կան,—այդ գետերն Ասիայում ու Աֆրիկայում են: Այդ բոլոր տեղերը լավ են ուսումնասիրվել, վոչ մի կտոր չի մնացել վոր մարդու վոտը կոխած չլինի. հենց հիմա ել հենց այդ նույն տեղում մարդիկ են ապրում, բայց այնտեղ իսկի յեւ վոչ մի դրախտ չկա, վոչ մի հրեշտակ չկա նրա մուտքը պահպանող:

Բայց ամբողջ յերկրում կյանքի ծառն ու գիտության ծառը, այսինքն կյանքի և գիտության բարիքները դարձել են տիրող դասակարգի մասնավոր սեփականություն, և բոլոր հավատների տերտերներն այն պահապան վոստիկաններն են յեղել, վոր աշխատավորներին արգելել են մոտենալ այդ բարիքներին: Կրոնը յեղել ե և մնում ե իբրև անագին խոչընդոտ ստեղծելու յերկրի վրա իրական դրախտ: Յեւ վոչ միայն հրեյական աստվածները, այլ բոլոր աստվածները, բոլոր «Ելոյիմները», բոլոր աղաները վախենում են, վոր գիտությունը ժողովրդական զանգվածների սեփականություն դառնա, վորովհետև այն ժամանակ տերտերական ու կապիտալիստական խաբեբայութունն ել չի կարող մնալ:

*
* *

Բայց միթե մասսաների վրա իշխելն արդարացնելու համար ե միայն հնարվել այդ պատմվածքը: Իհարկե՝ վոչ: Հայտնի սոցիալիստ Լաֆարգը շատ սրամիտ կերպով բացատրում ե Ադամի ու Յեւայի մասին այդ ավանդությունների ծագումը: Նա բացատրում ե, վոր հեռավոր ժամանակներում այսպես ե յեղել: Միքանի ավելի ուժեղ ցեղեր տիրել են ավելի թույլերին: Ավելի ուժեղ ցեղը «Ելոյիմի» ցեղն ե յեղել: Այդ «Ելոյիմները» նախահայրեր են յեղել համարվելիս: Այդ ժամանակներում դրանց ուղղակի պաշտելիս են յեղել իբրև նախահայրերի: Նրանց ել նույնպիսի պատիվներ են յեղել տալիս, նրանց ել նույնպես զոհեր են յեղել մատուցանելիս, վորպիսին մատուցանում են բոլոր վայրենի ու կիսավայրենի ժողովուրդներն իրանց մեռած նախահայրերին: Բայց ժամանակի ընթացքում այդ նախահայրերին վորոշ առանձնահատկություններ են տվել, շատ բան են հորինել նրանց հզորության մասին և, ինչպես բոլոր վայրենիները, նրանց դարձրել են վոչ միայն մարդկության ցեղապետներ, այլև աշխարհի արարիչներ: Վոչ միայն հրեյական, այլև ուրիշ ցեղեր ել իրանց շատ աստվածների իրանց նախահայրերն են համարում:

Յեւ անա այդ «Ելոյիմ» ցեղն իրան հպատակ ե ունեցել մի ուրիշ ցեղ, վորը կոչվելիս ե յեղել «Ադամ»: «Ելոյիմն» արգելել ե այդ ցեղին ուտել միքանի ծառերի պտուղներ, վոր համարելիս են յեղել այդ ցեղի համար արգելված «տաբու», վոր կարող եյին ուտել միայն իրանք: Իրանք շոր հագած են յեղել, իսկ «Ադամի»

ցեղը մերկ և յեղել շրջելիս, ինչպես այդ լինում եր հնում, վոր ստրուկներն ու ստրկուհիները մերկ եյին լինում, մինչդեռ իրանց տերերը հագնված եյին: Բայց յերբ Ադամ ու Յեվա ստրուկները կերել են արգելված պտուղները, այդ «Ելոյիմ» ստրկատերերն սկսել են վախենալ, վոր նրանք դուրս կգան իրանց իշխանության տակից, կդառնան իրանց նման «Ելոյիմ»: Ինչ վերաբերում ե ոձի դեմ կռիվուն, նախնական ժողովուրդների ամբողջ պատմությունը լիքն ե պատմվածներով ոձի մասին, վիշապի մասին, վորպես մի աստվածության, վոր կռվում ե մյուս աստվածությունների դեմ: Ոձը շատ ժողովուրդների նախահայր ե համարվել: Նրանք ոձին տաճարներ են շինելիս յեղել և նրան աղոթելիս այնպես, ինչպես և՛ մյուս աստվածներին, վորոնց նույնպես համարել են մարդկային ցեղի նախահայրեր: Յերբեմն մի ժողովուրդ իրան անվանելիս ե յեղել ոձի անունով: Դա նրանց ցեղական անունն ե յեղել: Յեվ Լաֆարդը կարծում ե, վոր «Ոձ» ազգի մի ցեղ ե յեղել, վոր գրգռել ե «Ադամ» ցեղին ապստամբվելու «Ելոյիմ» ցեղի դեմ: Դրա պատճառով ե վոր «Ելոյիմը» խոստանում ե թշնամություն սերմանել այդ յերկու ազգերի մեջ:

Յեվ նույնիսկ այն խոսքերը, վոր վերաբերում են մարդուկնոջ հարաբերություններին, բացատրվում են նախնական ժողովուրդների կյանքի պայմաններով: Յերկրորդ գլխի 24 համարում ասվում ե. «մարդը պիտի թողնի իր հորն ու իր մորը և կաշի իր կնոջը»: Իսկ III գլխի 16 համարում բոլորովին ուրիշ բան ե ասվում. Ելոյիմը կնոջը հայտնում ե, թե այնուհետե «նրա կամքը կենթարկվի իր մարդու կամքին, և վոր նա կլինի իր տերը»: Դա ինչ ե նշանակում: Դա նշանակում ե, թե յեղել ե ժամանակ, վոր վոյքե ռզամարզն ե յեղել կիճ առնելիս յեվ իրան հղատակեցնելիս, այլ կիճն ե յեղել մարդ առնելիս՝ մեռյալ իր մոր ռանք: Յեղել ե ժամանակ, վոր յերկրի վրա յեղել ե քնանկան մայրական կազմ (մաթերիալառ), յերբ քնանիքի գլխին կիճն ե կանգնած յեղել. բայց հետագայում կյանքի տնտեսական պայմանները, ապրուստ ձեռք բերելու ձևերը փոխվելու պատճառով տղամարդն ե ընտանիքի գլուխ անցել: Մարդըն սկսել ե իր համար կին առնել և իշխել նրան:

Յեվ այն ժամանակ կանայք աստվածաշնչի Հոռթի նման ասելիս են յեղել. «Ուր դու կգնաս, այնտեղ ել յնա կգամ, և ուր վոր դու կապրես, այնտեղ ել յնա կապրեմ, քո ժողովուրդն իմ ժողովուրդը կլինի, քո աստվածն իմ աստվածը» (Պոլ Լաֆարգ. Ադամի և Յեվայի մասին դիցարանությունը):

Բայց այս բոլորի մեջ և վոչ մի «սուրբ» բան չկա, այլ կան հեռու-հեռավոր հիշողություններ, վոր վայրենի ժամանակների մասին այդ հիշողությունների նորագույն կազմողները խճճել են իրար:

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՆՈՅԱՆ ԶՐԶԵՂԵՂԸ

Սրանից 70 տարի առաջ Տիգրիս գետի ձախ ափին գերման գիտնական Րիչը գտավ տվազի ու հողի տակ ծածկված՝ Ասորեստանի մի հին քաղաք—աստվածաշնչում հիշվող Նինուեն։ Այդ քաղաքը պեղեցին և նրա տակ գտան ասորական թագավորների վիթխարի պալատներ, այգիներ, փողոցներ և քարաշեն տներ ու տաճարներ, վորոնք ծածկված էին հին արձանագրություններով և հերոսների ու աստվածների պատկերներով։ Յեւ այն, ինչ վոր յերկար տարիների ընթացքում հողի տակ թաղված էր, նորից բացվեց մարդու աչքի առաջ։ Ամենից նշանավորն էին այնտեղ բացված արքայական ահագին գրադարանները։ Նրանց միջի գրքերը թղթե չէին, այլ քարե, քարաղյուսային տախտակների վրա փորված են անհասկանալի գրություններ։ Յերկար ժամանակ չէին կարողանում կ'ըզալ այդ գրքերը, բայց հետո քիչ-քիչ ջոկեցին։ Յեւ ահա այդ բոլոր գրքերի մեջ գտնվեցին կոտրտված տախտակների վրա և՛ ջրհեղեղի մասին հին ասորական պատմվածքի գրություններ։ Այդ գրություններն արված էին այն ժամանակվանից 650 տարի առաջ, յերբ աստվածաշնչի ասելով՝ Մովսեսն էր ապրում։ Վորովհետեւ ասորական թագավորությունը մի ժամանակ հրեյաները վերջրել էին, ուստի հրեյաները շատ սովորությունների հետ փոխ էին առել նույնիսկ կրոնական հավատալիքներ, այսպես որինակ՝ Մորդեքայի ու Յեսթերի պատմությունն անկասկած Մորդուքայի ու Իշտարի (Աստղիկի) պատմությունների արձագանգն է։ Դրա հետ միասին նրանք փոխ առան նաև համաշխարհային ջրհեղեղի պատմվածքը։ Հրեյական հետազույն գրողներն այդ պատմվածքները փոփոխում ու արտագրում էին, զանազան գրություններ ապա միացվել են և կազմել աստվածաշնչի պատմվածքը «նոր ջրհեղեղի մասին», վորի մեջ, ինչպես հետո կըտեսնենք, իսկապես յերկու պատմվածք կա, վոր կազմել են տարբեր մարդիկ և նույնիսկ տարբեր ցեղեր։

Բայց ի՞նչ է ասում ասորական պատմվածքը «նոր ջրհեղեղի մասին»։ Դա կբերեմ այստեղ այն ձևով, ինչպես վոր գրված է ն. Րուբակինի «Գաղտնիքների և հրաշքների մեջ» գրքում։

Անհիշելի ժամանակներում,— ասվում է այդ պատմության մեջ,— ապրում էր մի մարդ անունը Ուտնապիստիմ, մականունը Կասիսադրա, Սուրբիպակա քաղաքի թագավորը։ Նա վատ ժամանակ էր ապրում։ Այն ժամանակ մարդիկ արդեն փչացել էին և զայրացած էին աստվածը վճռեց վոչնչացնել նրանց։

Յեւ մահա ասորական մի ուրիշ աստված, Իմաստության և Ծովի աստված Եան մի անգամ ներկայացավ Ուտնապիստիմին և սասաց նրան. «Զգուշացիր մարդուց, Սուրբիպակա. մի մեծ նավ շինիր քեզ ու քո ընտանիքի համար, վորովհետև աստված ուզում է վոչնչացնել կյանքի սերմը և փչացնել ապա մարդկային ամբողջ սեռը: Քո նավի մեջ մոռ նուշնպես բոլոր եյակներին կյանքի սերմը, վորպեսզի պահպանես նրանց»:

Յեւ մահա Ուտնապիստիմը գործի կապով: Նա շինության փայտից ու յեղեգնից մի մեծ ամուր նավ շինեց և նրա դրսի ու ներսի պատերը կուպր քսեց: Հետո այդ նավը բերավ «բոլորն, ինչ վոր ունեւր—արծաթ, վոսկի, կյանքի բոլոր սերմերը». «հավաքեց բոլորը և ուղարկեց նավը». ժողովեց իր բոլոր ծառաներին, տղամարդկանց ու կանանց, բոլոր ընտանի ու վայրենի չորային կենդանիներին: Յեւ յերբ պատրաստությունները վերջացել էյին, հնչեց աստծու ձայնը: «Յերկինքը յերեկոյան կործանարար հեղեղ կուղարկի: Մտիր տապանը և դուռը փակիր»: Յեւ մահա հեղեղն սկսվեց: Այն ժամանակ Ուտնապիստիմը մտավ տապանն իր ընտանիքի ու բարեկամների հետ միասին, աստծու ասածի նման դուռը փակեց և դեկը հանձնեց ղեկավարին:

Ամբողջ գիշեր սուրսափելի անձրև թափվեց, իսկ յերբ լուսացավ, կատաղի փոթորիկ բարձրացավ ու յերկինքը բռնեց: Յերկնքի հիմքից մութ ամպ վեր կացավ, փոթորկի աստված Բամանուկ վորոտում եր նրա մեջ, Ներո և Մերոդախ աստվածները գնում էյին նրա առջևից: Թե բարձունքներում, թե հարթություններում ամենինչ կործանվում եր: Ներգալ աստվածը քամիներին ազատություն տվավ: Նինիպ աստվածը գետերն ափերից հանեց տարածեց: Վոդիններն ամենուրեք ամայություն բերին, ամեն ինչ սրբեցին յերկրի յերեսից: Զրերն ափերից դուրս յեկան և ուռան մինչև յերկինք: Անունակու աստվածը բարձրացրեց իր ջահը բարձր,—նրա ճառագայթիչ լուսից ամբողջ յիրկիրը շողշողաց, Բամանուկ կատաղությունը մինչև յերկինք հասավ: Ամենինչ, վոր լույս եր, խավար դարձավ:

Յերկրի վրա,—շարունակում է ասորական պատմվածքը,—բոլոր մարդիկը սատակեցին: Յեղբայրը յեղբորը հտեսավ: Մարդիկ իրարից տեղեկություն չունեյին: Մինչև անգամ յերկրնքում աստվածները վախեցան ջրհեղեղից և պազոցին՝ կուչ յեկած կաշեւով յերկնքի շրջապատին (յերկնակամարին): Իստար աստվածուհին ցասումով լցված լալիս եր: Լալիս եր աստվածների տիրուհին քաղցրաձայն. «Առաջվա սերունդը փոշի դարձավ: Ո՞ւր է այն, ինչ վոր յես ծնել էյի (այսինքն մարդկային ազգը), հըր է այդ բոլորը: Ինչպես ձկնկիթ նա լցնում է ծովը»:

Վեց որ ու յոթը գիշեր քամին ու փոթորիկը տիրում էյին յերկրի վրա և անձրև եր գալիս: Անձրևը դադարեց յոթներորդ որվա արշալուսին միայն, և փոթորիկն իջավ: Ծովի մակերեւութը ցածրացավ: Յեւ Ուտնապիստիմը պատմում է. «Յես

դայում եյի ծովին և բարձր գոռում ու կանչում: Բայց ամբողջ մարդկությունը հալվեց ինչպես կավ: Յես բացաւ աչքերս, և լույսն ընկավ յերեսիս: Յես ցած կռացաւ, նստեցի և լացի՝ տարվելով ալիքների վրայով, վորովհետև բոլոր մարդիկ կոտորվել էին և դիակներն եյին լողում շուրջս ինչպես գերաններ: Յեւ առատ արցունքները հոսում եյին դեմքիս վրայով»:

Ամբողջ յոթն ու Ուտնապիստիմի նավն որորվում եր ալիքների վրա, ապա կանգ առավ Նիզիր լերան մոտ: Իսկ յերբ յոթներորդ որը շուրն սկսեց իջնել, Ուտնապիստիմը «բաց թողեց ազավնուն, վորպեսզի իմանա, թե յերկիրը մաքրվե՞լ է ջրերից»: «Բայց նա մի քիչ թռավ, տեղ չգտավ հանգստանալու և հետ դարձավ: Այն ժամանակ Ուտնապիստիմը բաց թողեց ծիծեռնակին: Բայց նա ել վերադարձավ: Այն ժամանակ թռավ ազոավը: Նա տեսավ լողացող մարմիններ ու սկսեց լալիւ նրանց և չվերադարձավ: Այն ժամանակ Ուտնապիստիմը նավից դուրս յեկավ բոլոր յուրայիններով, կենդանիներին բաց թողեց ամեն կողմ, սարի գագաթին զոհաբան շինեց և զոհ բերավ»:

«Յեւ աստվածները բուրմունք հոտոտեցին»: Ապա այսպես եւ ասվում պատմվածքի մեջ. -- «աստվածներն անուշ բուրմունք հոտոտեցին: Աստվածները ճանճերի նման ժողովվեցին զոհաբերողի գլխին: Յեւ աստվածների տիրուհին արձակեց աղեղ, այսինքն ծիածան», վոր Անու աստվածն եր շինել նրա ցանկությամբ:

Դրանից հետո աստվածներն սկսեցին վիճել իրոր հետ, և Իմաստության աստված Եան ջրհեղեղի առաջին սկսող Բել աստծուն ներշնչեց, վոր այնուհետև նա մարդկային ցեղին պատժի ավելի քիչ անխնա միջոցով, որինակ՝ վայրի գաղանների, ժանտախտի, սովի»:

Այսպես եւ ասորական պատմվածքը ջրհեղեղի մասին: Նրանից հետևում ե, վոր նա շատ նման է աստվածաշնչայինին: Այդտեղ խոսքն այն մասին է, թե ինչպես աստված հրամայեց տապան շինել և դրսից ու ներսից ձյութել, և՛ տապանում հավաքված բոլոր չորային կենդանիների մասին, և՛ հեղեղի մասին, և՛ աղավնու մասին, և՛ ծիծեռնակի մասին: Յեւ այդ բոլորը գրված է Մովսեսից դեռ միքանի հարյուր տարի առաջ:

Իսկ հիմա դանք Նոյի ջրհեղեղի աստվածաշնչային պատմվածքին: Ինչպես արդեն առաջ ենք բացատրել, աստվածաշնչում զանազան պատմվածքների խառնուկ կա. պատմվածքներից միքանիսը կազմել են այն հրեյաները, վորոնք հավատալիս են յեղել «Ելոյիմ» աստվածներին (Ելոյիմյան պատմվածքներ), իսկ մյուսներն այն հրեյաները, վորոնք հավատալիս են յեղել «Յահվու» կամ «Յահվե» աստծուն (յահվիստական պատմվածքներ): Մենք այստեղ բաց ենք թողնում աստվածաշնչի IV և V գլուխները, վորոնց դեռ կվերադառնանք շուտով: Յերբ մենք սկսում ենք VI գլուխը, հանկարծ իմանում ենք, վոր «յերբ մար-

գիկ սկսեցին բազմաճառ յերկրի վրա, և աղջիկներ ծնվեցին նրանց, այն ժամանակ աստծու վորդիները տեսան մարդկային դուստրներին, վոր նրանք գեղեցիկ են, և նրանց կին առան, ով վորին հավանում եր: Մեզ համար վոչ մի զարմանալի բան չկա աստծու վորդիների մասին խոսող այդ պատմվածքում, վորոնք ամուսնանում են մարդկային դուստրներին: Համարյա բոլոր ժողովուրդներն են հնարել այդպիսի պատմվածքներ աստծու վորդիների մասին: Շատ-շատ մարդիկ են աստվածային աստիճանի հասցրվել, նրանց ծագումը համարվել և աստվածային: Թագավորներն, որինակ, հենց բացիբաց հրամայել են, վոր իրանց համար այնպիսի տոհմագրություն հորինեն, վորից կատարելապես յերևա, թե նրանք աստվածներից են սերվում: Այդպիսի տոհմագրություն են հորինել Ալեքսանդր Մակեդոնացու, Ոգոստոս կայսրի, Չինգիզ-խանի և ուրիշների համար: Չինական կայսրները կոչվում են յերկնքի վորդիներ, իսկ Չապոնական Միկադոն՝ ծագող արևի վորդի: Ի՞նչ զարմանալի բան կա, վոր հրեյաները, վորոնք այն ժամանակ վոչնչով տարբերվելիս չեն յեղել ուրիշ վայրենի և կիսավայրենի ժողովուրդներից, — իրանք էլ հորինեցին նույնպիսի պատմվածք այն աստվածային վորդիների մասին, վորոնք ամուսնացել են մարդկային աղջիկներին:

VI գլխի 4 համարում մի նոր պատմվածք կա հսկաների մասին. «այն ժամանակ, պատմում ե աստվածաշունչը, — յերկրի վրա հսկաներ կային՝ սկսած այն ժամանակից, յերբ աստծու վորդիներն սկսեցին գնալ մարդկանց աղջիկների մոտ և նրանք սկսեցին նրանց համար ծնել — այդ ուժեղ, հնուց փառավորված մարդիկը: Մենք արդեն բացատրել ենք մեղսագործության վերաբերող գլխում, վոր աստվածաշնչային աստվածորդիները վոչ այլ վոք են, յեթե վոչ «ելոյիմ» ցեղի վորդիները, վորոնց համարում եյին հրեյաներն իրանց ազգապետներ, հնուց հզոր ու փառապանծ մարդիկ: Իհարկե, ժամանակի ընթացքում նրանք սկսեցին նրանց և՛ առանձին հատկություններ տալ, համարել նրանց հսկաներ: Չե՞ վոր համարյա բոլոր ժողովուրդները հորինել են այդպիսի պատմվածքներ հսկաների մասին: Մինչդեռ յերկրի կեղևում վոչ մի տեղ անցած ժամանակների մնացորդների մեջ հետքն անգամ չկա այնպիսի հսկաների, վորոնց մասին պատմում ե աստվածաշունչը:

Ըստ յերևութին, յերկրի վրա ամենինչ բավական լավ պիտի լինի, այնքան լավ, վոր նույնիսկ աստծու վորդիներն ամուսնանում են մարդկային դուստրներին: Բայց հանկարծ մենք կարդում ենք (VI գլ. 5—7 հ.). «և տեսավ (ելոյիմը) — տեր աստված, վոր մեծ ե մարդկանց անբարոյականությունը յերկրում և վոր նրանց սրտերի բոլոր մտածություններն ու մտքերը չարիք եյին ամեն ժամանակ, և զղջաց աստված, վոր մարդուն ստեղծել և յերկրի վրա և տխրեց իր սրտում և ասաց տերը. «կոչնչացնեմ յերկրի յերեսից մարդուց մինչև անասունները և սողունները և

յերկնքի թռչունները, կոչնչացնեմ, վորովհետև յեա զղջացել եմ
 վոր նրանց ստեղծել եմ»։ Յեվ ապա (11—12 հ.)—«Բայց յերկիրը
 փռված եր աստծու առաջ, և լցվել եր յերկիրը չարագործու-
 թյուններով, և նայեց տեր աստված յերկրի վրա, և ահա նա
 փուչ է, վորովհետև ամենմի մարմին մոլորել և իր ճանապարհը
 յերկրի վրա»։ Յուրաքանչյուր հավատացող իրավունք ունի հար-
 ցընելու. «Բայց ախր դա ո՞վ և այդ յերկիրը փուչ դարձրել։ Ո՞վ է
 անբարոյացրել մարդկանց։ Միթե այն աստվածորդիները չե՞ն
 արել, վոր գալիս եյին մարդկային աղջիկների մոտ»։ Յեվ ամեն
 մեկն իրավունք ունի ելի հարցնելու. «Յեթե նույնիսկ մեղան-
 չեյին մարդիկ, վորոնց հետ աստված դեռ խոսում ել եր, ել ի՞նչ
 հարկավոր եր վոր բոլոր կենդանիներին ու յերկնքի թռչուննե-
 րին ել վոչնչացներ։ Ի՞նչ մեղք եր գործել՝ որինակ՝ ագռավը,
 կամ ճնճողուն ի՞նչ մեղք եր գործել աստծու առաջ։ Յեվ ի՞նչ
 ճանապարհ եր դա, վոր նշանակված եր նրանց համար, և վորը
 նրանք փոխեցին»։ Իհարկե, այսպիսի հարցեր շատ կարելի յե
 տալ, և վոչ մի տերտեր քիչ թե շատ ուշիմ պատասխան չի տալ
 դրանց, բացի այն, վոր կասի, թե դա աստծու կամքն է, վոր
 աստծու գործերն անքննելի յեն։ Բայց ախր բանվորներն ու
 գյուղացիները չեն կարող բավարարվել այդպիսի դատարկ պա-
 տասխաններով։

Ապա գալիս ե աստվածաշնչում Նոյի մի փոքր տոհմագրու-
 թյուն, վորի մեջ տառացի առված է հետևյալը. «ահա Նոյի
 կյանքը։ Նոյն առաքինի մարդ եր, անարուտ՝ իր ցեղում։ Նոյը
 շրջում եր աստծու առաջ։ Նոյը ծնեց յերեք վորդի—Սեմ, Բամ
 և Հաբեթ»։ Ահա և՛ կենսագրությունը։ Աստվածաշունչը պատ-
 մում է, վոր աստված յերկրի բոլոր մարդկանց խեղդեց, թողեց
 միայն Նոյին ու նրա յերեք վորդիներին, և յուրաքանչյուր հա-
 վատացող կարող եր սպասել, վոր իրան պատմելու յեն Նոյի ա-
 ռանձին լավությունների մասին, բայց նրա լավությունները
 կայանում են նրանում, վոր նա ման գալիս է յեղել աստծու
 առաջ։ Թե ի՞նչպես եր նա ման գալիս աստծու առաջ, առաջով
 թե հետևով, աջ թե ձախ, աստվածաշունչն այդ մասին չի ա-
 սում։ Ստիպված ենք բավականանալ միայն աստվածաշնչային
 զրոդի լոկ խոսքերով արած հայտարարությամբ, վոր Նոյն առա-
 քինի ու անարատ մարդ եր, իսկ նրա յերեք վորդիների մասին,
 վորոնք փրկվել եյին ջրհեղեղից, աստվածաշնչի պատմվածքում
 նրանց մասին և վոչ մի բան չի ասվում, նույնիսկ անհայտ է,
 թե նրանք ել եյին ման գալիս աստծու առաջ։ Իսկ ապա գալիս
 է արդեն ջրհեղեղի պատմությունը։ Յեթե դուք առանձնացնեք,
 ինչպես այդ արել են աստվածաշունչը հետազոտողները, VI գլխից
 13—22 համարները, VII գլ. 6—9, ապա 11 և 13—15 մինչև 16 հա-
 մարի կեսը, ապա 18—21 և 24 համարներն, իսկ VIII գլ. 1 և 2-դի
 կեսը, 3-դի կիսից մինչև 5 հ., ապա 13—19 հ., IX գլ. 1—17 հա-
 մարը, դուք կստանաք մի պատմվածք. VI գլ. մնացած մասերը

5 համարից սկսած մինչև VIII գլխի վերջը վերաբերում են յերկրորդ պատմվածքին, վորպեսզի ավելի վորոշ լինի, յերկու պատմվածները բերված են այստեղ առանձին-առանձին, և «աստված» խոսքի փոխարեն դրված են համապատասխան տեղերում «Ելոյիմ» և «Յահվե» խոսքերը:

Ջրհեղեղի ելոհիմական պատմությունն ասում է.— «Յեվ Ելոհիմն ասաց Նոյին. ամեն մարմնի վերջը հասել է իմ առաջ, վորովհետև յերկիրը լցվել է նրանց չարագործություններով. և ահա նրանց յես կջնջեմ յերկրից: Գեղ համար տապան շինիր հոֆֆր փայտից. տապանում բաժանմունքներ շինիր և ձյութիր նրան ներսից ու դրսից: Յեվ արա դա այսպես. տապանի յերկարությունը յերեք հարյուր կանգուն, նրա լայնությունը հիսուն կանգուն, իսկ նրա բարձրությունը յերեսուն կանգուն: Յեվ տապանում անցք շինիր, և մի կանգուն վերև տար նրան, և տապանի դուռը նրա կողքից շինիր. նրա մեջ շինիր ստորին, յերկրորդ և յերրորդ բնակարան:

Յեվ ահա յես յերկրի վրա ջրհեղեղ կբերեմ, վորպեսզի վոջնչացնեմ ամեն մարմին, վորի մեջ կյանքի շունչ կա, յերկնքի տակ. ամենը, ինչ վոր կա յերկրի յերեսին, կյանքից կզրկվի: Բայց քեզ հետ յես ուխտ կկնքեմ, և դու կմտնես տապանը, և քո վորդիները, և քո կինը, և քո վորդիների կանայք քեզ հետ միասին:

Տապանը տար նույնպես ամեն անասունից, ամեն սողունից և ամեն կենդանուց և ամեն մարմնից մի-մի գույգ, վորպեսզի նրանք քեզ հետ կենդանի մնան. արական և իգական սեռի թող լինեն նրանք: Բոլոր թռչուններից ըստ իրանց տեսակի և բոլոր անասուններից ըստ իրանց տեսակի և յերկրի բոլոր սողուններից ըստ իրանց տեսակի, բոլորից մի-մի գույգ կմտնեն քեզ մոտ, վորպեսզի կենդանի մնան քեզ հետ, արական սեռի և իգական: Դու ել վերցրու քեզ հետ ամեն տեսակ կերակուր, վորով սնվում են, և ժողովիր քեզ մոտ: Յեվ նա կլինի քեզ համար և նրանց համար կերակուր: Յեվ Նոյն արավ բոլորն, ինչ վոր հրամայեց նրան Ելոհիմը, այնպես ել արավ:

Իսկ Նոյը վեցհարյուր տարեկան էր, յերբ ջրհեղեղը յերկիր յեկավ: Յեվ մտավ Նոյը և նրա վորդիները, և նրա կինը, և նրա վորդիների կանայք նրա հետ տապանը ջրհեղեղից (ազատվելու): Յեվ մաքուր թռչուններից ու անմաքուր թռչուններից, և մաքուր անասուններից ու անմաքուր կենդանիներից, և գազաններից ու յերկրի բոլոր սողուններից մի-մի գույգ, արական սեռի և իգական, մտան տապանը Նոյի մոտ, ինչպես Ելոհիմն էր հրամայել Նոյին...

Նոյի վեցհարյուրերորդ տարվա յերկրորդ ամսի տասնույոթներորդ օրը, այդ օրը բացվեցին յերկնային անոցների բոլոր աղբյուրները յեվ յերկնային պատուհանները բացվեցին...

Հենց այդ օրը տապանը մտավ Նոյը և Նոյի Սեմ, Քամ և

Հաբեթ վորդինները, և Նոյի կինը, և նրա վորդինների յերեք կանայքը նրա հետ . . .

Յեւ տապանը մտան Նոյի մոտ մի-մի զույգ (արական սեռի և իգական) ամեն մարմնից, վորոնց մեջ կյանքի շունչ կա: Յեւ Նոյի մոտ տապանը մտած ամեն մարմնի արական և իգական սեռը մտան, ինչպես հրամայել էր նրան Ելոհիմը . . .

Իսկ ջուրը սաստկանում էր և խիստ բազմապատկւում յերկրի վրա, և տապանը լողում էր ջրերի մակերևութին: Յեւ սաստկացավ ջուրը յերկրի վրա արտասովոր, այնպես վոր ծածկվեցին բոլոր բարձր սարերը, վորքան վոր կան ամբողջ յերկրնքի տակ: Ջուրը տասնուհինգ կանգուն նրանցից բարձրացավ, և ծածկվեցին բոլոր բարձր սարերը:

Իսկ ջուրը յերկրի վրա սաստկանում էր հարյուր հիսուն որ: Յեւ Ելոհիմը Նոյին միտը քցեց, և՛ բոլոր գազաններին, և՛ բոլոր անասուններին, և՛ բոլոր թռչուններին, և՛ բոլոր սողուններին, վոր նրա հետ տապանումն էին. և Ելոհիմը քամի արձակեց յերկրի վրա, և ջրերը կանգ առան: Յեւ փակվեցին անգնդի աղբյուրները յեւ յերկնքի պատուհանները . . .

Յեւ սկսեց ջուրը պակասել հարյուր հիսուն որը վերջանալուց: Յեւ տապանը կանգ առավ յոթներորդ ամսում, ամսի տասնույոթներորդ որն Արարատյան լեռների վրա: Ջուրը շարունակ նվազում էր մինչև օսոներորդ ամիսը. օսոներորդ ամսի առաջին որը լեռների դագաթները յերևացին . . .

Նոյի կյանքի վեցհարյուր մեկերորդ տարվա առաջին ամսի առաջին որվան վրա ջուրն օպառվեց յերկրի վրա. և բաց արավ Նոյը տապանի ծածկը և նայեց, և ահա, — չորացել է յերկրի մակերևութը: Յեւ յերկրորդ ամսում, ամսի քսուսութերորդ որվան վրա յերկիրը չորացավ: Յեւ ասաց Ելոհիմը Նոյին. դուրս եկ տապանից դու և քո կինը, և քո վորդինները, և քո վորդինների կանայք քեզ հետ. դուրս բեր տապանից բոլոր կենդանիներին, վորոնք քեզ հետ են, բոլոր մարմիններից, թռչուններից, և անասուններից, և բոլոր սողուններից, վոր սողում են յերկրի վրա, թող ցրվեն նրանք յերկրի վրա և թող պտղաբերվեն և բազմանան յերկրի վրա: Յեւ դուրս յեկավ Նոյը և նրա վորդինները, և նրա կինը, և նրա վորդինների կանայք նրա հետ, բոլոր գազանները, և բոլոր անասունները, և բոլոր սողունները, և բոլոր թռչունները, բոլոր շարժվողները յերկրի վրա, ըստ իրանց սեռերի, դուրս յեկան տապանից» . . .

Այն մասերը, վորոնք մտել են աստվածաշունչը յահվիսական պատմութից ջրհեղեղի մասին, սրանք են.

«Յեւ տեսնելով Յահվեն, վոր մեծ է մարդկանց անբարոյականությունը յերկրի վրա, և վոր նրանց սրտի բոլոր մտքերն ու մտածությունները չաբիք են ամեն ժամանակ. և զղջաց Յահվեն, վոր ստեղծել է մարդուն յերկրի վրա, և տխրեց իր սրտում: Յեւ ասաց Յահվեն. կոչնչացնեմ յերկրի յերեսից

մարդկանց, վորոնց յես ստեղծել եմ, մարդուց մինչև անասունները և սողունները և յերկնային թռչունները կոչնչացնեմ. վորովհետև յես զղջացել եմ, վոր ստեղծել եմ նրանց: Իսկ Նոյը Յահվեյի աչքին դուր եր յեկել: Ահա Նոյի կյանքը. Նոյն առաքինի և անարատ մարդ եր իր ցեղում. Նոյը գնում եր Յահվեյի առաջ (ծառայում եր: Թ.): Նոյը ծնել եր յերեք վորդի—Սեմ, Գամ և Հաբեթ: Բայց յերկիրն ապականվել եր Յահվեյի առաջ և յերկիրը լցվել եր չարագործություններով: Յեվ նայեց Յահվեն երկրին, և ահա նա ապականված ե. վորովհետև ամեն մարմին մոլորել ե իր ճանապարհը յերկրի վրա:

Յեվ ասաց Յահվեն Նոյին. մտի՛ր դու և քու բոլոր ընտանիքդ տապանը, վորովհետև յես քեզ առաքինի եմ տեսել իմ առաջ այդ ցեղի մեջ. և ամեն մաքուր կենդանուց վերցրու յոթը-յոթը հատ, արական սեռի և իգական, իսկ անմաքուր անասուններից յեռու-յեռու, արական սեռի և իգական. այլև յերկնային մաքուր թռչուններից ել յոթը-յոթը հատ, արական սեռի և իգական, վորպեսզի պահպանվի ցեղն ամբողջ յերկրի համար. վորովհետև յոթն ուրից հետո յես պիտի անձրեկ քափեմ յերկրի վրա քառասուն ու ու քառասուն գիշեր և ջնջեմ այն բոլոր գոյությունը, վոր յես ստեղծել եմ, յերկրի յերեսից...

Յոթն ուրից հետո հեղեղի ջրեր յեկան յերկիր...

Յեվ յերկրի վրա անձրեկ քափվեց քառասուն ու ու քառասուն գիշեր...

Նրանք, և յերկրի բոլոր գազաններն ըստ իրանց տեսակի, և ամեն անասուն ըստ իր տեսակի, և բոլոր սողունները, վոր սողում են յերկրի վրա, ըստ իրանց տեսակի, և բոլոր թռչողներն ըստ իրանց տեսակի, բոլոր թռչունները, բոլոր թևավորները (մտան Նոյի մոտ ապաստան) ... և փակեց Յահվին տապանը նրանց հետևից: Յեվ շարունակվեց յերկրում հեղեղը քառասուն ու ու քառասուն գիշեր, և բազմացավ ջուրը, և բարձրացրեց տապանը, և նա բարձրացավ յերկրից վեր...

Յեվ կյանքից զրկվեց ամեն մարմին, վոր շարժվում ե յերկրի վրա, և թռչուններն ու անասունները, և գազանները, և բոլոր սողունները, վոր սողում են յերկրի վրա, և բոլոր մարդիկ. և ամենը, ինչ վոր ցամաքի վրա վոգու շունչ ուներ քթածակերում, մեռավ: Վոչնչացավ ամեն եյակ, վոր բոլոր յերկրի մակերևույթի վրա յեր. մարդուց մինչև անասունը, և սողունները, և յերկնային թռչունները, բոլորը ջնջվեց աշխարհից, մնաց միայն Նոյն ու ինչ վոր նրա հետ կար տապանում:

Յեվ զազարեց անձրեկը յերկնքից... Քառասուն ու անցնելուց Նոյը բացավ տապանում իր շինած պատուհանը և բաց թողեց ագռավին, վոր տեսնի, թե քչացել ե ջուրը դրա հետ, վորը դուրս թռչելով բաց թռավ ու ներս թռավ այնքան, մինչև վոր յերկիրը ջրից ցամաքեց: Հետո բաց թողեց իր մոտից աղավնուն, վոր տեսնի, Գեջուրը յերկրի յերեսից վերացել ե: Բայց աղավնին

հանգստի տեղ չգտավ իր վոտներին համար և վերադարձավ նրա մոտ տապանը, վորովհետև ջուրը դեռ ամբողջ յերկրի մակերես-վոյթի վրա յեր: Նա մեկնեց ձեռքը և վերցեց նրան և ընդունեց նրան իր մոտ տապանը: Յեւ սպասեց ելի ուրիշ յոթն որ և նորից արձակեց աղավնուն տապանից: Աղավնին վերադարձավ նրա մոտ յերեկոյան ժամանակ, և ահա ձիթենու թարմ տերեւը նրա բերանում, և նոյն իմացավ, վոր ջուրը յերկրից վերացել է: Նա ելի մի յոթն որ սպասեց և նորից արձակեց աղավնուն. բայց նա այլևս չդարձավ նրա մոտ...

Յեւ նոյը զոհարան շինեց Յահվեյի համար. և վերցրեց ամեն մաքուր անասունից և բոլոր մաքուր թռչուններից և բերավ վողջակիզելու զոհարանի վրա: Յեւ հոտ քաշեց Յահվեն դուրեկան բույրը, և ասաց Յահվեն իր սրտում. այլևս յերկիրը չեմ անիծելու մարդու պատճառով, վորովհետև մարդկային սրտի մտածմունքը չարիք է նրա պատանեկությունից. և չալիտի այլևս սատակեցնեմ բոլոր կենդանուն, ինչպես վոր յես արի:

Այսուհետև թող չդադարեն յերկրի բոլոր որերում սերմանումներն ու հնձերը, ցուրտն ու տոթը, ամառն ու ձմեռը, որն ու գիշերը:

Նախևառաջ հրեյական բնագրում այս յերկու պատմված-ները հեշտութեամբ են տարբերվում նրանով, վոր մի պատմված-քի մեջ ամեն տեղ աստված կոչվում է «Ելոյիմ», յերկրորդում կոչվում է «Յահվե»: Առաջին պատմվածքում աստված հրամա-յում է վերցնել բոլոր եյակներից մի-մի զույգ արական սեռի և իգական, վորի մեջ կա կյանքի շունչ, իսկ յերկրորդ պատ-մվածքում ասվում է. «ամեն մաքուր անասունից վերցրու յոթը-յոթը զույգ արական և իգական, իսկ անմաքուր անասունից յերկու-յերկու, այլև թռչուններ»: Առաջին պատմվածքում խոս-վում է այն մասին, վոր անձրևը թափվում էր 150 որ, իսկ յեր-կրորդում՝ 40 որ: Առաջին պատմվածքի համաձայն՝ ջուրը պա-կասել է $5\frac{1}{2}$ ամսում, իսկ ըստ յերկրորդի՝ 21 որում: Ըստ առա-ջին պատմվածքի՝ ջրհեղեղն առաջացել է այն ջրերից, վոր յեր-կնային հաստատութեան վրա յեն, այսինքն նախնական ծովից, նրանից, վոր բացվել է յերկնային ովկեանը. ըստ յերկրորդի՝ ուղղակի անձրևից: Իսկ յեթե մենք այժմ փորձենք համեմատել յերկու պատմվածներն ել սկզբում մեր մակաբերած ասորական ջրհեղեղի պատմութեան հետ, կտեսնենք, վոր աստվածաշնչային պատմվածքի մեծ մասը պարզիպարզ փոխ է առնված շատ ա-վելի առաջ գրված ասորական պատմվածքից:

Իսկ հիմա յերևակայենք այդ ջրհեղեղի միայն պատկերը: Աստված գալիս է նախահայր Նոյի մոտ և հայտարարում նրան, թե 7 որից հետո ջրհեղեղն սկսվում է: Այդ յոթն որում Նոյը վորդիների հետ պետք է այսպիսի աշխատանք կատարեր. շիներ տապան, նավ, վոր կարողանար իր մեջ տեղավորել յոթը-յոթը զույգ մաքուր և մի-մի զույգ անմաքուր կենդանիներ և թռչուն-

ներ ու ուրիշ անասուններ, այլև մթերք պատրաստելու ամբողջ
 ժամանակի համար, ամեն մեկի համար այնպիսի կերակուր,
 ինչպիսի կերակրի վոր սովոր եյին, այլև այդ բոլոր կենդանի-
 ներին հավաքելու ամբողջ յերկրագնդից: Չգիտենք՝ լավ հյուսն ե
 յեղել Նոյը, թե՞ վոչ: Յեթե հավատ ընծայենք տապանի այն չա-
 փին, վոր աստվածաշնչումն ե ներկայացրված, պետք ե ասենք,
 վոր այժմ ծովային նավեր են շինուած դրանից միքիչ մեծ. այդ
 տապանն ամբողջապես իր չափով համենայն դեպս միքիչ փոքր ե
 Պետրոգրադի Չմրային պալատից. Նոյն բազիո չուներ, հեռագիր
 նույնպես, բայց հարկավոր կլինեն հայտարարել և՛ բեեռային
 արջերին, և՛ բեեռային բուին, և՛ ճերմակ կաքավին, և՛ բեեռային
 մյուս գազաններին, և՛ արևադարձայիններին, վորպեսզի նրանք
 ներկայանային Նոյի տապանում ճանապարհորդություն անելու,
 վորովհետև նոյան տապանը միայն պլացքարտերով եյին թողնում
 մտնել, թի չե այդ շուրուղի մեջ առանց պլացքարտի եմքան
 կհավաքվեյին վոր, վոչ թե մի-մի զույգ իհարկե, ու վոչ ել 7-7
 զույգ: Յեվ ահա յերևակայեցեք. 7 որում սողալով, թռչելով, վա-
 ղելով, ցատկելով յեկան գազաններն ու թռչունները, սողուննե-
 րըն ու միջատները, ամեն կողմից, յերկրագնդի բոլոր ծայրերից,
 վորովհետև աստվածաշունչն ասում ե համաբարեհայե ջրհեղեղ
 եր, և յեթե մի վորևե զույգ չընկնեն նոյան տապանը, պիտի
 վոչնչանար, վորովհետև աստվածաշունչը պնդում ե, վոր բոլոր
 մնացածները կոտորվեցին: Թե վոնց տեղավորվեցին բոլորն
 այդ նոյան տապանում, դա դժվար ե ասել, յերևի ճշտվում-բղա-
 վում եյին մտնելիս ու ելի մտնում եյին, վորովհետև դրանցից
 վոմանք այնպիս ահագին բաներ եյին, վոր վոչ մի նոյան դռնով
 մտնել չեյին կարող: Հետո, այդ կենդանիների համար հարկա-
 վոր եր համարյա հինգ ամսվա կերակրի պատրաստություն տես-
 նել: Չենք իմանում թե ով ե յեղել պարժողկոմը նոյան տապա-
 նում և ամենմի գազանի ի՞նչ նորմայով ե յեղել տալիս: Բայց
 յեթե նույնիսկ նրանց տային յերբորդ կատեգորիայով «բ» տոմ-
 սով, ելի հարկավոր կլինեն այդ կենդանիների համար պատրաս-
 տել մթերքի այնպիսի հսկայական քանակություն, վոր վոչ մի
 նոյան տապան չեր կարող տեղավորել, յեթե նույնիսկ յերկու-
 յերեք առագաստանավ ել կողքից կապած լինել: Ախր կենդանի-
 ների և թռչունների ու սողունների մի քանի հազար տեսակը
 կա: Աստվածաշունչը պատմում ե, թե հարկավոր եր վերցնել
 այնպիսի կերակուր, վորով գազանները կերակրվում են, նշանա-
 կում ե գայլերի համար հարկավոր եր պատրաստել վոչխարներ
 կամ կովեր, առյուծների համար ել կենդանիներ, յեղջերուներ
 կամ դրանց նման մի բան, նույնպես ել վագրերի համար, ար-
 ջերի համար, ընձառյուծների համար և այլն և այլն: Վորո՞՞ծողների
 համար՝ խոտի ահագին պահեստ: Հարկավոր եր բռնել մի զույգ
 առյուծ, և՛ վագրեր, և՛ ռնգեղջյուրներ, և՛ ձիադետիներ, և՛ վա-
 րազներ, և՛ միջատներ, և՛ բոլոր թռչուններից հարկավոր եր բըռ-

նել գոնե մի-մի գույգ: Յեւ յեթի մեզ յերբեմն չարչարում ե մլաքը կամ մի ուրիշ միջատ, մենք պետք ե իմանանք, վոր դրանց հրեյական աստվածն ե փրկել ջրհեղեղից, գոնե մի-մի գույգ «դամազլըղ»-ի (սերունդ արտադրելու) համար:

Կարելի յե յերևակայել, թե ինչպիսի զվարճալի ճանապարհորդություն ե յեղել դա: Ինչպիսի աներևակայելի աղմուկ ու հոտ կլինեն ընկած այնտեղ: Մի հավատացյալ մի անգամ ինձ բացատրում եր վիճաբանության ժամանակ. հո չի կարելի մըտածել, վոր այնտեղ բոլոր գազանները տեղավորվել եյին հարմարություններով հանդերձ: Ը, ասինք թե ուղտը կանգնած ե յեղել, — բացատրում եր նա ինձ, — իսկ նրա վոտների արանքում կանգնել ին ավելի փոքր գազանները: Կարելի ե յերևակայել մի ուղտ, վոր ամբողջ հինգ ամիս կծկված կանգնած ե մի տեղ և չի սատկում: Այստեղ արդեն չի կարելի յուր գնալ առանց տերտերի փաստաբանության, թե աստծու համար ամեն բան կարելի յե: Ապա, — եղ ինչպես եյին գիշատիչները սազվում խոտակերների հետ: Դրա մասին աստվածաշունչը մեզ վոչինչ չի պատմում, դրա մասին չի յել կարելի բան ասել ախր: Շինգ ամսից հետո այդ նավը կանգ ե առնում Արարատյան լեռան վրա: Ըստ յերևութին ամեն բան բավական լավ պետք ե վերջացած լինի, չե: Չե վոր տապանի մեջ գտնվածները բոլորն ել վողջ - առողջ հասան Արարատ կայարանը, իսկ մնացած կենդանի եյակները կոտորվեցին: Աստված բոլորին հրամայեց դուրս գալ տապանից, և նրանք բոլորը գնացին ու ցրվեցին յերկրի վրա: Բայց տես վոր պատմության վերջում բավական տարրինակ բան ե պատահում:

«Յեւ Նոյը զոհարան շինեց տիրոջ համար, և վերցրեց ամեն մաքուր անասունից, ամեն մաքուր թռչնից ու բերավ վողջ-վողջ այրելու զոհարանում, և տերը հոտոտեց դուրեկան բույրը, և տերն ասաց իր սրտում. «այլևս յերկիրը չեմ անիծելու մարդու պատճառով, վորովհետև մարդկային սրտի մտածությունները չարիք են նրա պատանեկությունից, և այլևս չեմ հարվածելու բոլոր կյանք ունեցողներին, ինչպես արել եմ: Այսուհետև յերկրի բոլոր որերում խոտն ու հունձը, ցուրտն ու տոթը, որն ու գիշերը չպիտի դադարեն»: Նկատեցեք, վոր այս բոլորն ասված ե այն պատմության վերջում, ուր խոսվում ե այն մասին, թե ամեն մարմնից վերցրված ե յեղել մի-մի գույգ. բայց յեթե Նոյն ամեն անասունից զոհ ե բերել, ապա ել ինչ ե մնացել: Ապա ել վճռեղից են բազմացել այդ մաքուր կենդանիները: Դուք միայն յերևակայեցեք այդ աստծու պատկերը, վորը ջրահեղձ ե արել ամեն ինչ, վորը վոչնչացրել ե ամբողջ յերկրի վրա մանուկներին (նրանք ինչ մեղք եյին գործել), իսկ հետո նստում ու հոտոտում ե խորոված վոչխարներին, մաքիներին, յեզներին ու մյուս կենդանիներին, վորոնց խորովում ե նրա համար Նոյը վորդիների հետ: Ինչո՞վ ե տարբերվում

ել ասորական պատմությունից աստվածների մասին, վորոնք ժողովվել են ջրհեղեղից հետո և հոտոտում են անուշ բուրմունքը, վորոնք ճանճերի նման հավաքվել են զոհ մատուցողների զըլխին»։ Հրեյական պատմվածքում աստված ծիածան է կապում, իսկ ասորականում աստվածների դիցունին է ծիածան կապում։ Բայց ինչ վոր հարկավոր եր նկատել, այդ այն է, վոր հրեյացիք փոխել են ասորական պատմվածքը ջրհեղեղի մասին, վոր մի՞ ճեղ է ճեղի ունեցել։ Ասորական պատմվածքում բոլորովին չի ասվում, թե ջրհեղեղը յեղել է համաշխարհային։

Նույնիսկ ընհակառակն։ Նրա մեջ խոսվում է վոչ թե ջրհեղեղի մասին, այլ հեղեղումի, այն ել վոչ թե համաշխարհային, այլ տեղական։ Յեւ այդ հեղեղը՝ ասորական պատմվածքի ասելով՝ տեղ է վոչ թե ամբողջ մի տարի, այլ միմիայն յոթնոր. և ջուրը նվազել է վոչ թե մի ամիս, այլ միմիայն մի որ։ Բացի դրանից, ասորական պատմվածքում ուղղակի ասված է, վոր ջուրը չի ծածկել լեռների բոլոր գագաթները. այնտեղ ասված է, վոր Ուտնապիստիմի նավը կանգ է առել Նիզիր լեռան մոտ հենց հեղեղի ամենախիստ ժամանակ։

Նիզիր լեռները հենց հիմա յեղ կան, և նրանց բարձրությունն ընդամենը հարյուր հիսուն սաժեն է միայն ամենաշատը։

Նշանակում է՝ ջրհեղեղը մինչև անգամ ջրհեղեղ ել չի յեղել, այլ միջագետքային հեղեղում (ջրերը գետերի ավերից դուրս գալ), վորը շատ սովորական է։

Հրեյաները սաստիկ չափազանցել են հեղեղումի ասորական պատմությունը։ Նրանից նրանք համաշխարհային ջրհեղեղի պատմություն են շինել։ Այդպիսով ստացվել է պատմություն մի հրաշքի մասին, թեև վոչ մի հրաշք չի ել յեղել իսկապես։

Իհարկե, տեղական հեղեղումներ յեղել են, այժմ ել են լինում, և ջրհեղեղի պատմություն ունեն համարյա բոլոր այն ժողովուրդները, վորոնք ջրային տարածությունների մոտերքն են ապրում։ Բայց ասորական պատմվածաշնչի ու տեքստերների փորացավը դա չի. նրանք աշխատում են աստվածաշնչի միջոցով բացատրել գիտական իրողությունները։ Այն բոլորն, ինչ վոր ձեռք է բերվել յիրկրագիտությամբ, յերկրաբանությամբ և ուրիշ գիտություններով, հակառակ է աստվածաշնչին։ Յեւ ահա այն տեքստերները, վոր իրանց նմանների մեջ միքիչ ավելի ուսումնական են, աշխատում են ապացուցել, վոր գիտությունն ու կրոնն իրար չեն հակասում։ Դրա համար ինչ են անում նրանք։ Նրանք ստիպված են լինում դրա համար իրողությունները հարմարեցնել, բառի բուն նշանակությամբ մազերից քաշել, խեղաթյուրել։ Բայց յերբ հարցն ուսումնասիրելուն մերձենում ես պատմական չափով, յերբ այնպիսի իրողություններ ես մեջ բերում, ինչպես մեր բերած ասորական պատմվածքն է ջրհեղեղի մասին, այն ժամանակ կույրն ել է տեսնում այստեղ, վոր վոչ մի սրբազան պատմություն չկա աստվածաշնչում, այլ

կա միայն պատմվածքների մի ժողովածու, վոր հնարվել են հրեյական ժողովրդի կամ այն ժողովուրդների կողմից, վորոնց հետ հրեյաներն իրանց պայքարի ժամանակ շփումն են ունեցել: Իսկ այդպիսի պատմվածքներ, այսինքն ջրհեղեղի մասին հիշողություններ, ունեն համարյա բոլոր ժողովուրդները: Միայն թե վոչ բոլորի խելքն ե կտրել, վոր հեղեղը վերագրեն աստծու բարկությանը, աստծո՛ւ, վոր ամենինչ հենց ինքն ե ստեղծել, իսկ հետո զղջում ե վոր ստեղծել ե, և կատաղության հորձանքների մեջ խեղդում ե ամենմի կենդանի:

ՎԵՐՋԱԲԱՆ

Մարդիկ հազարավոր տարիներ վոչ միայն բավականացել են այդ պատմվածքներով իբրև աշխարհաշինության բացատրություններով, այլ և հավատացել են, վոր այդ պատմվածքների մեջ ե մարմնանում աստվածային բարձրագույն իմաստությունը: Բայց այդպիսի մանկական հավատն այժմ այլևս չի բավարարիլ վոչմի խորհող բանվորի, վոչմի գյուղացու, վորն ուզում ե ճշմարտությունը մինչև վերջն իմանալ: Յեթե աստվածաշնչից գլուխ հանելու համար իմ ոգնության առաջին փորձը թեկուզ միքիչն պաստի այդ ճշմարտությունն իմանալուն, յես իմ անելիքը կատարված կհամարեմ: Հետագայում յես կանգ կառնեմ աստվածաշնչի այն բոլոր քիչ թե շատ նշանավոր տեղերի վրա, վորոնք առնչություն ունեն գիտական աշխարհասկացողության կամ այնպիսի յերևույթների հետ, վորոնք այս կամ այն կերպ բացատրում են այս կամ այն հասարակական հաստատությունների—ստրկության, մոգության, թագավորական իշխանության և այլ բաների գոյությունը:

The first of these is the fact that the United States is a young nation, and that its history is a history of growth and expansion. The second is the fact that the United States is a nation of immigrants, and that its history is a history of the struggle for assimilation and the creation of a new American identity. The third is the fact that the United States is a nation of diverse peoples, and that its history is a history of the struggle for equality and the recognition of the rights of all citizens.

CHAPTER I

THE FOUNDING OF THE NATION

The history of the United States begins with the arrival of the first Europeans in the New World. The first European to set foot on the continent was Christopher Columbus in 1492. He was seeking a new route to the East Indies, and he found the Americas instead. The discovery of the New World opened up a new era of exploration and discovery. The United States was founded by a group of men who believed in the principles of liberty and democracy. They fought a war of independence from Great Britain, and they created a new nation. The United States has since grown into a great power, and its history is a story of achievement and progress.

CHAPTER II

ՀԱՎԵԼՎԱԾ

Ամերիկական ունիսարիանական
պատար ի. Տ. Սենդերլենդի «Աստվա-
ծառուհիք, Երա ծագումը, տարբերու-
թյունը յեվ առանձնահատկություն-
ները» անգլերեն գրքի բարգմանու-
թյունից: «Պոստ-գոթիկ»-ի հրատարա-
կություն, Մոսկվա, 1908 թ., 228—
233 էջ:

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ*)

Ինչպես Հին, այնպես էլ՝ Նոր կտակարանում հանդիպում
են բազմաթիվ հակասություններ: Նրանք իրանցից ներկայացը-
նում են այնքան անհերքելի ապացույցներ աստվածաշնչի ան-
սխալականության դեմ, վոր յես թույլ կտամ ինձ բերել այստեղ
այդպիսի հակասությունների մի շարք, թեև դա կլինի ելի նը-
րանց ընդհանուր թվի շատ քիչ մասը միայն:

Մենք մի ուրիշ գլխում արդեն ընթերցողի ուշադրությունը
դարձրել ենք II Թագավորությանց XXIV և I Մնացորդաց XXI,
1-ի հակասության վրա: Այդ բնագրերից մեկի մեջ ասված է,
թե ժողովրդագրությունը կատարվել է Դավթի ձեռքով Տիրոջ
հրամանով, մյուսում—թե դա կատարվել է սատանայի հրամա-
նով: Այդ յերկու բնագրերը կարող եյին անսխալական համար-
վել միայն այն դեպքում, յեթե Աստված և սատանան նույն
անձը լինեյին:

Ահա այդպիսի հակասական բնագրերի մի ամբողջ շարք՝
լավ համեմատելու համար իրար դեմ դրված:—

*) Մենք այստեղ տալագրում ենք քաղվածներ վոչ թե մի
անաստվածի գրքից, այլ Բրիտոնյա Բաիանայի, ամերիկական
ունիտարիանական պատերի, Բոստոն քաղաքի (Հյուսիսային
Ամերիկա) քարոզչական հոգևոր սեմինարիայի դասաւորվի գրքից:
Այդ քահանան հասել է այն յեզրակացության, վոր պետք է
հրաժարվել աստվածաշնչի խոշոր մասից՝ խոստովանելով, վոր
նրա մեծ մասը բոլորովին չի համապատասխանում քրիստոնեյա-
կան վարդապետությանը: Նա բաց է անում այդ հակասություն-
ներն ու ասում, վոր աստվածաշնչում 10 հազարից ավելի տեղ
հնարավորություն են տալիս տարբեր կերպով բացատրելու նը-
րանց: Նա ինքը, ինչպես և ուրիշ շատ քահանաներ, տեսնում է,
թե վորքան անհիմն է աստվածաշնչի ուսմունքը, բայց նա վըճ-
ռականություն չունի հրաժարվելու այդ վարդապետությունից:
Մենք ոգտակար ենք համարում տալագրել այստեղ նրա՝ աստ-
վածաշնչի հակասությունների մասին գրքից եյական քաղվածներ:

«Յեւ յանհանգստացաւ
Դավթի սիրտը նրանից հե-
տո, յերբ համարեց ժողո-
վըրդին, և Դավիթն ասաց
Տիրոջը. ծանր մեղանշել եմ
յես նրանով, ինչ վոր ա-
րել եմ» (II Թագ., XXIV,
10):

«Դավիթը Տիրոջ աչքին
հաճելի բաներ եր անում և
չեր դուրս դալիս Տիրոջ
պատվիրաններից իր կյան-
քի բոլոր որերում, բացի
Ղևտացի Ուրիային արա-
ծից» (III Թագավոր., XV,
5):

Մի կողմից մենք տեսնում ենք, վոր Դավիթը մեղանշել ե՛
մարդահամար կատարելով Իսրայելում, միուս կողմից մեղ ասում
են, թե Դավիթը վոչ մի անգամ մեղք չեր գործել, բացի Ղևտա-
ցի Ուրիայի կնոջը խլելուց:

«Յեւ յեղավ վոր այդ
դեպքերից հետո Աստված
փորձեց (մոլորեցրեց) Աբ-
րահամին» (Ծննդոց, XXII,
1):

«Դու ինձ տարար քո յե-
տևից, Տէր, և յես տար-
ված եմ» (Յերեմիա, XX, 7):

Փորձության մեջ վոչվոք
չասի՝ Աստված ինձ փոր-
ձում ե, վորովհետև Աստ-
ված չարով չի փորձվում,
և ինքն ել վոչվոքի չի
փորձում» (Հակոբ, I, 13):

Մի կողմից մեղ պատմում են, թե Աստված փորձում ե սը-
րան-նրան, մյուս կողմից—թե նա վոչվոքի չի փորձել: Յերեմի-
այում մենք տեսնում ենք, վոր նա վոչ միայն փորձում ե, այլև
մինչև անգամ խաբում ե մարդկանց: Համեմատեցեք հետևյալ
քնազրերն ել.

«... Յերկիրը հավիտյան
կա» (Ժողովող, I, 4):

«Հաստատեց յերկիրն իր
հիմքերում, այնպես վոր նա
չի շարժվիլ հավիտյանս հա-
վիտենից» (Սաղմոս, CIV,
5):

Յերկիրը և նրա վրայի
բոլոր գործերը կայրվեն»
(II Պետրոս, III, 10):

«Նրանք (յերկիրն ու յեր-
կիրնքը) կոչնչանան, իսկ
Դու կմնաս» (Յեբր., I, 11):

Յեւ ելի.

«Յեւ հողմի մեջ Յեղիան
յերկիրնք թռավ» (IV Թագ.,
II, 11):

«Վոչ վոք յերկիրնք չի
ամբարձել, բացի յերկնքից
իջած Մարդու Վորդուց, վոր
կա յերկնքում» (Հովհ., III,
13):

«Ամեն մի Աստծուց ծըն-
ված մեղք չի անում... նա
չի կարող մեղանչել, վորով-
հետև ծնված է Աստծուց»
(I Հովհ., III, 9):

Յեվ ելի.

«Յեվ նոյը վերցրեց ա-
մենայն մաքուր անասու-
նից և ամենայն մաքուր
թռչնից և բերավ վողջա-
կիզելու զոհարանի վրա:
Յեվ հոտոտեց Տերը դու-
րեկան անուշահոտությու-
նը. և ասաց Տերն իր սըր-
տում.— ել չեմ անիծելու
յերկիրը մարդու պատճա-
ռով» (Ծննդոց, VIII, 20—
21):

«Յեվ վողջակեզ բերեք՝
Տիրոջն անուշ բուրելու հա-
մար» (Թիվք, XXVIII, 27):

«Յեվ բերեք վողջակեզ,
կրակի զոհ, Տիրոջն անուշ
բույր— տասներեք հորթ,
յերկու զվարակ, տասնու-
չորս միամյա գառ» (Թիվք,
XXIX, 13):

«Զկա մարդ, վոր չմե-
ղանչի» (III Թագ., VIII,
46):

«Վոչ մի առաքինի մարդ
չկա յերկրի վրա, վոր բա-
րի անի և չմեղանչի» (Ժո-
ղովոզ, VII, 20):

«Դու զոհ չես ուզում, թե
չե կբերեյի. չես ուզում
վողջակեզ» (Սաղմոս, LI, 18):

«Ինձ հաճելի չե յեզնեբի,
և գառների, և այծերի ա-
րյունը» (Յեսայի, I, 2):

«Ինչո՞վ ներկայանամ Տի-
րոջ առջև... Կարելի՞ յե մի-
թե հաճոյանալ Տիրոջը թե-
կուզ հազարավոր խոյով
կամ յուղի անթիվ հեղեղնե-
րով... Ի՞նչ է ուզում Տերը
քեզանից. միայն գործել ար-
դարությամբ, սիրել վողոր-
մածության գործեր և հեզ-
իմաստությամբ գնալ քո
Աստծու առաջ» (Միքիե,
VI, 6, 8):

Համեմատեցեք նույնպես հետևյալ բնագրերը.

«Զկա խավար և չկա
մութ, ուր թագնվեր չարա-
գործը» (Հոբ, XXXIV, 22):

«Յեվ վերցրեց Դավիթը
նրանից հազար կառք և
յոթն հազար հեծյալ» (I Մը-
նացորդաց, XVIII, 4):

«Յեվ թագնվեց Ադամն
ու իր կինը Տեր Աստծու
աչքերից այգու ծառերի ա-
րանքում» (Ծննդոց, III, 8):

«Յեվ հափշտակեց Դա-
վիթը նրանից հազար յոթն-
հարյուր հեծյալ և քսան
հազար հետևակ» (II Թագ.,
VIII, 4):

«Յեւ Մեղքողի—Սաւու-
ղի աղջկա հինգ վորդինե-
րը» (Ութագավ., XXI, 8):

«Իսկ ինձ հետ յեղողնե-
րը լույս տեսան և զարհու-
րեցին, բայց ինձ հետ խո-
սող ձայնը չլսեցին» (Գործք
Առաք., XXII, 9):

«Աստծուն յերբեք վոչ-
վոք չի տեսել» (I Հովհ.,
IV, 12):

«Յեւ գղջաց Աստված
այն պատուհասի համար,
վոր քիչ եր մնում ուղարկի
նրանց վրա, և չուղարկեց»
(Հովնան, III, 10):

«Յես, Տերս, ասացի և ի
կատար կածեմ այս, չեմ
փոխիլ» (Յեզեկ., XXIV, 14):

«Յեւ Մեղքողը—Սաւու-
ղի աղջիկը—զավակ չուներ
մինչև իր մահը» (Ութագ.,
VI, 23):

«Իսկ նրա (Պողոսի) հետ
գնացող մարդիկ կանգնել
սառել եյին՝ ձայն լսելով,
բայց վոչվոքի չտեսնելով»
(Գործք Առաք., IX, 7):

«Յես Աստծուն տեսա յե-
րես առ յերես» (Ծննդոց,
XXXII, 31):

«Յես, մշտնջենականս,
չեմ փոխվում» (Մաղաք.,
III, 6):

«Վորը վոչմի փոփոխու-
թյուն չի անում և փոփո-
խության ստվերն անգամ
չունի» (Հակ., I, 17):

Աստվածաշնչում տասնուչորսից վոչ պակաս տեղ կա, վոր-
տեղ խոսվում է Աստծու զղջալու մասին:

«Հակոբին Յես սիրեցի,
իսկ Յեսավին ատեցի» (Հը-
ռոմ., IX, 13):

«Կփողահարի, և մեռել-
ները հարություն կառնեն ա-
նապական» (I Կորնթ., XV, 52):

«Վորովհետև Աստված յե-
րեսպաշտություն չունի»
(Հռոմ., II, 11):

«Գետնի տակն անցածը
դուրս չի գալիս» (Հոբ.,
VII, 9):



Տասը պատվիրանների զանազանակերպությունները: Աստ-
վածաշունչն ամենմի ուշադրությամբ ուսումնասիրող գիտե, վոր
նրա մեջ տասը պատվիրանները բերված են վոչ միայն յերեք
տարբեր տեղ, այլև յերկու տարբեր ձևով և այնքան տարբեր,
վոր վոչմի հնարավորություն չկա նույնացնելու նրանց: Լավ
համեմատելու համար յես կրեբեմ այդ յերկու տարբեր ձևերն
իրար հետ:

1) Իմ առաջ ուրիշ աստվածներ չունենաս:

1) Ուրիշ աստծու դու չպետք ե յերկրպագես. վորովհետև

Աստված, — Նախանձոտ ե Նրա անունը. Աստված, — Նախանձոտն ե
Նա:

- 2) Քեզ համար կուռք չշինես և վոչ մի պատկեր:
 - 2) Քեզ համար ձուլածո աստվածներ չշինես:
 - 3) Քո Տեր Աստծու անունը դուր մի՛ արտասանիր:
 - 3) Հանգստյան որը սուրբ պահիր:
 - 4) Հիշիր շաբաթ որը, վոր սրբես այն: Վեց որ աշխատիր
և արա քո բոլոր գործերը: Իսկ յոթներորդ որը, շաբաթ, քո Տեր
Աստծուն. վոչ մի գործ չանես:
 - 4) Վեց որ գործիր, իսկ յոթներորդը հանգստացի՛ր. սերմա-
նելու և հնձի ժամանակ ել հանգստացիր:
 - 5) Պատվիր հորդ և քո մորդ:
 - 5) Յեւ տոնը, յոթնյակը պահիր, ցորնի հունձն սկսելու տոնը
և պտուղները ժողովելու տոնը տարվա վերջին:
 - 6) Մի սպանիր:
 - 6) Տարվա մեջ յերեք անգամ քո ամբողջ արական սեռը
պետք ե ներկայանա Տիրոջը, Իսրայելի Տեր Աստծուն:
 - 7) Մի շնար:
 - 7) Թթխմորի վրա քո զոհի արյունը մի՛ ածիր:
 - 8) Մի գողանար:
 - 8) Յեւ Զատկի տոնի զոհը չպետք ե մնա մինչև առավոտ:
 - 9) Սուտ վկայություն մի տար քո մերձավորի մասին:
 - 9) Քո հողի ամենաառաջին պտուղները բեր քո Տեր Աստ-
ծու տունը:
 - 10) Քո մերձավորի տունը մի ցանկանար:
 - 10) Ուլին մոր կաթի մեջ մի՛ յեփիր:
- Այս յերկու ձևերից մեզ մոտ գործածության ե մտել միայն
առաջինը, այսինքն Յելից գրքի XX գլ. և Յերկրորդ Որինացի V
գլուխը, չնայած վոր Յելիցի XXXIV գլխում պարզ ասված ե, վոր
այդ ձևը հենց այն ե, վոր Աստված տվել ե Մովսեսին և Մով-
վեսն Աստծու պատվիրանով գրի յե առել քարե տախտակների
վրա «վորպես ուխտի խոսքեր կամ տասը պատվիրաններ»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հառաջաբան	3
2. Խճ, բան և աստվածաբունքը	9
3. Աստվածաբունքը հավատացյալների յեվ վոյ- հավատացյալ- ների համար.	
Առաջին գլուխ: Աստված աշխարհի ստեղծագործու- թյունից առաջ	11
Յերկրորդ գլուխ: Թող լույս լինի	14
Յերկրորդ գլուխ: Յերկրային հաստատությունը և յերկ- նային հաստատությունը	19
Չորրորդ գլուխ: Կենդանական և բուսական աշխարհի ստեղծվելը	24
Հինգերորդ գլուխ: Մարդու ծագումը	29
Վեցերորդ գլուխ: Աշխարհի ստեղծագործությունը զա- նազան ժողովուրդների հավատալիք- ների համաձայն	39
Յոթներորդ գլուխ: Առաջին սլատվիրանադանցությունը	50
Ութերորդ գլուխ: Նոյան ջրհեղեղը	61
4. Հավելված: Պա'ոսքր Է. Տ. Սենգերլենգ: Հակասություն- ներն աստվածաշնչում	77



ՍՏՈՒԳՎ ԱԾ Է 1971 Բ

ԱՅԻԹԱՌԻՆՆ

ԱՅԻԹԱՌԻՆՆ

ՅԵՎ ԿՈՉ-

ԱՅԻԹԱՌԻՆՆ

ՀԱՐԱՐ.

գԱԱ Հիմնարար գիտ. գրադ.



FL0074234

[q_n .]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0074235

A $\frac{iii}{5230}$

4u
F
P